

323.1(9).542


U-82

800

248-00

9(47.925)

U-83



9(47.925)
Ա-83

ԱՐԱՄԱՅԻՍ

9(47.925)
Ա-83

19 AUG 2011
24 JAN 2006
Հոկտեմբեր 24
Եկեղ. ծխակ. (տեղ. քաղ.)

ԶԱՐՀՈՒՐԵԼԻ ՈՋԻՐԸ

ՄՈՒՇ—ՍԵՍՈՒՆ

~~2.68~~
~~240~~

1001
1001

ԲԵԿԱՆ ԵՐ ԲՄ ՅՈՒՇԵՐԻՑ. — ՎԸՆ. — ՆԻԿՈԼԸ. — ԿԱՐՈՆ ՈՒ ՄԱՐՈՆ

А Р А М А И С Ъ

Турецкія звѣрства въ

Мушѣ и Сасунѣ

~~1001~~

Բ ա գ ու
ԷՎԵՐ.-տպ. Ն. Երեանցեանի
1916

Հ.Ս.Խ.Զ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Ր.Ա. Публичная Библиотека
7/11-1922
ИМЕНА, ИМЕННИКОВ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

02. 2013

0005 KAL 45

04800000

00-000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

0001. 000



9

2462-91

240-90

Մեր աչքի առաջ մի աներեակայելի, մի զարհուրելի ոճիր կատարուեց: Մի ազգութեան խոշորագոյն հատուած, որ հազարաւոր տարիների ընթացքում արհաւիրքների միջից իր գոյութիւնն էր պահպանել զարմանալի տոկոսութեամբ մինչև մեր օրերը, և որ—թէև առկայծող—այնուամենայնիւ քաղաքակրթութեան պատրոյգն էր եղել երկու մեծ երկրամասերի շփման սահմաններում,—այժմ գրեթէ բնաջնջման ենթարկուեց արիւնարբու զազանների եաթաղաններով: Գերեզմաններից վեր էին կացել հուլադունները, Ջինգիզ-խաներն ու Լենկ-թէմուրները և թեւատարած, սանձարձակ սաւառնում էին հայկական բարձրավանդակում՝ արիւն ու մահ, սուգ ու շիււան սփռելով շուրջանակի:

Այդ դեռ ոչինչ. Օսմանլին ուրիշ տեսակ վարուել չէր կարող. նա շնչահեղձ կը լինէր առանց արեան բաղնիսների. բայց որ սոսկալի է, այդ այն է, որ նահատակ ժողովրդի մարտիրոսութիւնը սրբազործուեց քաղաքակրթ Մուսթոֆերմանիայի օրհնութեամբ. և որ քառմեկի է, այդ սարսափները կատարուեցին լուսաւոր, յառաջադէմ ազգերի աչքի առաջ: Բաւական էր միայն, որ հայերի սրտախորով ճիշը թնդալուց

Աւստրո-Գերմանիան մատը ցցէր, ու կատաղած զազանը կը թագցնէր եաթաղանը: Բաւական էր միայն, որ չկռուող երկիրները, — Շուէյցարիա, Հոլանդիա, Հիւսիսային ու Հարաւային Ամերիկա, Շուէդ-Նորվեգիա, Ռումինիա, և այլն, և այլն, սրբազան ցասումով նոյն իսկ իրանց պլատօնական նողկանքն արտայայտէին ու մի քիչ եռանդուն միջոցներ ձեռք առնէին, և աղէտն այնպիսի ահարկու չափերի չէր հասնի. սակայն բոլորը տարուած իրանց Շէյքսպիրեան հաշիւներով՝ «Մեզ չի վերաբերում», — եթէ ոչ բարձրաձայն, ապա լռութեամբ ասացին ու ստորագրեցին տաճկական դաւը:

Կծոտող շան դնչին դնչկալ են դնում. տաճիկ կառավարութեան գունչը կապող չեղաւ. նա մնաց սանձարձակ, առանց դնչկալի, բաց թողած խաչուող հայերի ջանին...

Ուր մնացին դարերից ի վեր հնչող մարդասիրական քարոզները. ուր մնաց «բոլոր մարդիկ եղբայրներ են» նշանաբանը. ուր մնացին սօցիալիստական համագումարները, խաղաղասիրական կօնֆէրանսներն իրանց գեղեցիկ որոշումներով, արտայայտած վսեմ ցանկութիւններով... Համամարդկային բարձր գաղափարները մեծ փորձութեան ենթարկուեցին 1914-ի յուլիսից մինչև այսօր, և բոլոր բարձր գաղափարները յօդս ցնդեցին սապնի պղպշակների պէս,

մէջ տեղ թողնելով միայն կոպիտ ոյժը, իբրև վճռող ու յարգարող բոլոր խնդիրների: Հաւատանք քաղաքակրթութեանը. հաւատանք գիտութեանը, բարձր գաղափարներին... Որովհետեւ էլ երբ է բարձր գաղափարների մասին այնքան խօսուել ու գրուել, էլ երբ են ժողովուրդներն այնքան քաղաքակրթուած և գիտութիւնն այնքան ծաղկած եղել, որքան XX-րդ դարում. և սինա հէնց այդ «Հրաշալի դարում» է, որ սրածութեան ենթարկուեց գիտութեանն ու քաղաքակրթութեանն սպասաւորելու բոլոր աղնյայտ զրաւականներն ունեցող մի ժողովուրդ, հայ ժողովուրդը...

Հաւատանք:

Այո, պիտի հաւատանք. գաղափարը չի մեռնում. երբեիցէ կը յաղթանակէ արդարն ու ճշմարիտը. երբեիցէ կը գայ այն օրը, երբ հրամայողը սուրը չի լինի, այլ ազատ ապրելու իրաւունքը. երբեիցէ մարդկութիւնը կը տօնէ յաղթանակն այժմ արհամարհուած վեհ դաւանանքների. իսկ մինչև այն՝ մենք երբէք, ոչ մի ըոպէ չպիտի մոռանանք այն պատուհասները հեղինակին, որ անպատմելի կսկիծներ պատճառեց հայութեանը:



ԶԱՐՅՈՒՐԵՆԻ ՈՋԻՐԸ

Մուշ-Սասուն

I

Հէնց սկզբից ներկայ ուռւ-տաճկական պատե-
րազմը հեղինակաւորութիւն չունէր տաճիկ ժո-
ղովրդի մէջ, և արհեստական բոլոր միջոցներն
անօգուտ անցան ոգևորութիւն առաջ բերելու
համար.— աղքատ ժողովուրդ, բռնակալ կռա-
ւարութիւն, Բալկանեան պատերազմի դժբախ-
տութիւնը դեռ թարմ ժողովրդի յիշողութեան
մէջ,— ոգևորութիւնը որտեղից պիտի իջնէր: Իսկ
երբ տաճկական բանակի «յաղթական» արշա-
ւանքը Սարիղամիշի ու Արդահանի խայտառա-
կութեամբ պսակուեց, այն ժամանակ զօրքի մէջ
խանդավառութիւն չկար ու չկար, լքումն էլ
միւս կողմից ծայր տուաւ, և անձ զինուորներն
սկզբում մէկ-մէկ, յետոյ երկու-երկու, ապա
ամբողջ խմբերով՝ սկսեցին փախչել գործող բա-
նակներից ու պահեստից և թազնուել լեռներում
ու գիւղերում: Փախչում էին թէ հայերը, թէ
քրդերը, թէ թուրքերը. բայց տոկոսային յա-
րաբերութեամբ՝ հինգ փախչող թուրքին՝ մի

հայ հազիւ էր ընկնում. իսկ այն տեղերը, որտեղ զօրքի մէջ հայերը շատ չնչին տոկոս էին կազմում ու հեռու էին հայ ազգաբնակչութիւնից, այնտեղ փախչողները բացառապէս թուրքերն էին լինում և մեծ չափով:

Այդ երևոյթը մի այնպիսի սոսկալի հետևանք կարող էր առաջացնել տաճկական բանակի համար, որ կառավարութիւնը վճռում է արմատական միջոցներ ձեռք առնել՝ չարիքը խեղդելու:

Արմատական միջոցներից մէկն այն է լինում, որ հայ զինուորներին սկսում է զինաթափ անել՝ նրանց դաւաճան յայտարարելով, ու մշակի տեղ աշխատեցնել. երկրորդն էլ այն, որ յայտարարում է, թէ՛ փախստական զինուորները եթէ չվերադառնան, զինուորական դատի պիտի ենթարկուին:

Մշոյ դաշտի գիւղերից ևս սկսում են պահանջել փախածներին և յայտնում բոլորին, թէ՛ որ փախստական չվերադառնայ և ո՛վ յանցաւորին թաղցնի, նրանց տները պիտի վառուին ու կայքը գրաւուին յարքունիս: Այդ սպառնալիքը թէև ուղղուած էր բոլորին, առանց ազգի ու դաւանութեան խտրութեան, սակայն դա միայն մի զգուելի կատակերգութիւն էր՝ հետզհետէ դարգացող եղեւնագործութեան ծրագիրը զիմակաւորելու համար: Կառավարութեան ոճրագործ պաշտօնեաներն ամենից առաջ գործի են կանգ-

նում Մուշ քաղաքում, որտեղ վառում են երկու տուն, յետոյ անցնում են գիւղերը, փախած զինուորների ցուցակը ձեռքներին ու միաժամանակ թէ յանցաւորներին որոնում և թէ օգտուելով հանգամանքից՝ խուզարկութիւններ կատարում, գէնքեր ու այլ ուղղամթերքներ խելու հայ ժողովրդի ձեռքից, որպէսզի ապագայում ամենալայն չափերով կարողանան իրագործել Պօլսից հրահանգուած այն ոճիրը, որից երկինքը պիտի դողար:

Մարտի սկզբներում՝ Կօմիսսէր Ռաթիմ-բէյն ու միլիադիմ Զէվդէթ-բէյը քաղասուն զաբթիաներով գնում են 300 տուն ունեցող Յրօնք հայ գիւղը, հանում ցուցակն ու պահանջում բանակից փախած այդ գիւղացի զինուորներին: Յրօնքցիք պատասխանում են, որ գիւղում այդպիսի զինուորներ չկան, և եթէ կան էլ՝ աղա լեռներում կը լինին պատուարուած, որտեղից նրանց իջեցնելու հնարն իրանք չունին:

Այդ միջոցին Յրօնքցի մի մայր իր որդու ամար գաղտնի կերպով հաց տանելիս է լինում գիւղից դուրս. ոստիկաններից մէկը նկատում է, հետամուտ լինում կնոջը և հասնում այն ժամանակ, երբ մայրը հացը փախստական որդուն էր տալիս: Ոստիկանը գոռում է, որ տղան դուրս գայ թագստոցից և անձնատուր լինի. տղան մերժում է. ոստիկանն ուսից ցած է բերում հրա-

ցանն ու գնդակներ տեղում դէպի փախստական զինուորը. սա էլ իր հրացանն է գործի դնում և առաջի գնդակից՝ սպանում հակառակորդի ձին: Ոստիկանը փախչում է և դէպքի մասին իմաց տալիս կոմիսսէր Ռասիմ-բէյին. կոմիսսէրն իսկոյն ոտքի է կանգնեցնում զաբթիաների խումբը և գիւղից հանում 40 ոսկի (360 ռ.) սպանուած ձիու համար և գրաւում մի ուրիշ շատ լաւ ձի: Ապա կատաղաբար ընկնում են գիւղը, վառում 25 տուն, այդ տների բոլոր աղամարդկանց կոտորում, կայքերնին գրաւում յարքունիս ու վերադառնում Մուշ:

Այդպիսով՝ անեղ դաւադրութիւնը, որ նիւթուած էր հայի գոյութեան դէմ և որ հէնց պատերազմի սկզբից էր ծայր առել, սակայն դեռ բացարձակութիւն չէր ստացել, այժմ կամաց-կամաց դիմակազերծ ու ցայտուն էր դառնում:

11

Յրօնքի դէպքն այդ միջոցներում բացառութիւն չէր. — Կարին, Երզնկա, Տիգրանազերտ, Թերջան... ամեն կողմերից գալիս, տաճիկների ու քրդերի կատարած խայտառակութիւնների ձայներն են հասնում: Արմտանի պատահած դէպքը մի սովորական երևոյթ էր այդ ժամանակաշրջանում. իսկ Արմտանում այն էր պատա-

հել, որ թուրք կամաւորներին բաժանում են հայ տներում գիշերելու, հայերը նրանց հիւրընկալում են անտրտուն, սակայն այդ անտրտուն չհիւրընկալութեան հատուցումն այն է լինում, որ կամաւորների գլխաւորը բռնում և բռնաբարում է իրան կերակուր տուող, իրան կշտացնող պատուաւոր տան հարսին...

Բայց դա ընդհանուր դրութեան մի շատ աննշան օղակն է միայն. ամբողջ Տաճկա-Հայաստանում բացարձակ քմահաճոյքն էր թագաւորում և անպատկառ բռնութիւնը. սակայն հայերը բոլէի անհուն լրջութիւնն ի նկատի առնելով, սրտերնին սեղմելով՝ համբերում էին, թէ՛ — անհ, անհ կըզան, կը հասնեն ռուսական բանակները, կը հասնեն իրանց արիւնակից, իրանց ցաւերով տոգորուած եղբայրները, ու վերջ կը տրուին ցաւերին, սպեղանի կը դնեն վերքերին... իսկ նրանք էլ ուշանում էին. և, թէև երբ կոմիսսէր Ռասիմ-բէյը Յրօնք գիւղում իր սխրագործութիւններն էր կատարում, հէնց այդ օրերում էլ ռուս բանակը տաճիկ զօրքերին Ալաշկերտի հովտից դէպի Դահար էր քշում ու Արդուինից դէպի սահմանից դուրս շարժում, այնուամենայնիւ այդ հանգամանքը չէր զսպում հայերի վերաբերմամբ որոշ ծրագիր ունեցող տաճիկ կառավարութեանը և նա խելագարուած պատերազմական հովով՝ իր գործն էր շարունակում:

Թուում է, թէ քաղաքական իմաստութիւնը պիտի թելադրէր Իլդիզի ճիւղին, այդ տագնապալից օրերում աւելի համբերող ու արգարադատ լինել դէպի հարատակ ժողովուրդները. թըւում է, թէ՛ երբ մարտի 14-ին միացեալ նաւատորմը Դարդանէլում Բիլլիդ-Բահր ամրութիւնն էր ուժակոծում, իսկ 15-ին ուսական ուղւմանաւերը Բօսֆորի մուտքի Ռումէլ-Փանարի-Կալասին ու Անատօլի-Փանարի-Կալասին, և երբ նոյն ամսի 21-ին «Մէջիդիէ» յաժանաւր խորտակուեց Օղեսսայի ծովախորշում ուսականականից, ապա այդ դժբախտ հանգամանքները պէտք է հրամայողաբար հարկադրէին Պօլսի արբեցածներին, որ մի քիչ զգաստ լինեն ու մարդավարի վարուեն այն ժողովրդի հետ, որ, յամենայն դէպս՝ չէր մերժել իր որդիները տաճիկ զօրքերի հետ դէպի ուսական սահմաններն ուղարկելու, և իր լղարիկ զրպանի ոսկիները՝ տաճկական սնդուկը զցելու... Սակայն, ընդհակառակը. տաճիկ կառավարութիւնը հէնց այդ վտանգաւոր ընդհանրն է ընտրում՝ իր տասնեակ ու հարիւրաւոր տարիներով փայփայած նպատակն ի կատար ածելու, որին պատրաստի գործիք պիտի հանդիսանային ջհաթով ոգևորուած ու էլէքտրականացած իսլամ ժողովուրդը:

Տեսնելով, որ փախստական զինուորներից համարեա թէ վերագարձող չկայ, չնայելով ձեռք

առած խիստ միջոցներին, կառավարութիւնը այժմ խորամանկութեան է դիմում. յայտարարում է, որ վերագարձող ու տեղին յանձնուող փախստական զինուորները պատերազմի դաշտ չեն ուղարկուի, միայն պատերազմական այլ պարտականութիւններ կրկատարեն բանակների թիկունքում, ապա ուրեմն՝ յանձնուողը կընկրուի:

Միևնոյն ժամանակ էլ հրաման է դուրս գալիս, որ ժողովրդից պէտք է հաւաքուեն ամալիաթաբուրի *) և համալ-թաբուրի **):

Եւ սկսում են...

Ի շարս ուրիշների՝ Մշոյ գաշաի Գոմս գիւղի ուէյսն էլ հրաման է ստանում պատրաստել 50 եզ և 50 մարդ՝ փոխադրութիւն կատարելու համար: Ռէյսը գիւղում գտնուող խելօքների հետ խելք-խելքի են տալիս, թէ՛ ախր 70 տուն ունեցող փոքրիկ գիւղն ինչպէս կարող է 50 մարդ և 50 եզ տալ. սակայն հնարաւորութիւն կան մերժելու... որտեղ փախչէին, ում դիմէին... Վերջապէս, շատ տակ գլուխ տալուց յետոյ, մեծից-փոքրից հաւաքում են 45 հոգի ու 50 եզ, յուսալով, որ պակսող հինգ հոգուն ոսկին կարող է փոխարինել:

*) Ճանապարհ շինող, հողային գործեր կատարող վաշտեր:

**) Շալակով փոխադրութիւններ կատարող վաշտեր:

Շուտով գալիս է Աղջանայ միւղիւրը 7 զար-
թիւններով, քիւրդ Մամէդ-էմինն էլ հետը, պա-
հանջածն ստանալու համար:

Գոմսի ուէյսն էր Կորիւն անունով մէկը, որ
վաղուց էր սովորել իր մարդկային արժանապատ-
ւութիւնը յարգել տալու ձեւը՝ գազանների շրջա-
նում: Ժամանակով առաջ նա միւղիւրի հետ Գոմս
իջած Մամէդ-էմինի հետ հաշիւ էր ունեցել.
քիւրդը սպանել էր Կորիւնի մօրը, իսկ Կորիւնը
պարտքի տակ չէր մնացել, ու սպանել էր նրա
եղբօրն ու հօրը, կամ հօրեղբօրը և այժմ, երբ
ամեն կողմերից մահն էր իր մանգաղը ցոյց
տալիս Հայաստանի ամեն անկիւններում, այդ
երկու ոստիկները դէմ առ դէմ են ելնում:

Միւղիւրը 45 մարդու և 50 եզան պատրաստ
լինելը լսելուց յետոյ՝ համաձայնում է ուէյսի
հետ, որ մնացած հինգի մօտին կարելի է մի
կերպ անել. սակայն այն կողմից վրայ է պրծը-
նում քիւրդ Մամէդ-էմինն ու մտրակով սկսում
հարուածներ տեղալ և հայհոյել, թէ՛—«գեաւուր,
անհաւատ-շուն, ինչո՞ւ ես սուտ ասում, թէ մարդ
չկայ. դու եթէ ուզե՞նաս, հէնց մենակ ձեր գիւ-
ղից հարիւր հոգի կըճարես»: Կորիւնը երեսի ա-
րիւնը սրբելով՝ կուլ է տալիս այդ վիրաւորան-
քը: Վախեցնում էր. չէ՞ որ իր մի անգգոյշ քայ-
լից՝ սարսափելի հետեանքներ կարող էին ծա-
գել: Բայց քիւրդը ձեռք չի քաշում և իր ըն-

կերներով՝ սպանում է եօթը հայ: Այդ ժամա-
նակ գիւղում գտնուող մի քանի երիտասարդներ
ու ուէյսը տեսնելով, որ գայլերը շատ են հեռու
գնում, նրանց սեղմում են մի տան մէջ ու վա-
ռում. կենդանի են թողնում միայն միւղիւրին,
որ գնայ ու արդարութիւնը պատմէ: Սակայն
մինչև արդարութիւնը միւղիւրը կը պատմէր ու
Ֆիրդաւ-կօմանդար Վէյսի-բէյը քննութեան կը
գար, քրդերն ու թիւրքերը Գոմսից ու Հերկեր-
տից սպանում են էլի մի 20—25 հոգի:

Այս դէպքից երեք օր յետոյ՝ Մուշից մի ժա-
մուայ վրայ գտնուող Առաքելոց վանքի դէպքն
է պատահում:—Տեսնելով, որ ինչպէս էլ իրենց
պահեն, որքան էլ գլխին դէմ անեն տաճկական
հարուածներին, միևնոյն է, փրկութիւն չկայ,
զանազան կողմերից ութսունաչափ հայեր գաղտ-
նօրէն հաւաքւում են այդ վանքը, մտածելու
թէ՛ ի՞նչ անեն. —գլխուք թէ կռուողները մի
կերպ, միառժամանակ կարողացան պաշտպա-
նուել. իսկ ո՞ւր տանել, որտե՞ղ թաղցնել բազ-
մահազար կլին ու երեսաներին... ոռոսական բա-
նակը հեռու, իրենք չորս կողմից շրջապատուած
հայի արիւն սիրած միլիոնաւոր գայլերի վոհ-
մակներով, սոյն ու համաճարակ հիւանդութիւն-
ներն անխուսափելի, պաշտպանուելու ընդունակ
տարրը հանած իրենց միջից, մնացածն էլ ցաք

ու ցրիւ, և համախմբուելու գրեթէ բացարձակ անկարելիութիւն... Ինչ անել...

Այդպիսի դառն մտքերով էին զբաղուած Առաքելոց վանքում հաւաքուածները, երբ «նալբանդ» Զէվգէթ-բէյի անուանակից մի այլ Զէվգէթ-բէյ՝ Մուշից զօրքով վրայ է հասնում, վանքը խուզարկելու: Այդ հողի վրայ ընդհարում է առաջ գալիս, որի ժամանակ սպանւում է ինքը, Զէվգէթ-բէյը և զօրքից՝ 7—8 հոգի: Հէնց որ լուրը հասնում է Մուշի միւթէսարիֆին, սա իսկոյն նոր ուժեր է ուղարկում և պահանջում, որ վանքում գտնուողները յանձնեն զէնքերնին, անձնատուր լինին ու թողնեն զիակները վերցնելու: Վանքից պատասխանում են, թէ՛ մենք զիտենք անձնատուր լինել տաճիկ կառավարութեանն ինչ է նշանակում. աւելի լաւ է, քաջեցէք ձեր զօրքերն իրանց տեղերը, մենք կեղնենք վանքից, դուք էլ ձեր զիակները կը տանէք:

Այդպէս էլ լինում է. զօրքերը յետ են քաշուում, վանքում գտնուողները դուրս են գալիս, անցնում Մասուն, իսկ զինուորների և Զէվգէթ-բէյի զիակները բերում են Մուշ, որտեղ Միւթէսարիֆը դամբանական է խօսում, թէ՛—երդուում եմ, որ ձեր գլխի իւրաքանչիւր մագի փոխարէն՝ հազար հայ պիտի կոտորել տամ:

Իսկ հայերը լսում էին այդ և դրա նման շատ ու շատ «խորհրդաւոր» խօսքեր, և ս պատում, թէ

երբ է սկսուելու այն, ինչ որ կառավարութիւնն էր ծրագրել...

III

Իսկ այն, ինչ որ վաղուց արդէն սկսուած էր, հաշուի մէջ չէր մտնում. հինգով, տասով, երեսունով սպանութիւնները, կանանց բռնաբարելը, աղջկերք քաշել-տանելը, տաւար-ոչխար ձեռքներից առնելը՝ հայերն իրենց հոգու մէջ ցանկանում էին մասնաւոր երեւոյթի ձև տալ, շըրթունքնին սեղմած՝ աշխատում էին կսկծի ճիշեր չհանել, որպէսզի անարգ թշնամին առիթ չունենայ անմիջապէս ձեռնամուխ լինելու նիւթած դալին, յուսալով, որ, ո՞վ գիտէ, գուցէ շուտով կըհասնեն ազատարարները, որոնք թէ իրենց կը փրկեն և թէ վրէժ կը լուծեն կրած զրկանքների համար...

Սակայն մինչև նրանք կը գային, «բարեխնամ» տաճիկ կառավարութիւնը սխտէմատիքաբար, քայլ առ քայլ մօտենում էր իր գերագոյն նպատակին՝ հայերի բնաջնջման ծրագրի իրագործման:

Ամալիա-թաբուրի և համալ-թաբուրի անուան տակ՝ ուշք չդարձնելով ոչ հասակին, ոչ առողջական դրութեանը, զիւղերից ու քաղաքներից դուրս են բերում հազարաւոր հայեր և նրանց

գրասանների պէս բեռներով ծանր բեռներով՝ քշում
դէպի էրզրում ու Բիթլիս: Իսկ թէ ինչեք էին
քաշում այդ դժբախտները ճանապարհներին, ինչ-
պիսի տանջանքներ էին կրում, այդ մասին կարող
էին լուռ վկայութիւններ տալ այն դիակները, որ
սփռուած էին ճանապարհների երկու կողմերում,
և այն կմախքացած կենդանի-մեռեալները, որ
կարողացել էին տեղ հասնել...

Եթէ մէկը սայթաքում էր, հրացանի կոթով
էին բարձրացնում տեղից. եթէ միւսը չոքում
էր բեռան տակ ու ճիգեր գործ դնում ոտքի
կանգնելու, բայց ուժասպառ եղած՝ չէր կարո-
ղանում, հարցը սուինն էր վճռում. սպանում
էին ու նրա բեռը բաժանում միւսների վրայ, ո-
րոնք առանց այն էլ բեռան տակ տնքալիս՝
միայն մահուան երկիւղից էին կարողանում ոտ-
ներնին շարժել... Հարիւրներ, հազարներ ընկան
այդ նզովեալ ճանապարհներին, առանց բարձրա-
ձայն լաց լինել անգամ կարողանալու... Եւ եթէ
լաց էլ լինէին, ո՞վ պէտք է լսէր.— ոռոսական
բանակը հեռու, Եւրոպան՝ խուլ, Ամերիկան՝ կոյր,
իսկ իրենք թանձր օդակներով շրջապատուած
տաճիկ զօրքերով ու վայրագ քիւրդերով, որոնց
մէջ գաղանական բնազդները ծայրայեղութեան
էին հասել մահմեդական կրօնաւորներէ՝ ձեռքով
բորբոքող ջհաթով...

Պարզ է, թէ այդ տեսակ պայմանների մէջ
ինչ պէտք է լինէր հայերի դրութիւնը:

Ապրելի 19-ին սկսուեց Դիլմանի նշանաւոր
կռիւր, որ վերջացաւ 20-ին, Խալիլ-բէյի պար-
տութեամբ. նրա ընտիր զօրաբաժինը մեծապէս
տուժեց այդտեղ և Խալիլ-բէյը հարկադրուեց նա-
հանջել, այն էլ արագութեամբ, առանց կանգ
առնելու. Վանի ուղղութեամբ ևս ոռոսական զօր-
քերն առաջ էին շարժւում դէպի Վան, ուր հայ
կտրիճներն օրհասական պայքար էին մղում տա-
ճիկների դէմ, սեպհական ուժերին ապաւինած,
առանց ակնկալելու, թէ դրսից շուտով օգնու-
թիւն կը ստանան: Պատնօսի ճանապարհով նոյն-
պէս ոռոս զօրքերն առաջանում էին, և այդ բո-
լոր կողմերից մահմեդական ազգաբնակչութիւնը,
որ իրենց վտանգուած էին զգում դէպիներսերը
խորացող ոռոսներից ու հայ կամաւորներից, ու-
նեցած-չունեցածնին հաւաքելով՝ քաշուեցին դէ-
պի Մշոյ կողմերը: Իսկ երբ մայիսի 5-ին Վանը
գրաւուեց, և այդ նոյն ամսի վերջերքում յաղ-
թողներն իրենց թեւերը Վանայ լճի երկու կող-
մերից դէպի Մահմեդական ու Բիթլիս մեկնեցին,
այն ժամանակ մահմեդական տարրի գաղթը մեծ
չափերի հասաւ և տասնեակ ու հարիւր հազար-
ներով՝ փախան դէպի աւելի ապահով համա-
րուած տեղեր.— Մուշ, Մշոյ դաշտն ու շրջակայ
լեռները, որտեղի հովիտները կարող էին առատ

կեր մատակարարել բազմահազար անասուններին:

Գլուխը կորցրած, վայրենի կառավարութիւն, ու անտէր երկիր. բարեգործական, մարդասիրական ընկերութիւնների կատարեալ բացակայութիւն. որեւէ աղէտի առաջն առնելու համար ստեղծուած կազմակերպութիւնների մասին՝ ոչ մի գաղափար. բժշկական օգնութիւնը՝ անծանօթ մի բան. այդ հանգամանքներում էլ ո՞վ պիտի մտածէր ուստական ճակատից դէպի խորքերն ապաւինած փախստականների համար... և ծայր են տալիս տարափոխիկ հիւանդութիւնները, տիֆն ու սովը, մեծամեծ աւերածումներ անելով փախածների շարքերում:

Բայց հայի բախտն այն տեսակներից է, որ, այսպէս ասած՝ Աստծու տուած այդ պատուհասն էլ անդրադառնում է հայերի գլխին: Ուստական զօրքերի առաջից փախած քիւրդ ու տաճիկներն ու տեղական մահմեդականութիւնը փոխանակ ուսմաների վրայ զայրանալու, տեսնելով, որ, միևնոյն է, իրենց զայրոյթն ուսմաների դէմ գործնականօրէն ոչնչով արտայայտել չպիտի կարողանան, դարձեալ շուռ են գալիս դէպի սարսափներից կծկուած, դողացող հայերն ու իրենց արիւնոտ ժանիքներն ցոյց տալիս... վրէժ լուծելու, սիրտ հովացնելու միակ օրիեկտը՝ էլի տարաբախտ հայն է մնում...

Խալիլ-բէյը նահանջելով-նահանջելով՝ հասնում

է Բիթլիս. այդ նահանջին միանում է և, Խաչան գիւղի «հերոս», «նալբանդ» Զէվդէթ-բէյը, որ մի ամսու չափ Վանը իր թնդանօթներով ծեծելուց յետոյ թողել էր ու փախել, և այժմ իր ժահրոտ ուղեղում նորանոր սարսափներ էր նիւթում, իր խայտառակուած պատիւը հայկական հեկատոմքներով վերականգնելու:

Մտնում է յունիսը. ապարդիւն են անցնում արտասուտ աչքերնին դէպի Վանայ լճի ափերն ուղղած հայերի յոյսերը, որտեղից փրկութիւնը պէտք է ծագէր. ուստական զօրքը դեռ հեռու էր, և հասաւ ժամանակը, որ շրջապատը միանգամայն փակուեց պողպատով և ոչ մի լուր, ոչ մի տեղեկութիւն էլ չէր ստացւում դրսից: Որտեղ էին ուստական զօրքերը, ինչէր էին կատարւում Մշոյ դաշտից այն կողմերը, ոչ ոք հայերից, թէկուզ խուլ կերպով՝ ոչինչ ասել չէր կարող:

Իսկ կառավարութիւնն այժմ սկսեց կանոնաւոր կերպով գործել: Հայերից հաւաքուած համալ-թաբուրիներին տանում էին իրենց եզներով՝ իբրեւ թէ ապրանք փոխադրելու. բայց ճանապարհին մի որեւէ կամուրջի վրայ կամ փոսի կողքին կոտորում, դիակները գետը նետում, կամ փոսերը լքցնում, իսկ ապրանքները բերում, յանձնում կառավարութեանը, կամ սեպհականացնում: Այդ զագրելի եղեռնագործութիւնները զրնալով-գնալով այնքան են դարգանում, որ հա-

յերի մէջ արդէն իսկ այն հաստատ համոզմունքն է առաջանում, թէ՛ այդ բոլորը ոչ թէ արդիւնք են քրդերի ու զօրքերի կատաղութեան, այլ տաճիկ կառավարութեան հրամանի, և իրենք կանգնած են բացարձակ, խաղառ բնաջնջման վտանգի առաջ. այդ համոզմունքը մանաւանդ հաստատութիւն է ստանում այն ժամանակ, երբ առաջնորդարանի կողմից եղած դիմումներին ու աղերսանքներին՝ կառավարութեան ներկայացուցիչները կամ հայհոյանքներով են պատասխանում, կամ դուրս վռնդում դիմողին:

Սոսկալի դրութիւնը գոնէ մի քիչ պարզելու համար, յունիսի 15-ին թէ 16-ին սուրհանդաներ են ուղարկում դէպի Կոփ և Ախլաթ, որպէսզի գնան, հասնեն ուսւ բանակին և իրանց սև օրերը յայտնեն այնտեղ ու խնդրեն, աղաչեն, որ շուտ անեն, հասնեն: Սակայն Կոփ գնացողը ճանապարհին ընդհարւում է տաճիկ պահակների հետ ու լեռնուղիներով վերադառնում, իսկ միւսը հասնում է Ախլաթ, բայց բանակը յետ քաշուած է գտնում. շարունակում է ճանապարհը՝ վճռելով, որտեղ էլ լինի՝ հասնել ուսւ զօրքին. սակայն չի յաջողւում. կռուի է բռնւում, նրան վիրաւորում են, ապա՝ մորթում... Եւ Մշոյ դաշտի ժողովուրդը մնում է անյայտութեան մէջ գալարուելիս:

Կռուող, պաշտպանուող քարը շատ քիչ էր



մնացել. կառավարութիւնը մեծ փորձեր արեց, եր կարողացել նրանց մէջ տեղից վերջ տալու տորել, գաղթեցնել. իսկ մնացածներն այլ անկարող էին հեռւոր գիւղերից հասնել մի որ և է կենտրոնական վայր՝ պատուով մեռնելու համար: Ասպարիզում մնացել էր մի անպաշտպան ժողովուրդ՝ բաղկացած ծերերից ու կանանցից, շրջապատուած հարիւր հազարաւոր զօրքերով, համիդիէներով, ու առանց բացառութեան՝ զինուած «խաղաղ» մահմեդականներով...

Բայց... յանկարծ պատահեց մի օր, երբ ոտքից գլուխ զինուած տաճիկ ժողովուրդը, նոյն իսկ քրդերից մի փոքր մաս սկսեցին քծնել անպաշտպան, անզէն հայերի առաջ, շոյել, սիրաշահել նրանց: Այդ հրաշքը բացատրւում էր նրանով, որ ձայն էր տարածուել, թէ ուսմները մօտենում են, էսօր-էգուց Բիթլիսը կրվեցնեն, շուտով կը հասնեն Մուշ, և տաճիկները դիմում էին հայերին, նրանց պաշտպանութիւնն ու բարեկամութիւնը խնդրում՝ զօրքերը Մուշ մտնելու դէպքում:

Սակայն Բիթլիսը չվերցրուեց, ուսական զօրքերն անսպասելի կերպով յետ նահանջեցին՝ իրենց հետ գերեզման տանելով և հայերի յուսոյ վերջին բեկորները:

Իսկ երբ Բիթլիսի կոտորածը վերջացնելուց յետոյ՝ յունիսի վերջերքին բոլոր գիւղերը շրք-

2462-91
1001
240-90/1002

Նապատուեցին քրդերով ու զօրքերով, ձիաւոր պահակախմբերն սկսեցին ճանապարհները չափ-
չփել աջ ու ձախ և մտադորձ Զէվդէթ-բէյը իր
գարշելի ոտը դրաւ Մշոյ սահմաններում, դրու-
թիւնը միանգամայն պարզուեց. հասել էր ճրդ-
նաժամի լուծումը:

IV

Այդ միջոցներում Մուշ երեք օտարունիներ
էին ապրում, որոնք քաղաքում որբանոց էին
պահում. նրանցից մէկը գերմանուհի էր, երկու-
սը՝ շուէգունի: Եւ որովհետեւ մօտիկ օրերում լի-
նելիքին օտար աչքերի ներկայութիւնը ձեռնտու
չէր կառավարութեանը, ապա միւթէսարիֆի գի-
ւանատնից նրանց յայտնում են, թէ Պօլսոյ գեր-
մանական դեսպանից կարգադրութիւն կայ՝ թող-
նել Մուշը: Գերմանուհին անմիջապէս հեռանում
է քաղաքից, իսկ միւսները զանազան առարկու-
թիւններով ու պատրուակով մնում են՝ ազաւի-
ներով շուէգական դրօշակին, որ և հաստատում
են իրենց ապրած տան վրայ:

Այստեղ աչքի ընկնող մի ուշադրաւ հանգա-
մանք կայ. անկասկած է գառնում, որ Գեր-
մանիան նոյնպէս մեղսակից էր հայերի գլխին
պայթող սարսափներին, և նրան լաւ յայտնի էր,
թէ այդ օրերին ինչեր պէտք է կատարուէին:

Արածանու հովտում. թէ չէ՝ ինչո՞ւ Պօլսոյ գեր-
մանական դեսպանին հէնց այդ «նշանաւոր»
օրերում հարկաւոր եղաւ յիշել Մշում որբանոց
պահոյններին...

Յունիսի վերջին միւթէսարիֆին իր մօտ է
կանչում Վարդան վարդապետին և քաղաքում
յայտնի քսանաչափ հայեք ու յայտարարում, թէ՝
— կենտրոնական կառավարութիւնից հրաման
կայ, առանց յապաղելու՝ հայերին գաղթեցնել
Ուրֆա (Եդիսիա). սակայն ինքը հայերին բարե-
կամ լինելով՝ ոչ թէ անմիջապէս գործի կը ձեռ-
նարկէ, այլ փոքր ինչ ժամանակ է տալիս, որ
համախմբեն կին ու երեխաներին և պատրաստ
լինեն առաջին իսկ նշանին՝ տեղից շարժուելու:

Վարդան վարդապետն ու միւս հայերը, որ
նրա հետ էին, շանթահար եղած այդ զարհուրելի
հրամանից՝ սկսում են աղաչելու դառնագին ար-
տասուել, որ խզման ժողովրդին, կին ու երե-
խաներին, և եթէ իրանց ճակատին մահն է գը-
րուած՝ թողնեն իրանց հողում մեռնելու:

Սակայն նրանց լացն ու աղաչանքը «հայերի
բարեկամ» զազանի միայն կատաղութիւնն է ա-
ռում և նա արնակալած աչքերով գոռում է.

— Կորեցէք ձայներնիդ և անշեղ կերպով կա-
տարեցէք այն, ինչ որ հրամայում եմ. եթէ
պետութեան շահերը պահանջեն, ձեզ ոչ թէ Ուր-
ֆա, այլ նրանից էլ շատ գէնը կուղարկենք:

Բայց որպէսզի իմ բարեմտութիւնս ի չարը գործ չղնէք ու զանազան պատրուակներով ժամանակ շահել չաշխատիք, ժամանակը որոշում եմ.—մինչև յուլիսի 1-ը այն կէտերում, որ ձեզ կրթայտնեն, կարճանագրուէք, ու նոյն օրն էլ, —հայդէ, ճանապարհ... եւ լաւ մտածեցէք ու հասկացրէք բոլորին. ամենափոքրիկ ընդդիմադրութիւնը բոցերով կըխեղդեմ: Բոլոր դիրքերում թնդանօթներն են սարքած, որոնց բերաններն ուղղած են դէպի հարկաւոր տեղերը, իսկ զօրքերին ու համ'իդիէներին (առանձնապէս շեշտում է «համ'իդիէ» խօսքը) արդէն տրուած են կարևոր նրահանգները:

Միւթէսարիֆի մօտից վերադառնալով վարդապետն ու միւսները գուժում են ժողովրդին կառավարութեան հրամանը: Քաղաքը սգի մէջ է մտնում՝ այդ լուրը լսելով. վրէժ յուծելու անկարելիութիւնը, անդօր կատաղութիւնը, յուսահատութիւնը, զսպուած, անձայն արտասուքն ու մօտալուտ մահուան երկիւղը տիրում է ժողովրդին: Այդ միջոցին քաղաքում մի քանի հազար փախստական հայեր ևս կային, որ քրդաշատ վայրերից եկել, Մուշ էին ապաստանել՝ յուսալով, որ քրդերն ու զօրքերը կառավարութեան աչքի առաջ, յամենայն դէպս այն վայրերնութիւնները չեն անի, ինչ որ խուլ կոզմերում: Եւ Մշեցի հայերը նրանց պահում էին իրանց սր-

տին սեղմած, իբրև մի թանկագին զանձ. տուն կար, որ վաթսուն հոգի էր վերցրել՝ խնամելու, կերակրելու. մարդ կար, որ իր երեխաների բաժինը պակասացնելով՝ էլի մի երեք-չորս գաղթական էր վերցրել իր տուն, ու փառք տալիս Աստծուն, որ իր դժբախտ եղբայրը, թէև բոլոր ունեցուածքը կորցրած, գոնէ ֆիզիքապէս անաս է մնացել. սակայն այժմ բոլորը հաւասարում էին, և շուտով ամենքը միասին պէտք է դիմէին դէպի վերջնական փրկութիւն, դէպի գերեզման...

Ինչքան էլ կառավարութեան հրամանը պարզ ու կտրուկ՝ այնուամենայնիւ հայերի սրտում դեռ մնացել էր յուսոյ մի կայծ, թէ՛ այս բոլորը թերևս իրանց վախեցնելու համար է. —կարծես թէ քիւրդ ու տաճիկները մինչև այդ՝ վախեցնելու բոլոր միջոցները չէին սպառել հայերի դիմին: — Այդպէս մտածում էին ու սպասում սրտադող: Իսկ մինչդեռ նրանք սպասում էին, կառավարութիւնն էլ իր գործն էր տեսնում. նա գաղթեցնելու միտք չունէր, այլ կոտորելու. այդ պատճառով՝ դիւանատներում շարունակ խորհուրդներ էին գումարում, թէ ինչպէ՞ս անեն, որ կոտորածը Սասուն, Մուշ և Մշոյ դաշտում միաժամանակ, արագ ու արմատական լինի:

Այդ նպատակով՝ դիրքերի թնդանօթներն էլ աւելացրին. բոլոր զիւղերի արանքներում զօ-

րախմբերի թիւն էլ ուժեղացրին, կանչեցին սր-
խալմամբ «չհրաւիրուած» մնացած քիւրդ ցեղա-
պետներին՝ իրենց աւագակներով, արեան խըն-
ջոյքին մասնակցելու, իսկ յատկապէս քաղաքում
գործողներին բաժանեցին վաղօրօք պատրաս-
տած՝ կարճ կոթերով կացիններ, փակած, ամ-
րացրած գոններն արագութեամբ փշրելու և ա-
ռաջին պատահածի գլուխը ջախջախելու համար...

Որքան էլ այդ բոլորն իբրև թէ գաղտնի էին
կատարուած, այնուամենայնիւ՝ հայերը պարզ
տեսնում էին, որ արդէն սուրբ դրած է իրենց
կողմը, և միևնույն է՝ պիտի մեռնեն. ու սար-
սափի ահռելիութիւնից բխեցած՝ այլ ևս ոչինչ
մտածել չէին կարողանում: Եղան համարձակ
գլուխներ, որ առաջարկեցին՝ գուրս գալ ամբող-
ջովիմբ, եթէ գէնք կը ճարեն՝ կռուողը կը կռուի,
փախչողը կը փախչի, և, ո՞վ գիտէ, գուցէ մի
մասը կարողանայ հասնել ռուսական բանակին և
ազատուել. բայց լսողները միայն գլխնին էին
շարժում. — հարիւր, հարիւր ու քսան հազար հո-
գին, ծեր, կին, երեխայ... Էդքանին հաց կը
հասնի. մի օրուայ, չորս օրուայ, ճանապարհ է.
Թշնամին հարիւր հազար, երկու հարիւր հազար
է. որտեղ փախչել, ինչպէս փախչել. — մրմնջում
էին նրանք ու զողացող երեխաներին կրծքներին
սեղմում:

Բայց և այնպէս մի խմբակ, տասնուչորս հո-

գուց բաղկացած, լոյս յուլիս 1-ի գիշերը կարո-
ղանում է գուրս գալ քաղաքից ու լեռնուղինե-
րով խփել, անցնել Սասուն, տեսնելու համար,
թէ այնտեղ ինչ կայ: Նրանց գուրս գալն էլ ան-
նկատելի չի մնում. Մշից մի ժամուայ ճանա-
պարհ չհեռացած՝ նկատում են առաջին շղթայի
անքուն հսկող պահակներից, հրացանածգութիւն
է տեղի ունենում, երկու կողմերի համար ան-
վնաս, բայց կոտորած որոճացողների աչքերը
«բացուած են» և նրանք տեսնում են, որ հայերը
կարողանում են օղակից գուրս թռչել. ուստի,
որպէսզի նրանց ցոյց տան, թէ ամեն ինչ հան-
գիստ է, առաւօտեան լուսաբացին ձայն են տա-
րածում, թէ՛ ընդհարումը տեղի է ունեցել երկու
պահակախմբերի մէջ, որ դէմ առ դէմ ելնելով՝
թիւրիմացութեամբ հրացան են բացել իրար վրայ,
և, փառք Ալլահին, անվնաս: Ապա ուրեմն՝ «ժո-
ղովուրդը» թող չանհանգստանայ:

Եւ երբ ժողովուրդը «հանգստանում է», կծկը-
ւում, կուչ է գալիս, շունչ քաշել անգամ վա-
խենալով, միւթէսարիֆը հրամայում է՝ — անմի-
ջապէս, առանց վայրկեան անգամ կորցնելու՝
դնալ, արձանագրուել ու ճանապարհ ընկնել: Իսկ
արձանագրելը նրա համար էր, որպէսզի յետոյ
կարողանային ստուգել, թէ՛ բոլորին արդեօք
«գողթեցրին», թէ՛ պահուողներ, խուսափողներ
շատ մնացին, և ովքեր:

Նրանք, որքան մեռնեին արդէն աչքի տակ էին առել, թուլացած ոտքերով գնում են դէպի ցուցակագրման տեղը, և այդպիսով կամովին գնացողների թիւը հասնում է մօտ 600 հոգու, որոնց անունները գրելուց յետոյ՝ հեռացնում են: Միևնոյն ժամանակ էլ զարթիւններն ու զինուորների մի մասը փողոցներն ընկած՝ վրայ են պրծնում, պատահած հային բռնում և ուղարկում՝ ցուցակ մտցնելու:—մի հրէշային որսորդութիւն՝ աչքից հեռու, անզէն, անպաշտպան հայերի յետևից:—Այդ ձևով բռնում են դարձեալ 6-700 հոգի, Վարդան Վարդապետն էլ հետը, որոնցով այդ օրը ցուցակագրածների թիւը հասնում է մօտ 1300-ի, մի «պարտիա», որ կարելի էր ճանապարհել դէպի Ուրֆա:

Այդպէս էլ ասում են.—այս գիշեր սրանց կուղարկենք նշանակուած տեղը, իսկ վաղը՝ դաշտի և քաղաքի բոլոր հայերին:

Պէտք է խոստովանուել, որ կառավարութեան ներկայացուցիչները կատարում են իրանց խօսքը. հէնց այդ գիշեր 1300 հոգուց բաղկացած հայերի առաջին խումբը հանում են Մուշից, ուղարկում Խաս-գիւղ, Մշեցի թուրք ծնբաշի Սլօյին պատուիրելով իսկոյն և եթ կատարել առաջուց իրան տրուած հրահանգը. և ծնբաշին, մագդործի ամենայն հմտութեամբ՝ բոլորին հաւաքելով մի տեղ, բաց է թողնում նրանց վրայ

բորենիների մի վոհմակ, որոնք սրերով յօշոտում, խողխողում են ամենքին...

Հէնց այդ գիշերն էլ, երբ 1300 հոգիանոց հայկական նահատակների խումբը Մշից դէպի զենման տեղն էին ուղարկում, աներեոյթ ճանապարհներով քաղաքը լուր հասաւ, որ միաժամանակ դաշտի բոլոր 102 հայ գիւղերում զարհուրելի կոտորած է սկսուել, արիւնը գետերի պէս հոսում, մի գիւղ կոտորելուց՝ միւս գիւղը տեղեկութիւն չի ունենում, այնքան արագութեամբ ու թափով է իջնում հարուածը, և այնքան սեղմ են տաճկաքրդական օղակներն ամեն կողմերում:

Այժմ եթէ կային հատ ու կէստ յուսացողներ, թէ իրանց պէտք է միայն զաղթեցնեն, էլ տեսան, որ զաղթեցնելու մասին խօսք չի կարող լինել, այլ՝ վճռել են բնաջնջել: Եւ ամբողջ քաղաքը սարսափահար սպասում էր լուսանալուն:

Ու լուսացաւ. լուսացաւ յուլիսի 2-ը,—Մշոյ դաշտի ու քաղաքի այդ անիծուած, այդ սոսկումներով լի օրը:

V

Յուլիսի 2-ին, առաւօտեան վաղ, տրուած ազդանշանով, քրդեր, տաճիկներ ու զօրքեր լըց-

ւում են քաղաք ու միմեանց թե տալով՝ հարայ-հրոցով, վայրենի աղաղակներով դիմում դէպի հայկական թաղերը: Մշոյ երկինքը թանձրանում է այդ գոռոցներից ու կոտորածի ենթակայ ժողովուրդի վայ ու վայնասունից: Բայց սպանութիւնները դեռ հաս ու կէնա էին, որովհետեւ հայերը տեսնելով, որ իրանց պէտք է կոտորեն, ինքնապահպանման միակ հնարաւոր միջոցն էին ձեռք առել, այսինքն՝ աւելի ծայրերից հաւաքւել էին դէպի կենտրոնական մասերը, «ապահով» տներում համախմբուել, այնպէս որ, մի սենեակում, որտեղ սովորական կերպով 10—12 մարդ կարող էր տեղաւորուել, այժմ հաւաքւել ու սեղմուել էին 40—50 հոգի. առն կար, ուր եկել՝ ապաստանել էին այդ տան բոլոր ազգականներն ու բարեկամները, և նրանց թիւը երբեմն հասնում էր 100—120-ի. և այդ նախազգուշութիւնը ձեռք առնելուց յետոյ, դռները ներսից պինդ պնդացրել էին փականներով ու նիզերով...

Բայց ահա ոռնոցներն աւելի կատաղի ու բարձր են հնչում, հրացանների ձայներն աւելի լաճախ են լսում, միեւնոյն ժամանակ էլ՝ յատուկ նպատակի համար պատուիրած կարճակոթ կացիներով զինուած խմբերն են առաջ անցնում, և նրանց հարուածների տակ սկսում են ճոճուալ ու ճեղքուել հայերի պնդացրած դռնե-

րը, որին անմիջապէս հետեւում են մորթուող կանանց, երեխաների ու մարդկանց բառաչիւնները... և քանի անցնում է ժամանակը, այնքան էլ զարհուրելի են դառնում մայրերի ու երեխաների աղիողորմ ճիչերն ու անօրէն մարդասպանների խրախուսական բացականչութիւնները: Տնքում է Մուշը հարուածների տակ, աւրեան տաք գոլորշին դէպի երկինք է բարձրանում, փողոցներն են լպրծուն դառնում առատաբար հոսող արեան վտակներից և դիակներ են գիզւում տների շէմքերում...

— Վճուր*), — թնգում են տաճիկների ձայները:

— Լէյսը*), — տարածւում են քրդերի գոռոցները:

Չարդում են առաջին պատահած տան դռները, և արեան համն առած գայլերի նման՝ խմբերից մէկը՝ արիւնը վրայից կաթելիս կացիներն ու սրերը ձեռներին՝ ներս են խուժում: Այգտեղ ապաստանածներն — 40, 60, 70 հոգի շնչարգել լինելու չափ միմեանց վրայ սեղմուած՝ գայլերին տեսնելով՝ բռնուած կենդանական սարսափով, իրար են անցնում, իրար հրհրում, արանք բաց անելու, մի տեղ «ծածկուելու»... և մահամերձի այդ օրհասական գալարումների մէջ կոխկռուում, ոտների տակ ոս-

*) Չաբկիբ:

կորներն են ճրթճրթում դժբախտ հայ մանուկներին... բառաչում են մայրերը, ծկլթում կոյսերը, ճչում երեխաները, իսկ միւս կողմից՝ կացինների բութ թրխկոցներն են տարածում, և ամեն մի թրխկոցին՝ հետևում է մի կարճ տրնքոց ու վայ... Մայրերից մէկն ու մէկը, մեռելաւիպ գէմքով, գողացող ձեռներով պոկում է անից կրծքին դրօշմած, զարհուրանքից ձայնը կտրուած երեխին, ու՝—տար, քեզ լինի, բայց մի սպանիր,—կանչում ու մեկնում դահճին. սակայն դահճը վերցնում է մանկանը, դնում ոտի տակ, կացնով մորթում, ապա նոյն կացնով՝ մօր գանգը ջախջախում... Եւ մի տասն րոպէ յետոյ, ամբողջ սենեակում էլ ոչ խութրոց կայ, ոչ ձայն, ոչ ծպտուն և ոչ գազան, այլ 60—70 դիակներից բաղկացած մի կոյտ՝ փշրուած գլուխներով, յօշօտուած կրծքներով...

Ինչեք, ինչեք չկատարուեցին այդ օրը Մուշում և շրջակայքում. մեր պատմագիրների արին սառեցնող, հոգի պատառող նկարագրութիւնները արաբների, սելջուկների, մօնղոլների աւերածութիւնների մասին, նսեմանում, դալկանում են քուրդ-տաճկական բորենիների ձեռքով կատարածների առաջ:

Ահա վեց տարեկան մի երեխայ. բոլորը փախել են ներսի թաղերից մէկը, բայց ինքը դուրսն է մնացել. խուճապի ժամանակ նրա բա-

ցակայութիւնը մերձաւորները չեն նկատել. և երեխան մնացել է փողոցում, սակայն բնագլխով մտել է մի խոռոչ ու տապ կացել: Այդ տեղով անցնում են 10—15 հոգուց բաղկացած մի խումբ զինուորներ. նրանցից մէկը նկատում է երեխին, ձեռքը մեկնում է նրան դուրս քաշելու, բայց չի հասնում: Քնքոյշ ձայնով կանչում է, որ դուրս գայ, սակայն երեխան ճշալով՝ աւելի է սեղմւում խոռոչի պատին. և զինուորը բարկացած՝ ուժեղ թափով մեկնում է հրացանը, սուխով շամփրում երեխային ու դուրս բերելով՝ հրացանը դնում ուսին, իսկ երեխան սուխի վրայից թէև վիզը կախել է, սակայն ոտներն ու ձեռները դեռ շղաճաբար ցնցւում են օդում, քրքիջ պատճառելով տեսող քրդերին...

Ահա մի աղջիկ, 15—16 տարեկան. նա քարացել է. ոչինչ չի տեսնում, ոչինչ չի լսում, ոչինչ չի զգում. այլ հէնց էնպէս սառել ու մնացել է կանգնած, մէջքը յենած պատին. և թէև շունչ կայ մէջը, իսկ երեսին մահուան գոյնն է նստել, բայց զիմագծերը նրա գեղեցկութիւնն են մատնում: Մի քանի քրդեր գէպի նրան են վազում. ով շուտ հասաւ, խօսքը նրանն է, որան իրան է պատկանում: Մէկը հասնում է ու բռնում. սակայն ներքևից վրայ է պրծնում մի աւելի կատաղած քուրդ ու գոռում:

— Վիա եմբնր. քո՞ւ դա դբի:*)

Եւ աշխատում են միմեանց ձեռքից խել: Քաջքում են կոյսին, շորերը պատռտում, մարմինը ծուռտում, մատները ջարդում, մինչև որ վերջապէս՝ մնում է աւելի բախտաւորի ձեռքին: Իսկ «բախտաւորը» բռնաբարում է ուշագնաց աղջկան, ապա սպանում... Էլ ինչո՞ւ պահի. նա հաշմանդամ է, մատները ջարդուած:

Ահա երեսունաչափ... բայց ի՞նչ շարունակել. միթէ հնար կայ Մուշ կատարուած հրէշային խրախճանի նկարագրութիւնը տալ՝ իր բոլոր մանրամասնութիւններով. — «Մուր եղեալ տնօրինացն՝ կոտորեցին զմայր առ մանկամբ և զորդի առաջի հօր. և առ ժամայն եղև քաղաքն բարեշէն՝ գուր արեան»:

Ճիշտ այդպէս, ինչպէս Լաստիվերտցին է տաում, բարեշէն Մուշը՝ արեան գուր դարձաւ, սակայն այդ արեան ծովերում չխեղդելով մարդկութեան պատուհաս դահիճներին:

Մահասարսուռ հարուածից մի քիչ ուշաբերուելով՝ քաղաքում գտնուող երիտասարդներից ոմանք այլևս աւելորդ են գտնում «խոհեմաբար» լուին ու վճռում են ոչ թէ մորթուել, այլ՝ մեռնել պատուով: Յայտնի Հաջին (Կոթոյեանց Յակոբ) կարողանում է հրաջքով մի վաթսուն հոգի իրանց զէնքերով շուրջը հաւաքել և

*) Դա իմն է. ո՞ւր ես տանում:

նրանց կենտրոնացնել վեց դիրքերում, — չորսը Ջորի թաղում, երկուսը՝ Վերին թաղում, այժմ մի դիրքում՝ տասնական հոգի:

Հէնց որ հայերի դիրքերից դանազան ուղղութեամբ բացւում են հրացանները, և փողոցների այս ու այն կողմերում, հայերի դիակներ ի կողքին քուրդ ու տաճիկներ էլ են փուռում, իսկոյն և եթ թշնամու մէջ խուճապ է ընկնում: Նրանք կարծում են, որ լեռներից հայերն են իջել օգնութեան և քաղաքում թագնուած ուժեր են եղել, որ այժմ հանդէս են իջել: Սակայն այդ «թիւրիմացութիւնը» պարզւում է շուտով. տեսնում են, որ մի քանի տեղերից է միայն մի քանի հրացան բացւում. բայց և այնպէս՝ դարձեալ սիրտ չեն անում նախկին յանդգնութեամբ առաջ նետուելու, մինչդեռ նահատակուող ժողովրդի սիրտն սկսում է ջերմ-ջերմ բաբախել ու մխիթարուել, որ իրանց կողմից ևս վառօդ են ծխում, ու գտնուեցան ջերմեռանդներ, որ հայերի կողմից հրացանը բացուելուց, կարծես զանգակի ձայն լսած՝ երեսներն էին խաչակնքում:

Բայց 60 հրացանն ի՞նչ կարող էր անել 60, 100,000 զինուած քիւրդերի, զօրքերի զէմ... Կոտորածի այդ փոքրիկ դանդաղումը տեսնելով՝ հրաման է տրւում անմիջապէս զործի դնել թնդանօթները, և մի քանի բոլակից յետոյ, զանազան կողմերից թնդանօթների խլացուցիչ բոմբիւններն են տարածւում, ու հայկական թաղե-

րում դարձեալ դժողքն է տիրում աւելի արհաւ-
րալից, աւելի սոսկալի: Միևնոյն ժամանակ էլ
կանոնաւոր զօրքերն են ռազմական կարգ ու
կանոնով դիրքեր գրաւում թիւրքերի գերեզմա-
նատանը, Փոթկաց պարտիզում, Բերդի թաղում
և էլի ուրիշ շատ յարմար կէտերում ու սկսում
գնդակների տարափ տեղալ աշխարհից ու եր-
կնքից մոռացուած հայերի գլխին:

Եւ ընդհանուր գազանացման այդ անիրաւ
րոպէին՝ տաճիկ կանայք ևս աշխատանքի են կանդ-
նում, նրանք փողոցների ծայրերում տապ կա-
ցած՝ երբեմն խմբակներով դուրս են պրծնում,
բռնում ընկած հայ կանանց ոտներից ու քաշում
դէպի աւելի ապահով անկիւն, նրանց կողոպտե-
լու, եղած ոսկիները թալանելու... հայերի դիր-
քերից մի քանի գնդակ են ուղղում դէպի այդ
կողմերը. և այն ժամանակ, երբ հայ երեխա-
ների ու կանանց մղկտոցը օդում էր ծաւալ-
ւում և հայ ժողովուրդը ոչխարի հօտի պէս էր
մորթւում, դիրքերից մէկից Հաջի Յակոբի
ձայնն է թնդում:

— Նամարդ չլինիք. կանանց վրայ հրացան
մի բանաք. կին սպանելը՝ թուրքի, քրդի գործ է:

Սակայն Հաջու այդ ասպետութիւնը շատ էլ
չի ազդում ընկերների վրայ, նրանք փողոցի
ծայրերում զարկում են մի քանիսին, և զրանով

էլ վերջանում է թուրք կանանց «վաստակա-
բեր» գործը:

Սկզբում մէկ-մէկ, ապա հետզհետէ զանա-
զան կողմերից՝ թանձր ծխի քուլաներն են սկը-
սում բարձրանալ երկինք, վառուող տներից տա-
րածւում են խորովուող, ողջ-ողջ այրուող հայե-
րի մղկտոցները, մէկն ու մէկը կարողանում է
դուրս թռչել բոցերից ու խելագարի պէս՝ վա-
զել դէպի գետը. բայց նրան ճանկում են ճա-
նապարհին ու վայրենի քրքիջներով՝ կոմ նաւթ
թափում գլխին ու վառում, կամ մի ուրիշ հըր-
դեհուած տան բոցերի մէջ նետում: Թնդանթ-
ներն աւելի ու աւելի կատաղի կերպով են ըս-
կսում գործել, տներ կործանել՝ փլատակների
տակ թողնելով այնտեղ կծկուածներին...

Այդ սանձազերծ փոթորկի առաջ ինչ կա-
րող էին անել վաթսուհազափ կռուողները. ճիշտ
է, տապալում են մի 2—300 բորենիներ, բայց
տասնեակ հազարներից մի քանի հարիւր խլելով՝
ինչ թեթևութիւն կարող էր առաջանալ թշուառ
հայերի կացութեան մէջ...

Հաջի Յակոբի 14 տարեկան տղան, մի փոք-
րիկ վեցնոց ատրճանակ ձեռքին՝ նոյնպէս կըռ-
ւում է. բայց գնդակները չեն հասնում թշնա-
մուն, և նա մի ազնիւ մղումով դուրս է թռչում
դիրքից ու դէպի տաճիկները վազում:

— Ո՛ւր ես գնում, տղայ, — սարսափած

կանչում են դիրքից:

— Գնդակս չի հասնում. մի քիչ մօտենամ, որ հասնի. — պատասխանում է պատանին ու թշնամու գնդակների տարափի տակ՝ առաջ վազում:

Այդպիսի յուսահատական խիզախումներ կռուողների կողմից մի քանի անգամ է լինում. բայց միևնույն է՝ վախճանը պարզ էր... Լքուած ժողովրդին մի քիչ յուսադրելու համար Հաջի Յակոբը ձայն է տարածում, թէ՛ — տղամարդ կացէք. ահա Սասունից լուր եկաւ, որ մեր ընկերները լսել են մեր դրութեան մասին ու Սասունից օգնութեան են իջնում:

Յուլիսի 2-ն անցաւ. տիրեց մի սոսկումնեւրով լի դիշեր. ամեն անկիւններից որդեկորոյս մայրերի ծվվոցներն էին թնդում գիշերային մթութեան միջից, վերաւորների վայոցները թանձրացնում օդը, իսկ սոված, սարսափահար երեխաները վախեցած՝ հեկեկում էին ու անմեղ աչքերով՝ կենդանի մնացած ծեր ու պառաւնների երեսներին նայում՝ իրանց մանկական հոգով աշխտեղից մի բան, ուրախացնող մի բան գուշակելու...

VI

Լուսացաւ: Բացուեց յուլիսի 3-ի առաւօտը: Արեգակի առաջին շողերի հետ՝ մտագործների

վոհմակները զինուած կացիններով, թրերով, հրացաններով, կամ մի որ և է ուրիշ հատու գործիքով՝ վայրենի աղաղակներով գործի են կանգնում, երէկուայ կիսատն այսօր լացնելու. միւս կողմից էլ թնդանօթներն են սկսում որոտալ, այս անգամ հարուածների թափը կենսորոնացնելով հայկական վերին թաղի վրայ:

Հետզհետէ փլում են թաղի ծայրում գրանուղ տները, ապա նրանց յետեւին, և այդպէս յաջորդաբար՝ տները մէկ-մէկ փլատակների են վերածւում, միևնույն ժամանակ էլ հրդեհն է սկսում լափել ամբողջ մնացած բնակարանները:

Մէկը երեխան կորցրած, մէկը՝ կնոջը, միւսը հօրը, չորրորդը եղբօրը, իրարից կտրուած, սրածուծից ազատուած հայերը խելակորոյս գուրս են վազում քարուքանդ եղած թաղից ու վազում դէպի Չորոյ թաղը, իրանք էլ չիմանալով, թէ ինչո՞ւ են աշխտեղ գնում. միթէ աշխտեղ չի հասնելու տաճկի կացինը, թնդանօթի ուռմբը... Սակայն այդ «ազատուածներից» քչերն են տեղ հասնում. բաց փողոցներում նրանք սրախողխող են լինում հետապնդող զօրք ու քրդերից:

Վերին թաղը հիմնայատակ կործանելուց յետոյ, ուշադրութիւննին դարձնում են Բրուտի թաղին: Դարձեալ թնդանօթների ուռմբեր, հազարաւոր հրացանների համազարկեր, կացինների

հարուածներէից փշրուող դռներ, մորթուողներէի խոխոցներ... կրակ ու բոց...

Ո՛հ մի երեակայութեամբ ներկայացնել հայերի դրութիւնն այդ բոլորէն՝ չի կարելի: — Եղբայրը տեսնում է, որ իրանից երկու քայլ հեռու՝ քուրդը բռնել է իր քրոջն ու տանում է, բայց ձեռք մեկնել չի կարող: Մարդը տեսնում է, որ մի ուրիշ զարշէլին քարշ է տալիս իր սիրած կնոջը դէպի մի ուրիշ կողմ, կիներ ճշում է, ծվծվում, ծկլթում, հաւաք կանչում, իսկ ինքը՝ ամուսինը օգնութիւն հասցնելու ոչ մի հնար չունի... Որդին տեսնում է, որ ահա գազանի մէկը բռնել է իր մօր ծամերից, իսկ միւսը փոքրիկ դաշոյնով գանդադօրէն կը տրտում է նրա ծծերը... տեսնում է, բայց երկու պատերի մէջ սեղմուած, միմեանց կռիւրուաող ամբօխի միջից չի կարողանում նոյնիսկ մի քայլ առաջ անցնել, որ մօտենայ, գոնէ մի անգամ «մայրիկ» կանչէ ու ինքն էլ դիակնանայ մօր կողքին... Տեսնում է մայրը, որ որդուն բռնել են, տապալել գետնին ու մորթել են ուզում, ուժերի գերագոյն թափով թռչում է պատի գլխից, տեղացող զնդակներից անվնաս՝ հասնում, բռնում թշնամուն, չանկոտում է նրա երեսը, կծոտում կռները, բայց յաջորդ բոլորէն՝ բռնում են յետեից, ձեռները պահում, ապա դաշոյնի կոթով կոտրատում ատամները, գլորում

գետին ու մայր ու որդի գլուխ-գլխի դնելով՝ քարերով փշրում...

Իրուտի թաղն էլ փլատակների ու ջնուցած հնոցի վերածելուց յետոյ, թնդանօթները, ամբօխն ու զօրքերը դարձան դէպի Ս. Մայրենի (Սմարենի) թաղը և ինչէր կատարուեցին այնտեղ, անկարելի է պատմել...

Հայերը տեսնելով, որ 60 հրացանը միեկնոյն է թէ՛ չկայ, և որ ոչ գետինն է պատուում ու իրանց կուլ տալիս այդ տանջանքների հետ միասին, ոչ էլ երկինքն է իրանց ձայնը լսում, թշնամու ձեռքից չխողխողուելու համար՝ դիմեցին ինքնաջնջման...

Այդպէս, Մշոյ մէջ յայտնի՝ Սինօյեանց Տիգրան անունով մէկը հաւաքում է իրանց տան բոլոր անդամներին, կանանց, երեխաներին ու ազգականներին, թւով մօտ 50 հոգի և բոլորին թոյն բաժանում, որ խմեն ու ազատեն... Տեղի է ունենում մի գարգանդուն, սրտաճմլիկ տեսարան... երեխաներն զգում են, որ պիտի մեռնեն, ու դողում են, սրթսրթում, չեն իշխում այդ կեանքի թել կտրող դեղը բերանին առնել. այլ մանուկ աչքերնին լայն բաց արած՝ մեծերին են նայում այնպիսի հայեացքով, որ կարծես հազարաւոր ասեղներ են խրում դիմացինի սրտի մէջ... Սակայն ի՞նչ օգուտ. պիտի մեռնեն: Երեխաների տանջանքները տեսնելով՝ մօտենում

են նրանց մայրերը. — խմիր, բալա-ջան, խմիր, քեզ մատաղ. մի վախենար. — խրախուսում են նրանք, և երեխաների գողգոշուն ձեռներից բռնելով՝ թոյնը խմացնում, ապա կուլ տալիս իրանց բաժինը...

Մի քանի ըոպէից յետոյ՝ յատակին փռուած են մնում 70 հոգի, որոնցից մի քանիսը դեռ ցնցումներ էին գործում կեանքից բաժանուելու վերջին ըոպէին...

Իսկ Սինոյեան Տիգրանը համոզուելով, որ էլ ոչ ոք կենդանի չի մնացել, վառում է տունը՝ մերձաւորներին հայրենի մոխրի տակ թաղելու, ապա մի գնդակ էլ սրտին ուղղելով՝ ընկնում տան շէմքում...

Ուրիշ ընտանիքներ հաւաքուելով միասին՝ տունն էին վառում և իրանք ողջ-ողջ աշտեղ խորովում...

Եւ քանի-քանի այդպիսի հոգեսարսուռ դէպքեր պատահեցին ամենքից մոռացուած Մուշում. քանի-քանի ամուսիններ իրանց գեղեցիկ կանանց գնդակահարեցին, տաճկական հարէմներից նրանց փրկելու համար, և քանի-քանի հայրեր իրանց երեխաներին «ազատեցին» իրանց ձեռքով՝ քուրդ-տաճկական կացնից ու գնդակից. և մինչդեռ հայերի արիւնը վտակներով էր հոսում, Ամերիկան՝ գերմանացիների ձեռքով խորտակուած «Արաբիկի» համար էր շանթեր

նետում, միւս չէզոք պետութիւններն էլ բաղկալի սչեօակէն առաջները դրած՝ հատիկներն էին չրխկացնում, թէ այս պատերազմից ինչքան շահ կըմնայ իրանց խանութի «գախում»...

Մի օրհասական գրոհի ժամանակ՝ ընկնում է Հաջի-Յակոբը, բայց մնացած կռուողները չեն ընկճում և դէն գցում հրացաններն՝ — անօգուտ է — սեւելով. այլ աւելի կատաղաբար են սկսում զարկել, ոչ թէ յաղթելու, ժողովրդին ազատելու համար, ոչ, այդ մասին մտածելն աւելորդ էր, — այլ՝ ըստ կարելոյն շատ զազաններ սպանելու, շատ գալեր ոչնչացնելու, մի փոքրիկ միլիթարութիւն՝ իրենց վառուած, դադուած սրրտների համար:

Մինչ այս, մինչ այն՝ թնդանօթներն ու դժոխացած, զինուած ամբոխն իրանց գործն են տեսնում վառելով, կոտորելով, ջարդելով՝ հայերին բոլոր թաղերից դուրս են քշում ու բերում, դեռևս համեմատաբար անփնտս մնացած Ձորի թաղում սեղմում. այդ թաղում արդէն վերջանում է քաղաքը, ուղիղ գետի ափին, որ սրնթաց անցնում է Ձորի թաղի առաջով, ձորի միջից, հանդիպակաց ժայռոտ լեռան ստորոտով:

Եթէ այդ թաղն էլ փոշի ու մոխիր դառնար, էլ որտեղ պէտք է պատասպարուէր ժողովուրդը: Չարմանալի բան. հայերը պարզ տեսնում էին, որ փրկութիւն չկայ. այսօր չլինի, վա-

ղը վերջանալու են, և ոչ մի տուն, ոչ մի թաղ, ոչ մի պատնէշ այլ ևս մահուան առաջն առնել չի կարող. բայց և այնպէս՝ կառչում էին ամեն մի բանից, որ մի բոլորով, մի ժամով կարող էր իրանց կեանքը երկարացնել, վերջին վայրկեանին անգամ այն յոյսը փայփայելով, որ կարող է հրաշք պատահել. — Սասունը կը գայ օգնութեան, ռուսական բանակը կը համի, երկընքից ուժեր կիջնեն... Եւ Ձորի թաղում 10—12,000 հոգի մեծ ու փոքր, կին ու երեխայ միմեանց վրայ թափուած՝ բռնել էին փողոցի մի ծայրից միւսը, սպասելով միմեկուն՝ թէ մի լոյս չի՞ ծագի հետեւալ օրը:

Միմեկն յուլիսի 3-ը. բայց միմեկինն օգուտ չբերաւ, քանի որ վառուած տները արևի պէս լուսաւորում էին չորս կողմն ու թշնամին բոլոր անկիւններից կրակ էր թափում այն կէտերի վրայ, որտեղ հայերն էին համախմբուել: Սակայն չեն իշխում ցերեկուայ վստահութեամբ մօտենալ տներին՝ վախենալով, թէ հայերը մի բան սարքած կը լինին: Այդպէս անցնում է, մինչև բացւում է յուլիսի 4-ը:

Այդ օրը ռմբակոծութիւնը, քրդերի կատաղութիւնը, զօրքերի համազարկերը ծայրայեղութեան են հասնում, բայց կատաղութեան ամենավերջին աստիճանին է հասնում և՛ մի բռնուհայ կռուողների խիզախման թափը. նրանք կրակ

ու բոց զարձած՝ տասնեակներով ու հարիւրներով են գլորում զարշելի թշնամուց. սակայն դրանով հայերի սարսափելի դրութեան մէջ ոչ մի դիւրութիւն չի առաջանում, որովհետեւ մի սպանուած քրդի տեղ հազարներ են ծառանում, մի արձակած գնդակի փոխարէն՝ հազարներ ըստանում հակառակ կողմից:

Թնդանօթների հարուածների տակ՝ Ձորի թաղի տներն էլ միմեանց յետևից քարուքանդ են լինում, և այնտեղ ապաստանածները մնում են փողոցներում, գնդակների տարափի տակ:

Կոտորուածը կոտորւում է, իսկ մնացածը, հէնց որ մութն ընկնում է, հաւաքւում են թաղի մի ծայրը և ով գեռ կարողութիւն ունէր մտածելով՝ մի կերպ գտնում են միմեանց ու վճռում — ժողովրդով անցնել գետն ու գնալ, բարձրանալ սարը, այնտեղից էլ շարունակել գնալ: Դէպի ուր... իրանք էլ չգիտէին... գնալ, թող լինի, ինչ որ զրուած է ճակատներին: Ու մանք էլ յուսադրում էին, թէ՛ կը բարձրանանք Սասուն, մի-երկու ամիս այնտեղ կը մնանք լեռներում, թերեւ մինչև այդ մի արև ծագի:

Եւ այդպէս, յուլիսի 4-ի լոյս 5-ի գիշերը որոշում են հեռանալ Մուշից:

Երբ այդ որոշումը հասնում է ժողովրդին, տիրում է մի վերին աստիճանի շղային դրութիւն, ամենքն աշխատում են ըստ կարելոյն

մօտիկ լինել գետափին, որպէս զի երևելու նըշանը տրուելուց՝ իսկոյն միւս ամիս անցնեն: Իսկ երբ հրացանաւորներն առաջ են անցնում ճանապարհը փոքր ինչ հետագօտելու, ամբողջ կարծում է, թէ նրանք արդէն թողնում են Մուշը, և այդ ըոպէից առաջանում է մի սուկալի քաօս. ինչպէս ոչխարի հօտը մի որևէ բանից խրտնած, սարսափած՝ դռալով մի կողմ է շարտւում խելապատառ, նոյնպէս և բազմահազար ժողովուրդը, զիշերուայ ժամը 11-ին դէպի գետն է շարտւում, միւս ամիս անցնելու, այնտեղից էլ՝ դիմացի Կողու գլուխ կոչուող ժայռոտ սարը երևելու համար:

Մուշը վառւում էր և հսկայական բոցերը լուսաւորում էին չորս կողմը 8—10 վերստ տարածութեամբ. պարզ է, որ մի այդպիսի ուժեղ լոյսի տակ արիւնարբունները լաւ կը տեսնէին, թէ ինչ է կատարւում Ձորի թաղում, և նրանք տեսան, թէ ինչպէս հայերը դէպի գետն են վազում:

Քուրդ ու տաճիկները բռնած Ձորի թաղի փողոցի երկու ծայրերը, իրանց հրացանները բռնում են խուճապացած ամբօխի շարքերին... Մոնչում են լեռները սոսկալի ցաւից. ունում է տաանեակ հազարաւոր ամբօխը գնդակների տարափից, մարդիկ գլխապատառ՝ գլորում են միմեանց, կոխկռտւում են երեխաները, հեծեծւում

մայրերը... Շփոթ, իրարանցում, դժոխք...

Շատ մայրեր տեսնելով, որ գետն իրանցից երկու քայլ է միայն հեռու, բայց չեն կարողանում մարդկային պատնէշում արանք բաց անել ու թռչել գետը, իրանց երեխաներին մարդկանց գլխների վրայով շարտւում են ջրի մէջ, յուսալով, որ գուցէ նրանց այնտեղ կը բռնեն ու միւս ամիս հանեն, իսկ իրանք ուշաթափ ցած գլորւում, արորուելով ու փշրուելով ունների տակ:

Հետզհետէ սրընթաց գետակը ցոյց է տալիս իր շնորհքը.—բազմաթիւ դիակներ թոյլ էակների՝ կանանց ու երեխաների, սկսում են լողալ գետի երեսին, ազատուելով վերջապէս այս անիրաւ աշխարհից, որտեղ ապրելու իրաւունքը միայն զազաններին ու լրբերին է տրուած... Խեղդւում է և փոքրիկ հերոսը, Հաջի-Յակոբի 14 տարեկան տղան:

Երեք ժամ է տևում գետից անցները. իսկ այդ երեք ժամում բոխտից հալածուածները տիեզերքի ամբողջ զարհուրանքներն են կրում իրանց վրայ: Որը ոտների տակ է շունչը փչում, որը հէնց գետի մէջ գնդակահարւում, որը կիսամեռ, ծանր վիրաւոր՝ միւս ամիս մնում, իսկ մնացած մասը թուով 5—6 հազար, զիշերուայ ժամը 2-ին դուրս գալով Մշոյ ձորից, դիմում է դէպի սար...

Լոյսը բացուելուց՝ մահմեդական խուժանը

ծակուծուկերն է մտնում, և քաղաքում ու գետափում բոլոր թագնուածներին ու վիրաւորներին ի մի հաւաքելով, դարսում միմեանց վրայ ու մի հսկայական խարոյկ կազմելով՝ վառում, իբրեւ վերջաբան իրանց փառաւոր զործի...

Թողնենք առայժմ Մշոյ տարաբախտ հայերին դէպի սարը դիմելիս, իսկ մենք անցնենք Սասնոյ լեռները, մի տեսնենք, թէ՛ այնտեղ ինչպիսի արեան խրախճան կատարեցին գիշակներն երբ:

VII

Սասունը հեշտ կուլ տալու պատառ չէր. դրա մէջ անցեալի փորձերով էր համոզուած տաճիկ կառավարութիւնը. և նա իր ախտաժէտ ուղեղում հայի բնաջնջումը գուրգուրելով, այնուամենայնիւ, որքան էլ պայմանները նպաստաւոր, զգում էր, որ «գործը» Սասունում մեծ դժուարութիւնների պիտի հանդիպի: Այդ պատճառով իր արիւնտա թաթը համարձակօրէն դէպի հայկական միւս վայրերը մեկնելով՝ Սասնոյ առաջ ճանկերը ներս էր հաւաքել ու մէկ-մէկ էլ սիրալիր ժպիտներ ուղարկում Գաբլօրի, Անտոքի փէշերին թառած արծիւներին:

Բայց այդպիսի խայտառակ երկերեսութիւն

մի վճռական խնդրում, ինչպիսին էր հայերին ոչնչացնելու բաղձանքը, այնքան էլ ձեռնառու չէր Իլդիզի ճիւղին, և կառավարութեան «իմաստուն» հրահանգներով տեղական պաշտօնեաները կամաց-կամաց սկսում են հող պատրաստել՝ Սասնոյ հաշիւը մաքրելու:

Քայլերը հեռուից սկսեցին. քայլեր, որ Մշոյ սև օրերը պատրաստելով՝ միևնոյն ժամանակ էլ փոթորկալից ամպեր հաւաքեցին Հայկական Տաւրոսի երկնքում:

Հսկայ լեռներից ապաւինած՝ հալարտ Սասունցին կարողացել էր ցոյց տալ աւազակաբարոյ հարեան քրդերին ու տաճիկ կառավարութեանը, որ վտանգի բոպէին ինքը գիտէ իր իրաւունքներն ու պատիւը պաշտպանել. ուստի, պատերազմի սկզբում, շրջակայ քրդերն սկսեցին սողալ հայերի առաջ, օձի լեզու հանել, որ իրանք մի հողի եղբայրներ են, պատերազմն ինչ վախճան էլ ունենայ, իրանց մէջ թշնամական ոչինչ չպիտի ծագի և յարաբերութիւններն բարեկամական պիտի մնան, իչպէս և առաջները:

Սասունցիք նոյնպէս հաւաստիացնում են հարևաններին, որ իրանք իսկապէս երբէք թշնամական ոչինչ չեն ունեցել դէպի Տաճկաստանի «հողի եղբայրները», մանաւանդ այժմ, երբ պատերազմի հետեանք սով ու հիւանդութիւններից ազատուելու համար հարկաւոր է, որ ա-

մենքը ձեռք-ձեռքի տան ու միմեանց օգնեն ժողովրդական աղէտները ժամանակ:

Եւ այդպէս՝ մի առ ժամանակ դրութիւնը հանգիստ էր, թէև այդ հանգստութեան տակ մի կողմը ստէպ-ստէպ դէպի Սասունն էր գցում իր գայլային աչքերը յարմար բոպէին՝ անտառապատ լեռները հայկական արիւնով ներկելու, միւս կողմն էլ՝ զգուշաւոր հայեացքով՝ հարեանի քայլերն էր գիտում ու նրա աչքերի կառկածելի փայլից տխուր եղբակացութիւնների յանգում:

Կեղծ դրութիւնը կամաց-կամաց պարզուում է: Երբ ռուսական զօրքերը տաճիկ բանակներին դուրս քշելով Կովկասի սահմաններից՝ սկսում են երևալ Հայկական բարձրավանդակի զանազան կողմերում, Թալաթի ու Էնվէրի կառավարութիւնն զգում է, որ հայերին ոչնչացնելու ծրագիրը կարող է ջուրն ընկնել, ռուս բանակն ու հայկական զինքերն սպասածից արագ կը հասնեն ու Հայաստանը կը վերցնեն՝ հայերով հանդերձ. մինչդեռ նրան հարկաւոր էր գտնէ Հայաստանը տալու դէպքում՝ տալ առանց հայերի: Արդ, այդպիսի ծրագիր ունենալուց յետոյ կարելի էր հանդուրժել Սասնոյ գոյութիւնը, իր մէջ ապրող կտրիճներով...

1915 թ. սկզբներում ձեռնաձուլն են լինում գինեթափման այն շրջանների, որ հեռու էին ընկած հայաշատ, կենտրոնական վայրերից,

շրջապատուած էին միանգամայն թշնամի տարրերով, և այնտեղ կատարուած անիրաւութիւնները ցնցող արձագանք տալ ամեն անկիւններում՝ չէին կարող: Հաւաքում են Սէլիվանի, Բշէրիկի, Միաֆարգինի և այլ հեռաւոր կողմերում գտնուող հայ գիւղերի եղած-չեղած գէնքերն ու գիւղացիների մի մասը կոտորում, միւս մասը բաժանում քրդերին, կամ գաղթեցնում, և այդ բոլորը տաճկական այնպիսի վարպետութեամբ, որ ուրիշ կողմերում ոչինչ չեն լսում, և եթէ լսում էլ են, ապա շատ ազօտ կերպով, այնպէս որ՝ շատերը չեն էլ ուզում հաւատալ, թէ այդպիսի գազանութիւն ներկայ փառազաւոր պայմաններում՝ կարող է տեղի ունենալ:

Մարտի սկզբներում, երբ ռուսական զէնքի թափը երկար ժամանակ կանգ է առնում Հայկական ճակատում, տաճիկ կառավարութիւնը խուլ անկիւններում հայերի գլխին ամեն տեսակ «քաջագործութիւններ» կատարելուց յետոյ՝ իր նողկալի շօշափուկները փոքր առ փոքր տարածում է գէպի ուրիշ, աւելի հայաշատ տեղեր. մտնում են Ծովասար գաւառակն ու Ալլրի գիւղից պահանջում՝ անմիջապէս բերել ու յանձնել ունեցած գէնքերին. գիւղացիք պատասխանում են, որ իրանք գինուած թշնամիներ չեն ու գէնք չունին. և մենակ այդ «չունինք» բառի համար՝ այնտեղ սպանում են 50 հոգի, իսկ Ա-

հարօնք գիւղում կախում են երեքին, սպանում մի կին, երկու երեխայ:

Այդ միջոցներում էլ կառավարութիւնը նոյն «փորձն» է անում խիանք ու խուլփի գաւառակներում, որ թէև քմահաճօրէն Գէնջի սանջակին են կպցրուած, բայց իրանց աշխարհագրական դիրքով ու հայաշատութեամբ՝ անմիջապէս յարում են Սասունին: Տաճիկ պաշտօնեաները ոստիկանների ու քրդերի մեծ բազմութեամբ այդտեղ գալով՝ մէջտեղ են բերում սովորական դարձած պահանջը. — անյապաղ բերել ու յանձնել գէնքերը: Խիանքի և խուլփի հայ գիւղերի ներկայացուցիչները տրտնջում են, թէ՛ ախր իրանք ապստամբներ չեն, երկրի կարգ ու կանոնը, խաղաղութիւնը ոչնչով չեն խանգարել, պետութեան բոլոր պահանջները կատարել են և կատարում են աւելի կանոնաւոր ու անտրտունջ, քան թէ Օսմանեան պետութեան մէջ ապրող բուն տաճիկները. էլ ինչո՞ւ համար են այս ներութիւնները:

Բայց կոխովի գայլը երբ է ահանջ դրել գառան արդար բողոքներին, որ տաճիկ պաշտօնեաները, հրահանգուած Պօլսից, ահանջ դնէին ինչ-որ խուլփի, խիանքի աղաղակներին: Նորից գէնքերը յանձնելու պահանջն են դնում, այս անգամ սպառնալով, որ հակառակ դէպքում՝ ամենախիստ միջոցներ ձեռք կ'առնուին. իսկ տաճ-

կի «ամենախիստ միջոցն» մը չէ յայտնի . . .

Հայերը պնդում են, որ իրանք գէնք, չունին, եթէ հատ ու կէստ մարդիկ հրացան էլ ունին, ապա չգիտեն նրանք ովքեր են, իսկ կառավարութիւնը թող խուզարկէ և ում մօտ գէնք գտնի, նրան պատժէ:

Այդ առարկութիւնն անելով հանդերձ՝ հայերը սակայն տեսնում են, որ, միևնոյն է, գէնքեր էլ ձարեն ու յանձնեն՝ պիտի «պատժուին», չյանձնեն՝ դարձեալ պիտի պատժուին, ուստի երիտասարդութիւնը փախչում, Տալուորիկի ուղիւթեան վրայ գտնուող՝ Խիանքի Իշխնձոր, Արտիօնք և Սևիթ գիւղերում է կենտրոնանում: Քիւրդ ու տաճիկները թեաւորուելով նրանով, որ երկիւղ ազդող տարրը — երիտասարդութիւնը — հեռացաւ գիւղերից, վստահօրէն, քաջաբար թափում են գիւղերը, այս անգամ երիտասարդներին պահանջելով ու պնդելով, որ նրանք բարձրացել են լեռները, ապստամբութեան դրօշակ պարզելու համար: Սարսափահար ժողովուրդը չի լմանում ինչպէս անէ, որ պատրաստուած հարուածն իրենից հեռացնէ. բայց մինչև նրանք կը մտածէին՝ հարուածն իջնում է:

Ասպետականութեան ամենափոքրիկ նշոյլներն անգամ կոբցրած՝ նամարդ գազանները վրայ են պրծնում, պղծում, բռնաբարում անպաշտպան հայ կանանց ու կոյսերին, գեղեցիկ-

ներին առեանգում, ապա որսալով մօտ 3,000 հոգի ծեր ու պատանիներ, քշում, տանում իբրև համալ-թաքուրի: Այդ դժբախտներին հասցնում են մինչև Լիճէ քաղաքը, այնտեղից՝ ոչխարի հօտի պէս առաջնին արած՝ իջեցնում Սարբերդի ու Բալուի մէջ տեղ, ու խմբակների բաժանելով՝ բոլորին կոտորում... Այդ մահասարսուռ կոտորածից հրաշքով ազատւում են միայն երեք հոգի, որոնք և գաղտնի ճանապարհներով, սոված-ծարաւ հասնում են Տալուորիկ ու պտամում սոսկալի եղելութիւնը:

Սիրանք և Սուլի գաւառակներում մնացած հայ ժողովուրդը տեսնելով, որ այլևս տաճիկ կառավարութեան «ոգորմածութեան» վրայ յուսալ չի կարելի, մեծ ու փոքր, անով-տեղով պոկ են գալիս իրանց հայրենի օջախներից, և ճանապարհներին զոհեր տալով՝ փախչում Սասուն, յուսալով, որ այնտեղ, թէկուզ սոված, էլի մի կերպ գլուխ կըպահեն, մինչև տեսնեն՝ ինչ սև օր պիտի բերէ էգուցը:

Այդպիսի անաստուած դրութիւն է ստեղծւում և Սասունի միւս կողմում գտնուող մի այլ գաւառակի, Փսանքի համար: Երկար ամիսների ընթացքում, տաճիկ կառավարութիւնն ու քուրդ ցեղապետները Փսանքի չորս կողմը հոտոտելուց, հատ ու կէնտ, սովորական դարձած վայրագութիւններ անելուց յետոյ, դիմում են կանոնա-

ւոր ասպատակութիւնների. — Գարլջեօզից հասած պատուէրներով, Շէկօյի, Բզրցի, Բօզկցի, Մօսկանցի, Ջալլացի և Գէնջօյի քրդերը, տեղական գայմազամս էլ նրանց հետ, յաճախակի, բացարձակ յարձակումներ են գործում, ապրանքներ թալանում, տասնեակներով մարդիկ կոտորում: Բայց այդքանը հերիք չէք. մայիսի կէսերին կառավարութիւնը Փսանքի հայերին բացէ ի բաց ապստամբներ է յայտարարում, և ինչպէս ուրիշ տեղերում, այդտեղ էլ պահանջ դնում, բերել ու յանձնել զէնքերը: Իսկ դա, իհարկէ, նշանակում էր — ժանիքներս քոր են եկել և ձեզ պիտի յօշոտեմ: — Ապա ապացուցելու համար, որ սպառնալիքը հանաքի համար չի արուած, յարձակւում են միքանի զիւղերի վրայ, կանանց ու աղջիկներին տանում, որոնց քրդերը բաժանում են իրանց մէջ, իբրև պատերազմական աւար, իսկ ժողովրդի մի խոշոր մասը, ուրիշ անկիւններից այդտեղ ապաստանածների հետ միառին, թւով մօտ 4,000, Ստեփան վարդապետը հաւաքում է Մարաթ լեռան վրայ գտնուող Մատին-Առաքելոյ վանքն ու այնտեղ ամրանում: Եւ մինչդեռ նրանք վանքում պատրաստութիւններ էին տեսնում մի կերպ, մի առ ժամանակ պաշտպանուելու, շրջակայ բազմաթիւ քիւրդ աշիրէթները վրայ են թափւում և վանքն ու նրա շուրջը գտնուած տարածութիւնը պաշարում:

Մայիսի 20-ից սկսում է մի անհաւասար կռիւ վանքի ու պաշարողների մէջ: Քաջ վարդապետն ամբողջ մի ամիս ու կէս, ռազմական ծիծաղելի պաշարով, կարողանում է դիմադրել հազարաւոր քրդերին, մինչև որ թշնամին կրտսրում է վանքի ջուրն ու ժողովրդին ծարաւի մատնում:

Բայց այդ ծանր դրութիւնն էլ չի յուսահատեցնում արի հոգևորականին. նա աւագան է փորել տալիս ու լքնում ճնաջրով. բայց այդ ջուրը շուտով կեղտոտում է, հոտում. վանքում մնալ՝ էլ չէր կարելի: Վարդապետը կամաւորապէս հանդակ է ուղարկում Սասուն՝ օգնութիւն խնդրելու. բայց մինչև օգնութիւնը կը հասնէր, դրութիւնը միանգամայն օրհասական է դառնում, ուստի և վճռում են՝ բոլորը միասին դուրս գալ վանքից, պատռել շղթան, ու եթէ բախտը բերաւ՝ հասնել Սասուն:

Այդպէս էլ անում են. բայց հէնց որ վանքից քիչ հեռանում են, արիւնածարաւ գազաններն ամեն կողմից սկսում են յարձակումներ գործել: Ժողովուրդը ցաք ու ցրիւ է դառնում, վարդապետը մի փոքր մատով միայն կարողանում է շղթան անցնել ու դիմել լեռները, ուր և, Տալուորիկից հարաւ, լեռան փէշերում հանդիպում է Սասունից վանքին օգնութեան եկող՝ 30 հոգուց բաղկացած խմբին:

Ցրուած ժողովրդի մեծ մասը, 2000-ից աւելի՝ կոտորւում են քրդերից, իսկ մնացածն ապաւում է, շնորհիւ Սասունից իջած տասնեակների, որ սար ու ձոր ընկած՝ ցրուածներին հաւաքում են ու հասցնում աւելի ապահով տեղեր:

VIII

Թէև կառավարութիւնը շատ տեղերում էր սկսել իր վայրագութիւնները, սակայն բուն Սասունն առ այժմ գերծ էր մնացել մեծ դժբախտութիւններից, և Սասունցիք չէին կարողանում, չէին էլ ուզում հաշտուել այն մտքի հետ, թէ բարբարոսները կը գրաւեն իրանց անառիկ բարձրութիւնները, և թէ իրանք անարտունջ դէմ կանեն գլխին, ասելով՝—կտրեցէք: Նրանք զգում էին, որ թշնամին, ներկայ պայմաններում, անսահման ուժեղ է իրանց համեմատութեամբ, բայց և համոզուած էին, որ օրհասական բուռն պէտք, յամենայն դէպս՝ իրանք միայն արտասուք չալիտի թափեն, այլև՝ թշնամու արիւն:

Այդ բանը տաճիկներն էլ լաւ գիտէին, ուստի և խիստ զգոյշ էին Սասնոյ վերաբերմամբ, և նրա գոյութիւնն առ այժմ՝ կարողանում էին տանել ատամների կրճատոցով:

Ինչ վերաբերում է սասունցիներին, ապա նրանք գովելի հեռատեսութեամբ իրենց միան-

գամայն լօյալ էին պահում՝ ամեն կերպ խուսափելով կառավարութեան ձեռքը թէկուզ մի փոքրիկ փաստ տալու անհաւատարմութեան: Եւ ոչ թէ քաղաքական յետին նպատակներով, այլ գուտ մարդասիրական զգացմունքներից դրդուած՝ ուսական ճակատից փախած բազմաթիւ քուրդ ընտանիքներին նրանք կարեկցաբար էին ընդունում, ունեցածից բաժին հանում, հազցնում, կշտացնում, փոքր ինչ էլ պաշար տալիս՝ մինչև կը հասնէին քրդական վայրերը, իրանց արիւնսակիցների մօտ:

Ամենազրական կերպով կարելի է շեշտել, որ Սասունն ապստամբական խոհերից միայն գամայն հեռու էր. սակայն Տաճկա-Հայաստանում ապրող բոլոր հայերի պէս՝ Սասունցիք ևս իրանց սրտի խորքերում այն միտքն էին գուրդուրում, որ անհ կըգայ վերջապէս ուսու բանակը և կը վերջանան իրանց տանջանքները, Հայաստանն ազատ շունչ կըքաշէ... Ամեն օր, ամեն շաբաթ աչքերնին արեւը յառած՝ սրտի թրթռոցով ուսաց զօրքերի յաղթական մուտքին էին սպասում, և երբէք չէին ուզում հաւատալ կառավարական զիւանադաններից բղթած սոստ լուրերին, թէ՛ իրանք վերցրել են Բաթումը, վերցրել են Կովկասի մեծ մասը, Թիֆլիսն էլ հետը. չէին հաւատում, որովհետև այդ անկարելի էին համարում, և մանաւանդ որ, ճէնց

որ լուր էր տարածւում, թէ՛ տաճիկները վերցրել են Թիֆլիսը, միւս կողմից էլ հակառակ լուրեր էին տարածւում, թէ՛ ռուսները գրաւել են Բիթլիսը:

Պէտք է ասել, որ Սասունցիների իրանց լեռներում լուռ ու մուջ մնալը իր տխուր պատճառներն ունէր. նախ՝ հաց չկար, և երկրորդ, որ ամենաէականն է, զէնք չունէին. գուցէ ճէնց դրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ քիւրդ-տաճիկները մօտակայ գաւառներում կատարում էին ամեն տեսակ վայրենութիւններ, և սուպետ Սասունցին չէր իջնում իր մթին լեռներից՝ հարկաւոր հատուցումը տալու: Բայց կառավարութիւնն այլ կարծիք ունէր. Սասունյ զինական ուժի մասին, ուստի և երկար ժամանակ չէր յանդգնում իր մուրտառ ոտներով Հայկական Տաւրոսի բարձունքները պղծելու:

Իսկ երբ հոգն արդէն բաւականաչափ պատրաստուած էր և կառավարութիւնը Յրօնք, Գումս, Աւզուտ, Մուշեղաշէն և ուրիշ շատ ու շատ զիւղերում, նոյնպէս և Խիանք, Խուլփ, Փսանք ու Ծովասար գաւառակներում հայկական արիւնն առատաբար հոսեցրել էր, ճանապարհները լցրել հայերից հաւաքած համալ-թաբուրների դիակներով, սարսափ տարածել բոլոր հայկական կենտրոններում, այն ժամանակ փորձ է անում ժանիքները մի Սասունին էլ կապնելու:

Խիանքի քուրդ աղան՝ միւղիր Քեօռ-Սլօն (Սիւլէյման) մի ոստիկանական պաշտօնեայի տալիս է ոստիկաններ, ու կենտրոնական կառավարութիւնից ստացած հրահանգով՝ ուղարկում Տալուորիկ, գէնքեր պահանջելու։ Պաշտօնեան գալիս է ու Տալուորիկցիներին յայտնում այն, ինչ որ իրան հրամայել էին, այսինքն թէ՛ բերէք ու մեզ յանձնէք ունեցած գէնքերնիդ. ապա կառավարութեան անունից երդւում, որ գէնք չյանձնողը կը պատժուի, իբրեւ պետական յանցաւոր իսկ յանձնողը՝ կը խնայուի ու կը խնամուի։

Տալուորիկցիք նախ զարմանում են այսպիսի արհաւիրաց լրբութեան վրայ, ապա ուշքի գալով՝ պատասխանում են, թէ՛—մենք գէնք չունինք, որ յանձնենք. չեղածից ի՞նչ տանք։ Իսկ կառավարութեան այն հաւաստիացումը, թէ՛ գէնք տուողը կը խնամուի կառավարութիւնից, չի համապատասխանում ճշմարտութեանը, որովհետեւ... և սկսում են մի առ մի թուել այն հայկական գիւղերն ու շրջանները, ուր գէնքերը հաւաքելուց յետոյ ժողովրդին ոչ թէ խնայել էին ու խնամել, այլ՝ տղամարդկանց կոտորել էին, իսկ կանանց բռնաբարել, աղջկաներին էլ բաժանել քրդերի մէջ։

Պաշտօնեան իր ոստիկաններով դադարեցնում վերադառնում է և բոլորը յայտնում միւղիրին։ Սակայն Տալուորիկցիների այդ պա-

տասխանը չի յուսահատեցնում Քեօռ-Սլօյին և նա երկու անգամ էլ նոյն փորձը կրկնում է, որ նոյնպէս անյաջող ելք է ունենում. կոպիտ լեռնականը խելօք պատասխաններով յաղթում է Սլօյին։ Այդ ժամանակ ոտքի է կանգնում Մշոյ միւլթէսարիֆը՝ ապաւինելով իր խորամանկութեանն ու կոտորածներ գլուխ բերելու հմտութեանը։

Իմանալով, որ Սասունում լաւ են ճանաչում Վարդան վարդապետին, միւլթէսարիֆն իր մօտ է կանչում նրան ու պատուիրում, որ թիւրք աստիճանաւորների հետ ելնէ Սասուն, խրատէ, համոզէ այն՝ «իրանց շահը չհասկացող լեռնականներին», չըմբոստանալ ու կատարել այն պահանջները, որ աստիճանաւորները այնտեղ կը ներկայացնեն կառավարութեան անունից։

Դժբախտ Վարդան վարդապետը, որ այնպիսի աղէտալի վախճան ունեցաւ Խաս-գիւղում, առաքելում է, թէ՛ ինքը մի այդպիսի միասիւռ գլուխ բերելու տուեալները չունի, աւելի լաւ է, թող մի ուրիշ ճարպիկն ու ազգեցիկը գնայ. բայց միւլթէսարիֆն իմանում էր, թէ ում օձիք է բռնել, և պնդում է, որ անպատճառ վարդապետը գնայ՝ շեշտելով, որ, նա եթէ ուղենայ, շատ բան կարող է անել։

Մշեցի Ղաւթ, Մուսա, Մուստաֆա էֆէնդիները, նրանց հետ Վարդան վարդապետը,

տէր-Սաշատուրը և տասն ուրիշ մահմեդական էֆէնդիներ՝ ճանապարհուում են Սասնոյ Շատախի Տափըկ գայմազամանիստ գիւղը։ Տափըկի գայմազամն իսկոյն մարդ է ուղարկում Սասուն և իր մօտ «հրաւիրում» իշխաններին (տանուտէրներին)։ Իշխանները տարակուսում են, թէ՛ սա ի՞նչ «հրաւէր» պէտք է լինի. և մեծ դժկամակութեամբ, վախենալով նոյնիսկ, որ կարող է պատահել այլևս չվերադառնան, գալիս են Տափըկ։

Էֆէնդիները սիրալիրութեամբ ընդունում են նրանց, գովում Սասունցիների լօյալութիւնն ու հաւատարմութիւնը, ապա, այդ գեղգեղանքն անելուց յետոյ, դիմում իրանց գալու իսկական նպատակին։ Նրբ խնդիրը պարզւում է Սասունից եկածների համար, նրանք բացարձակօրէն հրաժարւում են որևէ բանակցութեան մէջ մտնելու՝ առարկելով, որ իրանք լիազօրուած չեն Սասնոյ անունից վճիռներ կայացնելու, ու խընդրում են այդ ինքն ըստ ինքեան շատ պարզ հարցերը լուծելու համար, հաւաքուել Շէնըկ։

«Պատուիրակները» համաձայնւում են, նրանք գնում են Շէնըկ, ուր և հաւաքւում են Սասնոյ միւս իշխանները։ «Ժողովը» բանում են Մշից եկած էֆէնդիները. նրանք յայտնում են կառավարութեան անունից, որ Սասունը նոր զօրք այլևս չալիտի տայ, որովհետև Սասունցի

զինուորների կողմից խայինութիւն է նկատուել։

Իշխանները բողոքում են այդ մեղադրանքի դէմ, թէ՛ կառավարութիւնը երիտասարդներին հաւաքելով՝ նրանց ոչ թէ պատերազմի դաշտ տարաւ, այլ փոխեց համալ, և ամալիա-թաբուրիների ու ոչնչացրեց հեռաւոր, անյայտ ճանապարհներում. բնական է, որ այդպիսի վերաբերմունքից յետոյ՝ երիտասարդութեան սիրտը կոտրէր ու պարտականութեան զանցառութիւններ շատ տեղի ունենային. իսկ դա՛ խայինութիւն չէ։

Թիւրքերը զուտ թրքօրէն ստում են, թէ՛ երիտասարդութեան մի փոքր մասը զոհ է գնացել պատերազմների ժամանակ ծագող անխուսափելի հիւանդութիւնների ախպէս, ինչպէս և զոհ են գնացել մահմեդականները։ Ապա աւելացնում են. — Հաւատացած եղէք, որ բարեխնամ կառավարութիւնը ոչ մի չար դիտաւորութիւն չունի դէպի հայ ժողովուրդը, մանաւանդ դէպի Սասուն, որի աղքատիկ զրութիւնը նրան լաւ յայտնի լինելով՝ չի ուզում զրկել աշխատաւոր ձեռքերից, նոր զօրք չի պահանջում, նոյնիսկ նոր համալ-թաբուրի էլ չի ուզում, ձեզ միանգամայն ազատ է թողնում, միայն թէ բանակի պէտքերի համար պէտք է տաք զրամ, իւղ, շոր, հաց և ոչխար։

Սասնոյ իշխանները միամիտ չէին. նրանք

հաստատ համոզուած էին, որ կառավարութիւնը պաշտօնեաների բերանով այսպէս խօսելով՝ դիւ-
ւային ծրագիր ունի կազմած և միայն քնացնել
է ուզում արթուններին: Սակայն իրանց յիմա-
րի տեղ դնելով՝ հաւատացած են ձեռնում այդ
անպատկառ երգերին ու շնորհակալութիւն յայտ-
նում, որ կառավարութիւնն այդպէս հոգում է
իրանց մասին: Ապա խոստանում են ծախել-
ծախծխել ամեն ինչ և տալ աւելին, քան պա-
հանջում է: Այդ խոստումը հաստատում են
Շէնրկի, Սէմալի, Գելիեզուզանի և Տալուորիկի
իշխանները:

Մի-երկու փոքրիկ պահանջներ ևս դնելուց
յետոյ, թիւրքերը դիմում են բուն գործին:
Նրանք ասում են, թէ՛ կառավարութեանը լաւ
յայտնի է, որ Սասունցիք իրանց լեռներում
ոռւս կօզակներ ունեն պահած, կան և բազմա-
թիւ ոռւսաստանցի լրտեսներ. տաճկական բա-
նակի թիկունքում թշնամու ներկայութիւնն
անհանգուրժելի է. Սասունցիք առանց այլևայ-
լութեան, պէտք է կառավարութեան ձեռքը
տան նրանց: Եւ յետոյ, քանի որ կառավարու-
թիւնն հնքը միանգամայն տարուած է բոլոր
հայերի, նրանց հետ և Սասունցիների խաղաղ
ապրելու հոգսով իբրև վստահութեան նշան՝ Սա-
սունցիները պէտք է հաւաքեն իրենց մէջ եղած
բոլոր զէնքերն ու ներկայացնեն կառավարու-
թեանը:

Դիմակը պատուում է. Սասնոյ իշխանների
համար էլ կասկածի ոչ մի տեղիք չի մնում, որ
ամենից առաջ ցանկանում են իրանց զինաթափ
անել, զրկել պաշտպանուելու բոլոր միջոցներից,
որպէսզի յետոյ առանց նեղութիւն կրելու, հեշ-
տութեամբ մէկ-մէկ բռնեն ու ոչխարի պէս մոր-
թեն: Առանց իրանց սրտի մէջ եռացող վրդով-
մունքը ցոյց տալու, իշխանները սառնասրտու-
թեամբ ու քաղաքավարի պատասխանում են,
թէ՛—Սասնոյ լեռներում ոչ միայն թագըրուած
կօզակներ չկան, այլ և իրանց կեանքում դեռ
կօզակի երես տեսած չկան. ոռւսաստանցի լըր-
տեսների մասին նոյնպէս գաղափար չունեն.
անշուշտ անպիտանին մէկը կառավարութեանը
սուտ տեղեկութիւններ է տուել, և իրանք ու-
րախ կըլինին, եթէ կառավարութիւնը ճշմար-
տութիւնն իմանալու համար մարդ նշանակէ և
գնան այն տեղերը նայեն, որտեղ կօզակների լի-
նեին է կասկածուում: Զէնքերը յանձնելու պա-
հանջի վերաբերմամբ էլ ասում են, որ, չնայե-
լով կառավարութեան փառ վերաբերմունքին
զէպի Տաճկա-Հայաստանի բոլոր տեղերի հայե-
րը, Սասունցիք մի բառով չեն տրտնջացել, պա-
տերազմի սկզբից մինչև այդ օրը Սասուն զուր
տնդից հրացանի ոչ մի ձայն չի լսուել, և հիմա
չեն հասկանում, թէ այդ ինչ նպատակով է, որ
իրենցից զէնք է պահանջում, մինչդեռ ամբողջ

Տաճկաստանում, չհաշուած ի հարկէ զօրքերը, բոլոր տաճիկ ու քուրդ ժողովուրդները զինուած են ոտքից գլուխ, ու նրանց չեն խօսեցնում: Եւ վերջապէս բոլորին էլ յայտնի է, որ Սասուն զինանոցներ չկան, որաեղից կարողանային պահանջուող զէնքերը հանել ու ներկայացնել: Իրանք միայն չախմախլիներ ունին սահմանափակ թուով, որ սակայն ձեռքից տալ չեն կարող, որովհետեւ նրանցով են քշում արտերն ու այդիները փչացնող արջերին: Իսկ կառավարութիւնը չէ՞ որ չէր ցանկանայ մի քանի չախմախլիները ձեռքներից պոնելով՝ Սասնոյ արտերը, ուրեմն և Սասնոյ ժողովրդի ապրուստը, որի համար հոգում է ինքը՝ կառավարութիւնը, յանձնել արջերի խնամատարութեանը:

Այդ նուրբ ու փոքր ինչ հեզնական պատասխանից յետոյ, Մշոյ էֆէնդիները տեսնում են, որ «վայրենի» Սասունցիներին բան հասկացնելը դժուար է, իրենց միասիւսն վերջացրած համարելով, վերադառնում են Մուշ՝ իրանց կրած անյաջողութեան բոլոր մեղքը Սասունցիների վզին բարդելու համար:

IX

Տեսնելով, որ խորամանկութեամբ Սասունցիներին զինաթափ անել ու այնպէս ոչնչացնել՝

չի յաջողւում, կառավարութիւնը վճռում է այդ «սուրբ գործը» գլուխ բերել զէնքի, զօրքի ու քրդերի միջոցով: Այդ նպատակով՝ բոլոր քուրդ ցեղապետներին ու ազգեցիկներին հասկացնում են, որ նրանք կամ պէտք է գնան ուռւների դէմ կռուելու, կամ՝ Սասնոյ լեռները մաքրել վտանգաւոր հայ ազգաբնակչութիւնից:

Քրդերը, ի հարկէ, ուրախութեամբ ընդունում են երկրորդը, և այդ օգտաւէտ «ձեռնարկին» մեծ ախորժակով ու սիրով միանում են նաեւ այն քրդերը, որ կռուի վայրերից փախած՝ իր ժամանակին խնամուել էին Սասունցիներից, նրանց հացը կերել, նուիրաբերած շորերը հագել...

Յունիսի վերջերքին Սասունը կամաց-կամաց շրջապատւում է քրդերի խիտ ու սեղմ շղթաներով: Արևելքից ոտքի են կանգնում Շէկոյենք, Բղըրցիք, Բօզըկցիք ու Ջալալցիք. արևմուտքից խուլփեցի քրդերը՝ իրանց Հիւսէյին և Հասանաղաների առաջնորդութեամբ, Գէնջի և Լիճէի քրդերն էլ՝ իրանց աղաներով. հարաւից՝ դէպի Տալուռլիկ, Մուֆարդլիսի Խաթաի բէյը, Հաշի-Աուշի տղան՝ իրանց քրդերով, Խիանցիք, Պատկանցիք ու Բազրանցիք, հիւսիսից՝ Կորդուք լեռան վրայ գտնուող փոքրիկ զօրախմբերը, — և այդքան ուժերը հերիք չհամարելով՝ Խարբերդից ու Դիարբէքրից տաճիկ, Հալէբից էլ արաբ զօր-

քեր էին առջ քաշել՝ կառավարութեան աչքում փուշ դարձած հերոս, բայց դժբախտ Սասունի կեանքի թելը կտրելու:

Եւ մինչդեռ մի կողմից պատերազմական բոլոր նախապատրաստութիւններն էին տեսնում՝ այդ դիւցազնական կտրիճների լեռներն արիւնով լուանալու, միւս կողմից էլ ջանք էին թափում՝ Մշոյ և դաշտի հաշիւը շուտով մաքրելու, որ պէսզի այդտեղ զբաղեցրած ուժերը ևս կարողանան գործի դնել:

Սասնոյ զբաղութիւնն այդ միջոցներում, ընդհանրապէս, մանաւանդ տնտեսականի կողմից՝ շատ ծանր էր. իր բուն բնակիչների թիւը հասնում էր քսան հազարի. բայց շրջականերից էլ այնտեղ էին ապաստանել դարձեալ երեսուն հազարի չափ, մեծ մասը ծեր, կին ու երեխաներ: Սասունն իր կլիմայական պայմաններով առհասարակ միշտ հացի պակասութիւն էր ունենում, և սակաւապետ լեռնականը բաւականանում էր իր գլգիլով ու կորեկով. ցորեն հացն այնտեղ քիչ ծանօթ մի բան է եղել. բայց ցորեն հացն Սասունցուն ինչին էր պէտք. իր ազատ լեռներն էլ բաւական էին նրան: Եւ գուցէ այժմ լեռնցիներն այնքան մտահոգութեան մէջ չլինէին ու ապրուստի կողմից մի կերպ եօլա գնային, եթէ բերանների թիւը յանկարծ տասնեակ հազարներով աւելացած չլինէին:

Դեռ ձմեռը հացի պակասն զգացուել էր, և Սասունցիք ցանկացել էին հացառատ Մշոյ դաշտից բերել ու պակասը լրացնել, բայց կառավարութիւնն ինչ-ինչ պատրուակներով թոյլ չէր տուել: Իսկ երբ Սասունցիների կասկածները համոզմունք դարձան, թէ՛ անպիտան կառավարութիւնը պատրաստուում է մի անպատմելի ոճիր կատարելու, յունիսին նորից փորձեր են անում շալակներով հացահատիկ հանել լեռները՝ տաղնապի օրերին սովածահ չլինելու համար. բայց այդ ևս չի աջողում, թէ՛ լեռներն և թէ՛ դաշտն արդէն զբաւուած էին հայի արեան ծարաւի հարիւր-հազարաւոր բորենիներով, և մի քայլ անել դէպի դաշտը, առանց կռուի բռնուելու, արիւն թափելու՝ չէր կարելի: Եւ անա Սասունը, մայիսից սկսած՝ մնում է առանց հացի. եթէ դրա վրայ աւելացնենք և՛ աղի սպառուելը, այն ժամանակ հասկանալի կըլինի, որ ոչխարտաւար ունենալն այնքան էլ մեծ առաւելութիւն չէր. — միս՝ առանց հացի ու աղի. այսինքն հիւանդութեան աղբիւր:

Չնայելով այդ ծանր պայմաններին, այնուամենայնիւ՝ Սասունցիք չեն ընկճում հոգով. թովմա Սրժրունու նկարագրած IX դարու հերոսական Սասունը դեռ նոյնն էր, և ազատ արծիւների հոգին էր, որ ճախրում էր այդ աղքատիկ, բայց հպարտ լեռների կատարներին:

Մահից վախենալն ամօթ էր համարում Սասունցին. նա սովոր էր իր պատիւը պաշտպանելու համար զրեթէ անգէն դուրս գալ կատաղի թըշնամու դէմ և ընկնել անհաւասար պայքարում, առանց թուլամորթօրէն մտածելու, թէ՛ կարելի է փախչել, թագնուել ու իր կեանքը փրկել փախչելու գնով:

Եւ այժմ էր, յունիսի վերջին օրերում, երբ երկաթէ օղակների մէջ էին առնուած «Սասնա, ծաւրի» բունը, հացը չէր հասնում, սպառուել էր աղը, Սասունցին ախ ու վաշ չէր անում, թէ՛ հապա ի՞նչ կըլինի մեր զրութիւնը, որտեղ փախչենք, ի՞նչ անենք... Ձէ, նա այդ հարցերն իրան չէր տալիս. այլ կսկծացող սրտով տեսնում էր, թէ իրանց պաշտելի լեռների գլխին ինչ մթին ամպեր են հաւաքուել, և զիտակցելով, որ թերեւ հասել է իր վերջին օրը, ասում էր. — Ո՛չ մի տեղ դուրս գալու հնար չկայ. կառավարութիւնն ուզում է հայերին վերացնել. այդ նրա ծրագիրն է. ուստի կան բանակն ուշացաւ. մենք մեր բախտին ենք, ու կռուենք-չկռուենք՝ միեւնոյն է, մեզ պէտք է կոտորեն քրդերն ու զօրքերը. ուրեմն՝ պէտք է զիմադրել, պէտք է կռուել: — Այսպէս էր մտածում իւրաքանչիւր Սասունցի, սակայն իր սրտի խորքերում միշտ մի գաղտնի, ազօտ յօյս ունենալով, թէ՛ ո՞վ գիտէ, գուցէ այնքան պաշտպանուեն՝ որ դրսից

ուժեր հասնեն ու Սասունը սեղմող օղակները փշրեն...

Ի հարկէ, Սասունն աւելի վատահուժեամբ կըզիմագրաւէր մօտեցող արհաւիրքներին, եթէ նա ուստեստի պաշար բաւականաչափ ունենար, մանաւանդ ռազմամթերք, որ շատ քիչ էր:

Այդ ըոպէին Սասունն ունէր հազարաչափ հրացան, որ տեսակների բաժանելով՝ մօտաւորապէս հետեւեալ թուերն էին ստացւում: — Գրա՝ 350 հատ, Մանլիխէր՝ 75 հատ, Մօսինի՝ 75 հատ, չախմախլի՝ 450—500 հատ: Սրանցից փամփուշտաւոր հրացաններն ունէին իւրաքանչիւրը 250—300-ական փամփուշտ, իսկ չախմախլիների համար վառօդ բաւականաչափ կար, արձիճ՝ շատ քիչ:

Ահա ռազմամթերքի այն ողբալի պաշարը, որով Սասունը պէտք է պաշտպանուէր իր լեռները հոռոտող արիւնարբու գիշակերների վոհմակներից:

Սասունը գէնք չունէր. նրա «գէնք, գէնք» աղաղակները տարիների ընթացքում արձագանք չգտան «բարեմիտ» հայերի սրտում, նրան գէնք չտուին, որպէսզի տաճիկները չզրզուին. և Սասունը, տղամարդ Սասունն այսօր մնացել էր անգէն, վիզը ծռած թշնամու սրին սպասելիս...

X

Երբ Սասունը շրջապատուում է ամեն կողմերից և Մուշն սկսում է հեծել անասելի անիրաւութիւնների տակ՝ քուրդ-տաճկական հօրդանները գործի են կանգնում, առայժմ փոքրիկ մասշտաբով:

Այդ օրերում կատարուած «փոքր» համարուող յարձակումների ու թալանների մէջ աչքի է ընկնում Աղբի գետը:—Քրդերը վրայ են տալիս Անտոքի արևելեան կողմում ընկած Ծովասար գաւառակի Աղբի գետի վրայ ու ոչխարները քշում. «հաւարի» ձայնը լսելով՝ մօտակայքից օգնութեան են վազում մի-երկու խմբակներ, որոնք միանալով Աղբեցիների խմբին՝ հետապնդում են քրդերին, խլում ոչխարները, իսկ թալանչիներին քշում մինչև իրանց գիւղերը: Բայց միւս կողմից էլ պարտուած աւազակներին օգնութեան են հասնում շրջակայ աշիրէթներն ու կռիւր տաքանում է: Այդ հանգամանքը սակայն չի վախեցնում հայերին. նրանք կանգ են առնում ու կռիւն ընդունում, որի ժամանակ քրդերը տալիս են տասնութհինգ սպանուած և շատ վիրաւորներ, հայերը՝ մի սպանուած, երեք վիրաւոր և ոչխարների մի փոքր մասը:

Նոյն այդ օրերում՝ Տալուորիկի իշխան

Համգէն տեղեկութիւն է ստանում, որ Շէկօյենք, Բզըրցիք ու Բօզըկցիք մեծ պատրաստութեամբ յարձակում պիտի գործեն Սասնոյ Շատախում գտնուող Քօփ և Գերմաւ հայ գիւղերի վրայ:— Էլ կասկած չկայ. սկսում են...—մտածում է Համգէն և իսկոյն իր ստացած տեղեկութիւնը հազորդում է Շէնըկ և Սէմալ: Անմիջապէս այնտեղից խմբեր են ուղարկում, որպէսզի օր-առաջ դիրքեր բռնեն, չարիքը թեթեացնելու համար. բայց մինչև նրանք տեղ կը հասնէին, քրդերը մեծ բազմութեամբ ու զարմանալի արագութեամբ յարձակում են գործում Քօփի և Գերմաւի վրայ, մի քանի մարդ սպանում ու բոլոր ոչխարները քշում: Չէնըկից ու Սէմալից օգնութեան եկողները գործի այգալիսի անաջող ելք ընդունելուց չեն յուսահատուում. այլ առաջ խաղալով Կոնկու-Գեօլ կոչուած լեռան դիրքերն են բռնում, այնտեղ դարանի բռնում վերադարձող քրդերին, ջարդում՝ դրանով հասկացնելով թշնամուն, որ Սասունը պատուով պիտի մեռնէ:

Երբ արան-թալանն ու սպանութիւնները զրնալով-գնալով զարգանում են ու վերջնականապէս յայտնի դառնում, որ թոկազերձ գազանը հայի վերջին կաթիլ արիւնն է ուզում լափել, Սասունցիք մտածում են, որ վճռական բոլբոլ Սասնոյ շրջանը պաշտպանելու, երկար խորհրդակ-

ցութիւնից յետոյ՝ որոշում են. — մօտակայ հայ գիւղերը մի կերպ փոխադրել Սասուն և գծել ինքնապաշտպանութեան ան սահմանները, որ մինչև վերջին շնչերին պէտք է պաշտպանեն:

Ինքնապաշտպանութեան սահմանները հետեւեալներն էին. — Տալուորիկի կողմից՝ Գաբլօրն ու Գորշիկը՝ իրանց փէշերով: Շէնըկի և Սէմալի կողմից՝ Գրէքօլ լեռնագագաթը, Մշէնին ու Անտօքի հովիտը: Աղբիւ կողմից՝ Բմբոնին և Անտօք լեռան միւս թևը:

Այդ նախադգուշական միջոցները ձեռք առնելուց յետոյ, Սասունցիք հարիւրերորդ անգամ դիմում են կառավարութեանը, թէ՛ ախր մենք ապստամբներ չենք, կատարում ենք կառավարութեան բոլոր պահանջները, սովից մեռնում ենք, բայց կառավարութիւնը, բացի այն, որ նպաստ չի տալիս, չի էլ թողնում, որ դրսից մեր երեխաների համար հաց բերենք, հասցնենք. քրդերն ու անպարտաճանաչ կառավարական պաշտօնեաները կոտորում, սպանում են հայերին, նրանց կանայք ու աղջկերքը տանում, ապրանքները քղում... միթէ իրանք Օսմանեան կառավարութեան հպատակները չեն. ինչո՞ւ համար են այսքան տանջանքները: Ինչպէս միշտ, այս անգամ էլ պատասխան է ստացւում, թէ՛ այդ բոլորը աւաղակների գործ է, և կարգը խանդավորները, որոնց մէջ հայերն առանձնապէս աչ-

քի են ընկնում, ժամանակին խստապէս կը պատժուեն:

Սասունցիք ի հարկէ գիտէին, որ գարշելի կառավարութիւնից ուրիշ տեսակ պատասխան սպասել չէր կարելի և ոչ զարմանում են, ոչ էլ սարսափում այդ պատասխանից. այլ սպասում էին, թէ՛ թող լինի, ինչ որ լինելու է: Միևնոյն ժամանակ էլ գրախ գիւղերը քրդերի ճնշման տակ՝ կամաց-կամաց հաւաքւում են զէպի կենտրոնական վայրերը, իսկ Սասնոյ նոր կազմակերպւած ինքնապաշտպանութեան մարմինը զանազան կէտերում ուժեղ պահակներ է դնում, որպէսզի թէ՛ գիւղացիները հնարաւորութիւն ունենան բերքերը հաւաքելու և թէ՛ իրանք իրազեկ լինին շուրջը կատարուող շարժումների մասին:

Բայց կառավարութիւնն էլ պարապ նստած չէր. նա Մուշն ու Մշոյ գաշտը իր արիւնոտ մագիլների մէջ առնելով՝ բոլոր նախադգուշական միջոցները գործադրել էր, որպէսզի Սասունը ոչինչ չիմանայ, թէ ինչեր են կատարւում Մուշում, կասկածելով, որ քաջ լեռնականներն իրենց եղբօրց դժոխային տանջանքների լուրն առնելով՝ կարող են իջնել լեռներից ու, թէկուզ ժամանակաւորապէս՝ դժբախտ դաշտացիների բնաջնջման գործը խանգարել: Եւ մինչգեո Սասունցիք լսկ ինքնապաշտպանութեան

ծանր հոգեւերով տարուած՝ ամբացել էին լեռներում, և ըստ հնարաւորութեան, որոշուած կէտերը հսկում, կառավարութիւնն էլ, չհաշուած քրդերը, իր բազմաթիւ պահակախմբերն էր զանազան յարմար տեղերում դարան մտցրել, նոյնիսկ Կորդուք և Ծիրնկատար լեռանց որոշ տեղերում խրամատներ փորել տուել ու զօրքերով լքցրել, որպէսզի անմիջապէս կարողանան զանազան անակընկալների առաջն խնդին և եթ առնելու, կամ թէ՛ հէնց այդ խրամատները բազա դարձնելով, որոշուած ժամին յաղթական արշաւանքն սկսելու զէպի Սասուն, զէպի Օսմանեան անարգ կառավարութեան խորթ հպատակները, որոնք պատերազմի երկար ամիսների ընթացքում՝ ոչնչով առիթ չէին տուել իրենց վրայ կասկածելու և որոնց յանցանքը միայն հայ լինելն էր:

Այդ արհաւիրաց օրերում Սասուն էին գտնուում երկու յայտնի գործիչներ, Ռուբէնը և տաճկական պարլամէնտի անդամ Փափազեանը. երկուսն էլ փորձուած ու հմուտ, երկուսն էլ չափող ու կշռող, հեռատես մարդիկ՝ գիտէին, որ բաւական է ապստամբական, կամ հակակառավարչական մի սխալ քայլ, որպէսզի առիթ տրուի խելագարուած զազանին՝ իր ճանկերը հայի թրպրտացող սրտի մէջ խրելու. այդ պատճառով բոլոր միջոցները գործադրում էին՝ Սա-

սունն ազատ պահելու ամեն տեսակ «յանցանքներից». և այդ յաջողում էր նրանց. նոյնիսկ կառավարութեան բացարձակ պրովօկատորական քայլերը, որ գործադրում էին Սասունը հանելու խոհեմութեան սահմաններից, խորսակում էին՝ զարկուելով հայերի հաստատուն լօյալութեանը:

Երկերեսանի, խորամանկութեան բովով անցած տաճիկ կառավարութեան հետ գործ ունենալը մի կատարեալ մարտիրոսութիւն է. հաւկաւոր է զիմացինիդ մտքերը ոչ թէ հասկանալ, ըմբռնել, այլ գուշակել. թարգմանել նրա քաղցր ժպիտները, լուծել նրա ակնարկներն ու այնպէս պատասխանել, որ իւրաքանչիւր խօսքն իր նըշանակուած տեղն ընկնի: Ռուբէնն ու Փափազեանը, ինչպէս Տաճկաստանի ուրիշ շատ գործիչներ, իրանց բանակցութիւնների միջոցին՝ միանգամայն արժանի գտնուեցան իրանց պատասխանատու դերին ու պատուով դուրս եկան:

Երբ զրութիւնը սարսափելի է դառնում ու Հայաստանի բռնի մահացման ուրուականը պատկերանում է հորիզոնում, թէ՛ Սասնոյ գործիչները և թէ՛ ժողովուրդը դարձեալ զսպում էին իրանց, դարձեալ սուր կերպով չէին ուզում արտայայտել իրանց զայրոյթը, որովհետեւ շատ պարզ տեսնում էին, որ իրանք շրջապատուած

են առատօրէն զինուած բիւրաւոր թշնամիներով, իսկ Սասունի չախմախիւները, որքան էլ կարիճ մարդկանց ձեռքում՝ աշնուամենայնիւ՝ չախմախիւներ են:

Այդպէս էին մտածում նրանք և այդ զիտակցութիւնից բղխած ուղղութեամբ էլ գործում էին: Սակայն այդպէս չէր մտածում ստոր դաւադիրը, տաճիկ կառավարութիւնը. նա չէր կարող իր բռնակալական պետութեան սահմաններում հանդուրժել մի առողջ, յառաջագիմելու ընդունակ տարրի գոյութիւնը. նա վճռել էր իր ժահրոտ, փտող օրգանիզմից մի հարուածով կտրել ու մեռցնել միակ կենդանի երակը. վճռել էր, ու՝ անկարելի է, պէտք է կտրէր:

Եւ ահա ամիսների ընթացքում տեղի ունեցող, իբրեւ թէ «մասնաւոր» բնաւորութիւն կրող «փոքրիկ» յարձակումները, թալանն ու սպանութիւններն սկսում են դուրս գալ նոյն իսկ Տաճկաստանի համար «սովորական գրութիւն» անուն կրող սահմաններից, աւելի մեծանալ, աւելի զարգանալ ու հասնել կատաղութեան արտաժամին:

XI

Ծովասար գաւառակի Աղբի գիւղը Սասուն քաջուելով՝ ժողովրդի մի մասը դեռ մնացել էր

աշտեղ, իր քրտինքի պտուղ բերքը մի կերպ հաւաքելու: Այդ բանը դուր չի գալիս հայակեր քրդերին և մի ստուար խումբ յարձակում է գործում յունիսի 29-ին, մնացած հայերին յանկարծակիի բերելով՝ ամբողջովին կոտորելու: Սակայն Աղբեցի միքանի զինուած տղամարդիկ ընդառաջ են վազում ու սկսում մաքառել, մինչև որ մօտակայքից օգնութեան են համնում էլի մի-երկու զինուած խմբակներ, և առանց մի զոհ տալու՝ մեծ ջարդ տալիս քրդերին, որոնց մի փոքր մասը միայն կարողանում է փախչել ու ազատուել:

Յունիսի 30-ին թիւրք ոստիկանական խումբըն ու տաճիկները Կորդուք սարի վրայ պատահում են մի հայ խմբակի. ընդհարում է տեղի ունենում և հայերը սեղմում են տաճիկներին ու նրանց փախցնում դէպի Մուշ:

Առհասարակ՝ Կորդուքում և Ծիրնկատարում այդպիսի ընդհարումներ շատ էին տեղի ունեցել և թիւրքերը միշտ փախել էին:

Յուլիսի 1-ին, ճիշտ այն օրը, երբ տաճիկ կառավարութիւնն իր արիւնոտ դանակն էր դրել Մշոյ կոկորդին ու գաշտում հազարաւոր զոհերի բառաչիւնն էր երկինք բարձրանում, Սասունն էլ այս ու այն կողմից է գրոհների ենթարկւում, և այդ գրոհներն այն պատճառով էին կատարւում, որ Սասունը միայն իրանով զբաղուի,

ժամանակ ու հնարաւորութիւն չունենայ Մուշին օգնութեան հասնելու: Ըստ երևոյթին՝ կառավարութիւնն այն համոզման էր, թէ անառիկ Սասունն ռազմական տեսակէտից այնքան է պատրաստուած, որ բացի իրան պաշտպանել կարողանայուց՝ դեռ միւս վտանգուած տեղերին էլ կարող է ռազմիկներ ու ռազմամթերք հասցնել:

Այդ օրը, յուլիսի 1-ին, ի թիւս ուրիշների, տեղի է ունենում և՛ Կորդուքի դէպքը: Սասնոյ պահակները Կորդուք—Տալաւներ կոչուած տեղն իր սովորական պտոյտ կատարելու ժամանակ՝ անակընկալ յարձակման են ենթարկւում թիւրք կանոնաւոր զօրքերի կողմից, որ դարանամուտ էին եղել Կորդուքի կատարին, Ալմանցոց աղբիւրի մօտ: Պահակախումբը սակայն չի շփոթւում այդ անսպասելի գնդակների տարափից. կռիւն ընդունում է և զիրքեր բռնելով՝ անցնում պաշտպանողականի: Ուժեղ հրացանաձգութեան ձայնի վրայ՝ օգնութեան են դալիս Շէնրկի խումբերը, և վարձեալ առանց մի զոհ տալու, միացեալ ուժերով քշում զօրքերին, սպանում 10—15 հոգի և մի քանի հրացաններ էլ զրաւում:

Յուլիսի 2-ին ընդհարումներն ու յարձակումներն աւելի թափ, ուժեղութիւն են ստանում. Սասունցիների կողմից մեծ աչալըջութիւն էր պահանջում, որպէսզի թշնամին չկարողա-

նար ներս խուժել ինքնապաշտպանման համար նախագծած ու հսկողութեան սահմաններից. իսկ այդ սահմանները, մարտիկ ուժերի համեմատութեամբ՝ բաւական ընդարձակ էին. հարաւից հիւսիս՝ 12 ժամ, արևելքից արևմուտք՝ 6 ժամ տարածութիւն, կտրտուած հովիտներով, ձորերով ու դժուարանցանքի լեռնաղիւններով: Այնուամենայնիւ, չնայելով տարածութեան համեմատական ընդարձակութեանն ու հաղորդակցութեան վատ պայմաններին, այդ օրը լեռնականները մեծ յաջողութեամբ յետ են մղում ամեն կողմերի վրայ եղած յարձակումները, առանց իրենց զիրքերից թզաչափ յետ նահանջելու: Այդ պարագան յոյս է ներշնչում Սասունցիներին, որ դեռ երկար ժամանակ պիտի կարողանան զիմադրել կառավարութեան նիւթած դաւերին:

Կէսօրից յետոյ, ժամը 2-ին մօտերը, երբ քիւրդ ու տաճիկ վոհմակներին յետ քշած բոլոր կէտերից՝ Սասնոյ պահապանները հանգստանում էին, Մշոյ կողմից թնդանօթների խուլ, բայց և անաւոր բռնիւններն են տարածւում: Սասնոյ բարձունքներին թառած մարտիկներն ու հովիտներում պահուած բազմահազար ժողովուրդը կարծես մի հրեշտակային շեփորի հնչիւնները լսած՝ շնչառութիւններն զսպած՝ լարում են աւանջնին, բաբախուն սրտով որսում այդ ձայներն ու միմեանց աշխատում հաւատացնել, որ ուստ-

կան բանակն է այդ, հասել է Մուշ ու հարուածում է թշնամուն: Թէ չէ՝ էլ ինչո՞ւ համար և ո՞ւմ դէմ պէտք է այդպէս յանկարծ որոտան թնդանօթները... Դժբախտները չգիտէին, որ այդ բոպէին Մշոյ արեւն է խաւարում, արիւն է հոսում քաղաքի փողոցներով և թնդանօթներն ուսական չեն, այլ տաճկական՝ ուղղած սարսափահար կին ու երեխաների, տառապանքից տնքացող հայ ժողովրդի գլխներին ու աներին...

Իրիկնադէմին պարզւում է «թիւրիմացութիւնը». Մուշի ու Գառնիկ գիւղերի ուղղութեամբ քուլա-քուլա բարձրացող ծուխն ու հրակայական, զանազան կէտերից գէպի վեր շարտուող բոցերը Մասունցիների սրտում կասկած են առաջացնում, թէ՛ այդ տաճիկներն են, որ հայերի բնաջնջումն են սկսել քաղաքում և դաշտում: Իսկ կասկածը շուտով ճշմարտութիւն է դառնում. կոտորածից ճողոպրած մի քանի հոգի լեռներն են հասնում ու զարհուրելի աղէտը բոթում Մասունցիներին:

Բորբոքւում, եւ է գալիս կտրիճ լեռնականների սիրտը. զանազան կողմերից ձայն է բարձրանում՝ վերցնել բոլոր զինուած ուժերն ու յարձակուել, եթէ ոչ յաղթելու, գոնէ արժանաւոր վրէժ լուծելու խելագարուած տաճիկներից, Մուշն աւերողներից. բայց սառն դատողութիւնը յաղթում է և նրանք գտնում են, որ դաշտն իջ-

նելով՝ քաղաքն ու դաշտի 102 գիւղերն իրանք փրկել չպիտի կարողանան, ճիշտ է, գուցէ հազարաւոր գազաններ կը գլորեն, սակայն իրանք էլ կընկնեն, և այն ժամանակ Մշոյ հետ Սասունն էլ կըկորցնեն՝ այնտեղ ապաստանած հիսուն հազար ժողովրդով: Ուստի և որոշում են մնալ լեռներում, գիրքերն էլ ամրացնել, մտածելով, որ դաշտի, քաղաքի հայութեան կոտորածից ազատուած մասը, ինչպէս էլ լինի, գէպի լեռները պիտի գիմէ և Սասունն է լինելու, որ նրանց պէտք է պաշտպանէ իր լեռներում, մինչև մի լոյս ծագելը:

XII

Մշոյ և դաշտի հարցը լուծելուց յետոյ, կառավարութիւնը ծանր հոգսից ազատուածի պէս, մի թեթեացած շունչ է քաշում: Էլ ո՞վ կարող էր նրա առաջը կանգնել. ուսաները Բիթլիսի ուղղութիւնից նահանջած, Մուշն՝ աւերուած. — թեւերը միանգամայն բացուած էին, և այժմ վստահ կերպով կարելի էր վճռական հարուածներն իջեցնել Սասնոյ գլխին:

Այդպէս էլ անում են. Մշոյ կոտորածով զբաղեցրուած ուժերը ևս կենտրոնացնելով Սասնոյ գէմ, երկու հակառակորդներ դէմ առ դէմ են կանգնում, մէկը՝ կոտորելու, բռնաբարելու

տենչանքով հիւանդացած, միւսը՝ ինքնապաշտպանութեան գաղափարով համակուած: Եւ սկըսում է մի կատաղի ճակատամարտ անթիւ, անհամար գիշակերների ու մի բուռն կտրիճների միջև:

Յուլիս 5-ին զօրքերն ու քրդերը միահամուռ մի գրոհ են տալիս Սուրբի կողմից՝ ցանկանալով Սասունը միանգամից վերցնել, սակայն իրանց հաշուի մէջ նրանք սխալուել էին. Սասունցիք վճռական թափով մի այնպիսի հակաշարժակում են գործում, որ թշնամին բազմաթիւ զիակներ թողնելով ու վերաւորներ տալով՝ փախչում է աւելի հեռու, քան թէ առաջ էին դիրքեր բռնել:

Այդ անյաջողութիւնից զայրացած՝ կանոնաւոր զօրքը, Պատկանցի, Խիանքի, Բակրանցի քրդերն ու այլ աշիրէթներ մի նոր, աւելի ուժեղ, աւելի յամառ յարձակում են սկսում, այս անգամ Գարրօշի կողմից, որ Սասնոյ ինքնապաշտպանութեան բանալիներից մէկն էր: Յուլիսի 6-ի առաւօտեան ժամը 8-ին սկսուելով՝ կատաղի կռիւն անընդհատ տեւում է մինչև ուշ գիշեր և վերջանում թշնամու պարտութեամբ, որ Գարրօշի առաջ բաւակոհանջափ զիակներ թողնելով՝ նահանջում է:

Հետեւեալ օրը տաճիկ հրամանատարները կրօնը մղելու նոր եղանակ մշակելով՝ հրամայում

են՝—պատուել Սասունցիների շղթան Շէնրկի կողմից, սեպածե մօտեւ հայերի բռնած տարածութեան մէջ և երկու մասի բաժանելով՝ մասմաս ջարդել հայերին: Այս որոշումից յետոյ, ընդերվում ունենալով Մշոյ գաշաի հայերի արիւնը լիզած տասնեակ հազարաւոր գաղաններ՝ յառաջախաղ տաճիկա-քրդական վաշտերն ուժեղ թափով առաջ են նետուում, հայ զիրքապահներին հանում զիրքերից ու մօտենում Շէնրկին: Ռազմագիտական նկատումներով՝ Շէնրկն այդ ժամանակ դադարեւած էր, և հայերի աւելի կարող զիրքերը գիւղից հեռու, յարմար տեղեր էին շինուած: Այդ պատճառով թշնամին առոնց առանձին լուրջ դիմադրութեան հանդիպելու, հասնում է Շէնրկ և սկսում աները վառել: Երբ աների ծուխն սկսում է բարձրանալ ու Սասնոյ արծուիկների բոյները մոխրի վերածուել, զիրքերում զանուող Շէնրկցիների սիրաբ թուեղ է եխում ու նրանք կանչում են. —Մեր աները մեր աչքի առաջ վառեն և մենք հեռուից թամաշան անենք. —ասում են ու երկու տասնեակ, միանալով աւելի ներքե գտնուող զիրքերի փոքրաթիւ մարտիկներին, լեռներից այնպիսի արագութեամբ ցած նետում և այնպիսի յաջող կրակի բռնում բորենիներին, որ անիրաւները չամաչելով իրանց ունեցած թուակոն և զինական մեծապէս խոշոր առաւելութիւնից, սկսում

են փախչել փոքրաթիւ հայ կտրիճների առաջից՝ իրանցից զլորուածների զիակաները կոխելուտելով:

Այդ օրը սակայն հայերն էլ են կարուստ ունենում, սպանւում է մէկը, վիրաւորւում՝ չորս հոգի:

XIII

Սասունցիք նախաաեսել էին, որ կռիւր կարող է երկարատե լինել, օգնութիւնը դրսից կարող է ուշ հասնել, այդ պատճառով՝ պաշտպանողական երկու գիծ էին ընտրել ու դիրքեր սահմանել, որպէսզի առաջին գիծը ձեռքից տալուց՝ դիմադրեն երկրորդում: Եւ չէին սխալուել. կռիւր վճռական էր ու անընդհատ: Յարատե յարձակումներով՝ թշնամին Տալուորիկի կողմից կարողանում է թանգ գնով հայերի մի քանի դիրքերը խլել և այնտեղ հաստատուել: Այդ հանգամանքն ստիպում է Սասնոյ այդ մասում ապաստանած ժողովուրդը կռուի անմիջական վայրից հեռացնել դէպի Անտոքայ լեռնահովիտները:

Յուլիսի 15-ին՝ չընդհատուող կռիւնները հասնում են կատաղութեան վերին աստիճանին: Մշից բերած ու մեծ դժուարութիւններով տեղ հասցրած լեռնային թնդանօթները Սասնոյ բարձրութիւններում հաստատելով՝ թշնամին սկսում է ուժակոծել հայերի դիրքերը, և թնդանօթնե-

րի բօմբիւնները հազար-հազար արձագանգներով տարածւում են կոհակաւոր լեռների բոլոր անկիւններում: Սակայն թնդանօթները ևս չեն կարողանում փախեցնել Սասունցիներին ու ճնշող տպաւորութիւն թողնել, ընկճել նրանց ազատ ոգին. հայ կռուողները մահն անարգելով՝ հերոսական խիզախումներով կարողանում են շատ տեղերից քշել անարգ թշնամուն, իսկ Սէմալցիների տաանեակները մի աննկարագրելի յարձակմամբ յետ են մղում իրանց վրայ խոյացող քիւրդ-տաճիկներին, և հարուած հարուածի յետեից հասցնելով՝ նրանց հալածում բաւականին տեղ:

Միւս ճակատի վրայ էլ Գարլջեօգի գայմագամը ուստիկաններով ու համիդիէներով, Գէնջօյի ասկեար և Բօզըկցի բազմաթիւ քրդերն էլ հետը, ռազմամթերքի խոշոր պաշարով՝ Տալուորիկի գիծն է ուզում գրաւել, և այդ նպատակով էլ յարձակւում է Տալուորիկի գիւղերից (Թաղերից) մէկի, Հոսնուտի վրայ, որ Սասնոյ ահեղ հրաշալիքներից մէկի, Փոֆու-Քարի մօտերն է ընկած: Հոսնուտի գիծը պահում էր Տալուորիկի իշխան Համգէն տաան հոգով, որոնց մի մասը գինուած էր չախմախլի, միւսը՝ գրա հրացաններով:

Համգէն արիութեամբ դիմադրում է և վեց ժամ շարունակ կռուելով՝ թշնամուն թոյլ չի

տալիս առաջ անցնելու. բայց վերջը տեսնելով, որ ուժերն սպառուում են, օգնութիւն է խնդրում Գաբլօրի ղերքից. այնտեղից իսկոյն քսան հոգի օգնութեան են գալիս, նոյնպէս զինուած զբաներով ու չախմախիւներով: Երկու օր տեւում է այդ անհաւասար, զարմանալի կռիւը երեսուն կտրիճների և քսան, երեսուն անգամ թուական կտրիճների և քսան, երեսուն անգամ թուական տաւելութիւն ունեցող թշնամու միջև: Մարտիկները երկու օր սոված, ծարաւ, անքուն, սակայն առանց մի վիրաւոր անգամ տալու, իրանց ղերքերը ձեռքից բաց չեն թողնում, թշնամիներից շարունակ ղիակներ փռելով: Բայց հազիւ նրանք Հոանուտի ղերքերն ապահովեցրել էին, որ Անտոքից հասնում է քրտինքում կորած մի սուրհանդակ՝ հրահանգ բերելով, թէ՛ իսկոյն թողնել Հոանուտի առաջին զիճն ու անցնել դէպի Գաբլօր, ուր գրութիւնը չափազանց լուրջ է, և թշնամին սոսկալի կրակ տեղալով թնդանօթներից ու հրացաններից՝ արդէն Գաբլօրի հայկական ղերքերն է քարուքանդ անում:

Բայց մենակ Գաբլօրը չէր փոսնալու. թշնամին սեղմ շարքերով՝ բոլոր գծերի վրայ մեծ ուժեր էր կենտրոնացրել և անվերջ համազարկերով ու գրոհներով ծեծում էր հայերի ղերքերը՝ յուսալով, որ մի որևէ տեղ կը պատուեն ինքնապաշտպանութեան գիծը, ներս կը

խուժեն, կը շփոթեցնեն հակառակորդին ու... հարցը կը փակուի: Սակայն Սասունցիք մի գիւցազնական տղամարդութեամբ՝ ամեն կողմում ի դերե են հանում վայրենիների գազանական ցանկութիւնները, ու պոզատակուել, կարճ հարուածներով թշնամուն ստիպում աւելի ապաստան տեղեր մտնելու:

Մինչև յուլիսի 18-ը գրոհ՝ գրոհի, յարձակում՝ յարձակման յետևից. անվերջ, անընդհատ. զիշեր ու ցերեկ: Սասնոյ լեռներում մի զարմանալի պայքար էր տեղի ունենում. աշուղներից երգուելու, Հովերոսի գրքերին արժանի մի սքանչելի զիւցազներգութիւն: Մի բուռն քաջեր, լցուած սրբազան կրակով, նոյնպէս անընդունելի, ինչպէս իրենց վիթխարի լեռները, լեզենդական հսկաների նման ծառացել էին իրանց վրայ արշաւող յովազների ալիքների դիմաց. ալիքներ, որ գալիս էին անվերջ յորձանքներով, զարկում ժայռերին, փշրում, յետ խաղում:

«Անհաւասար կռիւ». այս բառերը շատ քիչ են՝ բնորոշելու Սասունում տեղի ունեցած դէպքերը:

Մի կողմը Սասունը, միւս կողմը՝ թշնամին: Թշնամին իր տրամադրութեան տակ ունէր կանոնաւոր զօրք, քրդական աշիրէթներ, ոտքից գլուխ զինուած՝ «խաղաղ» մահմեդական ազգաբնակչութիւն. և այդ բոլորի թիւը տասնեակ-

հագարներով չպէտք է հաշուել, այլ շատ ու շատ աւելի. ի հարկէ, նրանք բոլորը «գործի» մէջ չէին, բայց պէտք եղած դէպքում պատրաստ, ձեռքի տակ էին: Թշնամին ունէր թնդանօթներ, անթիւ հրացաններ և ռազմամթերքի անվերջ պաշար: Բացի այդ՝ նրա թիկունքը բաց էր Մանագիւղի մինչև Պօլիս, Տրապիզոնից մինչև Արաբիա. փամփուշտը պակասէր՝ հարիւրաւոր բեռներով կրհասցնէր. մարդը պիտի պակասէր, հացը պիտի սպառուէր...

Իսկ Սասունը... հագարի չափ զանազան տեսակի հրացաններ, որոնց մօտ կէսը՝ չափամախի. փամփուշտների մի ողբալի քանակութիւն. խնայողութիւն՝ չեղած հացի. աղը՝ երկրորդ ամիսն էր, որ չկար, ոչ մի ճանապարհ՝ ռազմամթերք, ուտեստ ներմուծելու. չորս կողմից կուռ շրջապատուած մահմեդական հօրդաներով... մի խօսքով՝ արիւնարբու զազանների ովկիանոսում՝ մի հազիւ նշմարելի կղզի, որտեղ հաւաքուել էին յիսուն հագարի չափ՝ Տաճկաստանում հայ անունը կրելու դժբախտութիւն ունեցողներ, իրանց կեանքն ապաւինելով Սասնոյ լեռներին ու մի հագար քաջերին: Ի հարկէ, Սասունը կարող էր այդ պայմաններում տասը, տասնուհինգ հագար մարտիկներ դուրս բերել կռուի ասպարէզ, եթէ նոյն չափով էլ ռազմական պաշար ունենար, և այն ժամանակ

կռուի վախճանն անշուշտ ուրիշ տեսակ կրլինէր. սակայն նրան չէին տուել, նրան անգէն էին թողել, վախենալով, թէ՛ տաճիկները կը գրգռուեն, եթէ զէնք տան...

Եւ այդ սոսկալի պայմաններում անգամ Սասունը չվարանեց ձեռքը ճարուած զէնքին մեկնելու, երբ «քրիստոնէութեան յաւիտենական թշնամին» իր արիւնոտ դանակը մեկնեց դէպի նրա տղամարդ կուրծքը:

Երեք ամսից աւելի էր, որ Սասունը շրջապատուել էր փաստօրէն և շարունակ կռուի մէջ էր. իսկ վերջին երկու շաբաթը՝ կեանքի և մահուան խնդիրն էր որոշուած հայ արծուիկների օրբանում: Հեռու, ինչ որ միջին, անծանօթ լեռներում՝ մի բուռն կտրիճներ ծառ-ծառ էին լինում, ժայռերը մազլցում, քարերը պոկում, հանգիստն ուրացած, քունը մոռացած՝ գերհերոսական ճիգեր գործ դնում իրանց պատիւը փրկելու, իրանց երեխաների կոկորդից յետ մղելու նամարդ թշնամու սուր դանակը, իրանց կանանց ու քոյրերին ազատելու սխալ ստեղծագործութեան զարշնի պտուղ քրդերի բռնաբարանքներից. սակայն ո՞վ էր լսում այն մոնչոցը, որ Գաբլօրի բարձունքներից էր թնդում, ո՞վ էր տեսնում այն տիտանական պայքարը, որ Սասնոյ լեռներում էր տեղի ունենում. ո՞վ էր սքանչանում, ո՞վ էր զարմանում ապրելու իրաւունքի

գաղափարի պաշտպանման այն վտեմ, գերագոյն թռիչքով, որ բանաստեղծներն ուրիշ գէպքերում բառեր չեն գտնում նկարագրելու համար... Ոչ-ոք, ոչ-ոք չէր տեսնում ու չէր լսում, իսկ լսողների ձեռքերը գոսացած, բոլոր «չէզոքները» օգնութեան ձեռք մեկնել չէին ցանկանում, և Սասունը մնաց իր ճակատագրին...

Մնաց իր ճակատագրին, բայց չնկճուեց հոգով, չյուսահատուեց ու վճռեց.— եթէ մեռնել, ապա՝ ոչ սողալով, ոչ աղերսելով, այլ՝ ընկնել պատուով:

Յարատե յարձակումները թշնամու կողմից՝ պատասխան էր պահանջում հակառակ կողմից. և Սասունցիք պատասխանում են ըստ արժանւոյն. սակայն հետզհետէ սպառուելու վտանգին է մօտենում առանց այն էլ խիստ սակաւ՝ փամփուռների պաշարը. հրացան կար, որի համար փամփուռտ մնացել էր հարիւր հատ, հրացան կար՝ յիսուն, հրացան էլ կար, որ այլեւ ոչ մի փամփուռտ չունէր. ի՞նչ անել, որտեղից գտնել. զինանոց չունին, ամբարներ չունին: Մնում էր միայն մի ճանապարհ.— անարգել մահը. զարկել խփել թշնամուն, և նրանից խլած զէնքերով՝ պաշարն աւելացնել:

Այդպէս էլ անում են. լցուած վրէժխնդրութեան կրակով՝ Սասունցիք տեղ-տեղ սկսում են դուրս թռչել զիրքերից, շանթակիր, կարճ հաւուածներ հասցնել թշնամուն, ու, յաջող գէպ-

քում՝ վերագառնալ զիրքերը, զինուած նոր հրացաններով ու փամփուռների պաշարով:

Սակայն ինչ էլ լինէր, հերոսութեան ինչ տեսակ օրինականներ էլ տային, Սասնոյ բախտը վճռուած էր. նա, թէև պատուով՝ բայց պիտի մեռնէր կամ ընկնէր արնաքամ... Քառներորդ զարում, քաղաքակիրթ աշխարհի քթի տակ պիտի ընկնէր Սասունը, դարեր ապրած, դարերի տառապանքների տակ իր ազգային ֆիզիօնոմիան պահպանած, քաղաքակրթուելու ընդունակ, արի Սասունը... և այն էլ ուժ... մարդկութեան յաւիտենական պատուհաս, ամեն մի կուլտուրայի դահլճ, վայրենի քրդերի ու տաճիկների ձեռքից:

XIV

Յուլիսի 18-ից սկսւում է ճգնաժամը...

Տաճիկ զօրքերն ու համիդիէները ռազմական բոլոր կարգ ու կանոններով անընդհատ յարձակումներ են գործում հայերի խառնուած զիրքերի վրայ. միւս կողմից էլ աշիրէթներն են հարայ-հրոցով, հրացանաձգութեամբ ու ժեղ ցոյցեր անում՝ հայերին շփոթեցնելու ու նրանց ուշադրութիւննին գլխաւոր զիրքերից ուրիշ կողմ գրաւելու: Սակայն՝ ապարդիւն ջանքեր. կտրիճ զիրքապահները կրծքնին դէմ տուած

Թշնամու խրոխտ գրոհումներին, ծայրայեղ դէպքում միայն փամփուշտներ բանացնելով՝ ամեն անգամ յետ են մղում քրդերին ու զօրքերին, նրանց մեծ կորուստներ պատճառելով։

Չորս կողմից ահեղ շղթաներով շրջափակուած հերոսների պողպատակուռ զարկերի առաջ տեղի տալով՝ տաճիկ հրամանատարները լաւ են համարում՝ հայկական միւս զիրքերն ումբակոծելը շարունակելով հանդերձ, ջանք գործ դնել՝ Գաբլօրը, այդ սպառնական ու առաջնակարգ զիրքը խլելու հայերի ձեռքից, որից յետոյ զրութիւնը բոլորովին կը փոխուէր։

Յարմար զիրքերում սարքած թնդանօթներն սկսում են Գաբլօրի ճակատը ծեծել ուժգնօրէն. ումբերի զարկած տեղերը փոսեր են գոյանում, քարերի կտորտանքներն են երկինք թռչում ու նորից ցած թափւում զիրքը պաշտպանող հայերի գլխներին. թնդանօթների որոտոցները, հազարաւոր հրացանների ճայթիւնները, անթիւ թշնամու խրախուսական գոռոցները բռնում են շրջակայքը. կարծես Սասունը դժողքի վերածուած՝ կրակ ու պողպատ էր դուրս ժայթքում տարաբախտ հայերի համար...

Երկար ժամանակ փոթորկային կրակ տեղալուց յետոյ, զօրքերն «արշ» հրամանը լսելով, միւս կողմից էլ քրդերը առաջ են նետւում մի այնպիսի թափով, որ թւում էր, թէ ոչ միայն

Գաբլօրը, այլ Սասնոյ բոլոր լեռները պէտք է խորտակուին այդ տարերային, արհաւիրաց փոթորկի զօրաւոր զարկից։ Սակայն Սասունցիք, փառք նրանց, չեն ընկրկում, չեն փախչում «աման» կանչելով. այլ, չնայելով նրան, որ ռազմամթերքը հատնելու վրայ էր, մի անօրինակ անձնուրացութեամբ «կեցցէ» ու «մեռնենք պատուով» ազազակներով դուրս են թռչում դիրքերից և ուժգին հակա-հարուածով թշնամու յարձակման թափը կտորելով՝ զիրքերը փրկում։ Սակայն թշնամին ուշաբերուելով՝ նորից է յարձակւում, և մի բուռն հերոսներն այս անգամ տեղի են տալիս մարդկային ալիքների ու գոնդակների սարսափելի տարափի առաջ։ Գաբլօրը, Սասնոյ այդ խրոխտ պատանէշն անցնում է զօրքերի ու քրդերի ձեռքը, իսկ այդտեղի հայերը նահանջելով՝ անցնում են Աւխօրքնի, որ ինքնապաշտպանութեան երկրորդ գիծն էր, Գաբլօրի դէմ ու դէմ։

Գաբլօրի անառիկ զիրքը վերցնելուց յետոյ, թշնամին արբեցած այդ մեծ յաջողութիւնից, անմիջապէս 2 յաջորդական յարձակում է գործում Աւխօրքնու վրայ՝ այդ գիծը ևս գրաւելու, բայց 2 անգամն էլ բազմաթիւ զիւղներ թողնելով կռուի ասպարիգում՝ յետ է քաշւում և ամրանում Գաբլօրում։

Այդ անյաջողութիւնը սակայն չի յուսահա-

տեցնում սուլթանական մասգործներին. մութը թեկոխելուց՝ նրանք վերսկսում են համազարկերն ու գրոհները՝ յուսալով, որ գիշերն աւելի մեծ յաջողութիւն կունենան: Վերին աստիճանի ծանրանում է Աւխորքնու մարտիկների դրութիւնը. դեռ սկզբից ի վեր՝ ամեն մի կռուող այն ժամանակ էր հրացանն ի նշան բռնում, երբ համոզուած էր լինում, թէ արձակած գնդակը թշնամու կամ ճակատը պէտք է փշրէ, կամ կուրծքը ծակէ. որովհետեւ փամփուշտները խօտալրակներով չէին. այժմ այդ փամփուշտներից միայն տասնեակներ էին մնում, իսկ Աւխորքնին ձեռքից տալուց՝ կոտրւում էր հայերի մէջքը: Այդ վտանգը փորձառու աչքով չափում է Սասնոյ ինքնապաշտպանութեան ոգին, Ռուբէնը, և Անտրից ու Ըմբռնուց օգնութեան է ուղարկում սկզբում մի, ապա էլի երեք տասնեակ, այս անգամ բոլորը զինուած մօսինի, դրա և մանլիխէր հրացաններով:

Հրաշք է թւում այս բոլորը. Գաբլօրում, իսկ յետոյ Աւխորքնում հայ կռուողների թիւը 60-ից գէնը չէր անցնում. բայց նրանք այդ կատաղի կռիւներում, բացի այն, որ սպանուածներ չէին ունեցել, դեռ կարողացել էլ էին պաշտպանուել երկար ժամանակ. իսկ այժմ, երբ դառնում են 90 հոգի, ժայռի պէս են կանգնում փոթորկի առաջ, և շատ անգամ քարեր

զլորելով, ձեռնամերձ կռուի դիմելով՝ դիրքերը պաշտպանում, մինչև լուսանում է յուլիսի 19-ը:

Այդ օրը կռիւն Աւխորքնում շարունակւում է առանց հանդարտուելու նշաններ ցոյց տալու: Առաւօտեան ժամը 9-ին, 60 հոգուց մի խմբակ թշնամու մի թեկց պոկուելով՝ շրջապատում են Աւխորքնու ամենածայրի մի թեթեւ դիրքը, որտեղ գտնւում էին միայն հինգ հոգի. այդ գծի պատասխանատուն, Մուշեղ անուշով մի երիտասարդ, գործի լրջութիւնը տեսնելով՝ ինքն անձամբ ցած է թռչում երեք հոգով ու դիրքն ազատում: Սակայն դրութիւնն ընդհանրապէս շատ է ծանրանում Աւխորքնու գծի վրայ գործը նեղում է ու նեղում. Ռուբէնն ուղարկում է դարձեալ 30 երիտասարդներ, և քիչ յետոյ՝ էլի 30, այս անգամ՝ վաղեմի հերոս Կորիւնի առաջնորդութեամբ: Եւ 150 անձնուրացները մի հսկայական հարուած հասցնելով կատաղած թշնամու ճակատին՝ նրան վերջապէս յետ է նստեցնում:

Եւ այսպէս՝ դեռ Գաբլօրից սկսուած օրհասական կռիւը երեք օր անընդհատ տեւելով՝ ժամանակաւորապէս կանգ է առնում Աւխորքնու դիրքերի դիմաց և այդ երեքօրեայ կատաղի կռում, մի անբացատրելի հրաշքով, հայերն ունենում են միայն երեք վիրաւոր. իսկ թէ թըշնամին ինչքան զոհեր է տալիս, այդ կարելի է հասկանալ Սասունցիների այն խրատներից, որ

կանչում էին միմեանց. — այն ժամանակ միայն հրացան արձակիր, երբ համոզուած ես, որ դրն-դակդ թշնամիներէց մէկի գանգը պիտի փշրէ:

Մենակ Գաբլօրն ու Աւխօրքնին չէին ան-վերջ գրոհների տապարէզ. միւս զիրքերում նոյն-պէս կռիւն օրերով շարունակւում էր:

Նոյնը այդ օրը, յուլիսի 19-ին, երբ հայ կտրիճները մի գեր-հերոսական ճիգով ազատում են Աւխօրքնու զիրքերը, բորենիների մի քանի հազար՝ Ըմբռնու դօշերը կրծելով՝ նեղն էին լծել այգաեղի զիրքերի պաշտպաններին և բոսէ տըրոպէ սպասւում էր, որ ահա թշնամին ներս կը խուժէ, և այն ժամանակ՝ վայ Սասուն ապաս-տանած յիսուն հազարին...

Սուրհանդակ սուրհանդակի յետեից հա-նում է Աւխօրքնի, Անտոքից պատուէր բերելով՝ շուտով օգնութիւն ուղարկել Ըմբռնի: Ուժտա-պառ, յոգնաբեկ «Աւխօրքնեցիք», որ հազիւ մի-այն կարողացել էին փոքր ինչ ապահովել իրանց զիրքերը, ստիպուած են լինում տոանց այն էլ փոքրիկ ուժերնին դարձեալ փոքրացնել՝ բաժին հանելու վտանգուած կէտերին: Կորիւնը վերց-նելով Շէնըկի, Սէմալի, Գելիէգուզանի տա-նակները և էլի երեք ուիշ տաճնեակ, բոլորը միասին 100 հոգի ու վագում Ըմբռնի, Անտոքի արևելեան թևը բռնելով: Աւխօրքնիում մնում են միայն 50 հոգի, որոնց վրայ էլ ծանրանում է

այդ նշանաւոր զիծը պաշտպանելու ամբողջ հոգսը:

Բոլոր կէտերում զրութիւնը կրիտիքական է դառնում. թշնամին այնքան ոյժ ունէր, որ հայերի ամեն մի զիրքի դիմաց կարող էր իր քէֆն ուղածին չափ հարիւրներ ու հազարներ դնել. իսկ հայերը... թնդանօթների ուռմբերը զիրքերն են աւերում, իսկ փամփուշտները... սրտեղից, ինչպէ՞ս կարելի էր ձեռք բերել այդ անզին մթերքը. յարմար տեղերում զլորած թշնամուց... բայց դա շատ քիչ էր անսահման կարիքի հանդէպ: Պատուիրւում է գրա հրա-ցաններին մնացած փամփուշտների գնդակները կտրել, կէսը թողնել փամփուշտների մէջ, իսկ միւս կէսով լրջցնել մի այլ, դադար-կած փամփուշտ. մինչև անգամ ձեռքի տակ ե-ղած երկաթի կտորներ, հրացանների ճիպոտ-ները կտրտելով՝ օգտագործում են իբրև գնդակ-ներ, ի վրաս հրացանների և անշեղ խփելուն: Այնուամենայնիւ, այդ բոլոր սոսկալի պայման-ները մէջ տեղ լինելով հանդերձ, Սասնոյ կո-րիւնները բոլորը մի սիրտ, մի հոգի դարձած, իմանալով, որ պիտի մեռնեն, ոչ-ոք սարսափով դէպի յետ չէր ընկրկում, այլ խրոխտաբար՝ մա-հուան աչքերին էր նայում, ամեն ջանք գործ դնելով՝ նախ քան մեռնելը, իր պարտքը կատա-րել, և մէկի փոխարէն՝ 20-ը զլորել:

Այդ մղձաւանջային օրերում՝ ոտքի էր կանգնել ամբողջ Սասունը. կանայք, որ դեռ սկզբից մասնակցում էին տղամարդկանց գործին, այժմ բացարձակօրէն նետւում են կռուի դաշտ: Այդ սե օրերին ոչ ոք անմասն չի մնում ինքնապաշտպանութեան գործում: Կանայք ու երեխաներ ժայռերի, սարերի կատարներին քարերի մեծ-մեծ բեկորներ կուտակելով՝ ցած էին գլորում, և այդ քարերն ահեղ զորդիւններով ներքե թռչելով՝ լեռան կրճքից հարկւրաւոր ուրիշ քարեր ևս իրանց հետ թռցնելով՝ իրանց անցած ճանապարհները մաքրում, սրբում էին թշնամիներից: Իսկ այն զիրքերում, որտեղ թշնամին արդէն վերջին հարուածն էր պատրաստում պաշտպանուող հայերին ոչնչացնելու, իսկոյն կտրիճ կռուողների նոյնքան կտրիճ կանայքն էին երեւան գալիս՝ իրանց խրատանքներով. — հայ բաբամ... հայ ղուրբան... մեր երեխաներին թշնամու ձեռքը չտաք... չվախենաք, ամօթ է... մենք չենք վախենում. — կանչում էին նրանք ու գնդակների կարկուտի տակ դէպի այլ զիրքեր վազում՝ այնտեղ ևս ոգեւորման նոր շունչ փչելու: Իսկ մի կին տեսնելով, որ զիրքերից մէկում իր ամուսինը փոքր ինչ կանգ առաւ՝ կանչում է. — էդ ի՞նչ է, մարդ. փամփոշտդ հատաւ... զօրքը շատ ունի, հասիր ու բեր: — Եւ տղամարդիկ այդ խրատանքներից ուժերի նոր հոսանք ստանալով՝ աւելի էին

կատաղում, աւելի յանդուգն թռիչքներ կատարում:

Սասնոյ քահանաները նոյնպէս միացած ժողովրդին՝ թէ քաջալերում էին նրանց և թէ անձամբ մասնակցում կռուին. Գելիէղուզանի տէր-Առաքելը, տէր-Թորոսը, Սէմալի տէր-Կարապետը, Շէնրկի տէր-Յարութիւնը և ուրիշները քաջաբար կռւում էին մարտիկների շարքերում, որոնցից մէկը, տէր-Կարապետը ընկնում է Ըմբռնիի զիրքերում: Կտրճօրէն ճակատամարտում է և՛ Մատին-Առաքելոյ վանքի Ստեփան վարդապետը. ուրիշ գէնք չունենալով՝ կռւում է ատրճանակով ու ջնայելով ստացած հինգ վէրքերին, նա օրհնելով Սասնոյ քաջերին՝ շարունակում է կռուել, մինչև որ ստանում է վեցերորդ ու եօթներորդ վէրքերն ու ընկնում արնաքամ: Հերոս վարդապետին այդտեղից տանում են Եղկերտ գիւղի անտառը, որտեղ և մեռնում է՝ մի աղանջը դարձրած դէպի Սասնոյ լեռները, միւսը՝ դէպի Բիթլիս, որտեղից ուսական զօրքն ու վրիժառու հայ եղբայրները պիտի գային:

Սակայն ի զմուր... փրկութիւնը հեռու էր, և անլուծ Սասունը ծանրապէս վիրաւոր, թէև դեռ չէր ընկճուած, բայց մոռնում էր ցաւից և բիւրաւոր գիշատիչ չախկաններ նրա չորս կողմը ծառա-ծառա լինելով՝ ծորացած արիւնն էին հոստատում ու ժանիքնին իրար զարկում:

XV

Զօրքերն ու քրդերը հետգհետէ առաջ անցնելով՝ գրաւում են Գորշիկն ու Աւփօրքնին: Ինքնապաշտպանութեան այդ կարող զիրքերը ձեռքից տալուց յետոյ, հայերը քաշւում են առաջուց սահմանած երկրորդ գիծը, Կէպին լեռան շուրջը:

Խնդիրը մօտենում էր իր արիւնոտ վախճանին...

Կոիւր մի առանձին թափ է ստանում յուլիսի 20-ին: Սարսափելի էր ռազմամթերքը վերջացած հայերի գրութիւնը. արդէն այս ու այն կողմից՝ «փամփուշտս վերջացաւ» — ձայներ էին տարածւում, ու զիրքերի առաջ տղամարդիկ էին երևում՝ աչքերնին բորբոքուած, կատաղութիւնից շրթունքնին ծովառած և առանց փամփուշտի հրացաննին՝ պողպատէ մատներով սեղմելիս. կարծես փամփուշտն սպառուելուց առաջացած զայրոյթը հրացանների վրայ էին ուղղում թափել: Քիչ յետոյ մի քանի տեղերից, սիրտ կրտրատող անքոցի հետ՝ հրացանների քարերին զարկուելու ձայներ ևս լսւում են... Էլ պահէին, ինչ անէին. մահակներ քիչ կային. առանց փամփուշտի հրացանն էլ մի մահակ է:

Թնդանօթները եռանդուն կերպով գործի

դնելով ու հազարաւոր հրացաններից կրակ տեղալով՝ զօրքերն ու քրդերը միահամուռ յարձակում են սկսում գէպի Սուրբի, Կէպինի, Ըմբրունիի և Անտոքի զիրքերը: Առաջին յարձակումը վերջանում է թշնամու նահանջով, որին սակայն յաջորդում է երկրորդ գրոհը՝ աւելի յամառ, աւելի կատաղի:

Անտոքի զիրքերը թնդանօթների աւերածութեանցն են ենթարկւում, ռումբերն իրար յետեից թռչում են այնտեղ, և Շէնրիկի մի տասնեակն ամբողջապէս ոչնչանում են նրանցից, բայց և այնպէս՝ հայերն Անտոքից մի քայլ յետ չեն գնում, ու պահպանում են գիծը՝ կատարեալ ինքնամոռացութեան հասած սառնասրտութեամբ ու անվերջ դովքի հերոսութեամբ:

Մեծ վտանգի է ենթարկւում և Ըմբրունն, որի վրայ թշնամին գեռ վաղուց էր կենտրոնացրել իր ուշադրութիւնը, և ամեն հնար գործ գրել՝ այդտեղի զիրքերը ոչնչացնելու. և այժմ էլ ջանք էր թափում՝ համեւելու նպատակին: Բայց ահա վճռական րոպէին ծառանում է Կոբիւնը. — տղէրք, ձեզ տեսեմ, — կանչում և 150 հոգի վերցրած՝ դուրս թռչում զիրքերից, փոթորկի պէս համում, քշում թշնամուն և աննշան վնասով՝ վերադառնում նախկին տեղերը: Այդ շանթակիր գրոհները նա կրկնում է մի քանի անգամ, և ամեն անգամ խայտառակ փա-

խուստի ստիպում հազարաւոր թշնամիներին՝ նրանց դիակներով Լմբոնու փէշերը ծածկելով:

Բայց... նզովեալ փամփուշտ... ամեն մի հրացանին՝ մի քանի հատ փամփուշտ էր ֆնացել միայն, մինչդեռ թշնամին նոր ոյժեր ստացած՝ դարձեալ պատրաստուում էր յարձակման անցնելու և յառաջախաղ շարքերն արդէն առաջ էին շարժուում: Սակայն այդ վշտալի հանգամանքը ևս չի յուսահատեցնում աննման Կորիւնին. դիրքից-դիրք թռչելով՝ խրախուսում է իւրայիններին, ոչինչ համարում փամփուշտի բացակայութիւնը, պատրաստուելով մի խիզախ քայլ անելու. — յարձակուել առանց երկար ու բարակ մտածելու, ո՞վ կըմեռնի՝ պատիւ նրան, ո՞վ կենդանի կըմնայ՝ թող աշխատէ ռազմամթերք խլել թշնամուց ու հասցնել դիրքերը: — Այդպէս էր ծրագրել Կորիւնը, և այդպէս էլ պէտք է սնէր. սակայն թշնամու գնդակը վերջ է տալիս հերոսի կեանքին և նա ընկնում է ընկերների թևերին՝ վերջին շնչումը կանչելով. — քաջ կացէք, աղէք...

Կորիւնի մահից յետոյ՝ նրա տեղն է անցնում Սէմալցի մի ուրիշ կորիւն, որ տեսնելով, թէ՛ այնուհետեւ Լմբոնի ֆնալը կընշանակէ մեռնել անօգուտ, տասնեակները վերցրած՝ նահանջում է Անտոք, որից յետոյ անմիջապէս գալիս են վատերն ու նստում Լմբոնու դիրքերում:

Ռազմամթերքի ընդհանուր պակասութեան պատճառով՝ թշնամին յաջողութիւն է ունենում և՛ Սուրբի կողմում. այդտեղ երկարատե, սարսափելի ճակատամարտից յետոյ վերջանում են հայերի փամփուշտները, իսկ չախմախլիներն առանձին մեծ օգուտ տալ չէին կարող ու մարտիկները նոյնպէս հաւաքուում են Անտոք՝ առանց փամփուշտի հրացանները մահակի տեղ ձեռքներին բռնած:

Ուժեղ կռիւը շարունակւում է Անտոքի լեռնադաշտի հիւսիսային կողմում. այդտեղ Շէնրկցիք էին գիծը պահպանում և մինչև վերջը թըշնամին չի կարողանում նրանց դուրս քշել դիրքերից: Ընդհակառակը, Շէնրկցիների մօտ դեռ ռազմամթերքի մի քիչ պաշար կար, և դա թևաւորում է արի լեռնականներին. յարձակման ձեռներէցութիւնն իրենց վրայ վերցնելով՝ երկու անգամ ճարպիկ ու վճռական գրոհով սեղմում են Գրեքօլի և Մերկերու կողմն ամրացած թըշնամիներին, նրանց քշում այն ամուր դիրքերից՝ գրաւելով մի քանի հրացաններ ու որոշ քանակութեամբ փամփուշտներ, որ այնքան թանկագին էին այդ օրհասական բռնիքներին:

Պակաս կատաղած չեն լինում և՛ կէպիւնի կռիւները. այդտեղ երկու կողմերն էլ փոթորկի նման բազմաթիւ անգամ են բաղխուում իրարու, և ուժեղ բաղխումից յետ թռչողները՝ վրշ

քուրդ-տաճիկներն են լինում, որոնք ամեն անգամ հայերի դիրքերի առաջ բաւականաչափ դիմկներ էին թողնում, մինչև ապահով տեղերում ծածկուելնին: Բայց իրիկնադէմին հայերի փամփուռները գրեթէ վերջանում են, և կըտրիճները՝—ախ, փամփուռտ—հառաչելով՝ բարձրանում են Կէպինի գագաթը, այնտեղ դիրքեր սարքում՝ հետևեալ օրը եղած-չեղածով կոխը շարունակելու, մինչև իրենց բազմատանջ կեանքի վերջը կը հասնէր...

Արդէն ամեն դիրքերից լուրեր են հասնում, որ էլ փամփուռտ չկայ, կամ բոլորովին մօտ է վերջանալուն: Հերոս Սասունցին նայում էր դադարկ փամփուռտակներին և կսկծից գալարուելով՝ այնպէս «փամփուռտ» կանչում, որ վշտի ծուխը քթիցն էր ելնում:

Սակայն այդ գրութեան մէջ ևս Սասունցի կանայք դեռ սիրտ ու քաջութիւն ունէին դիրքից-դիրք վազելով՝ տղամարդկանց ոգևորութիւն ներշնչելու.— կոներ խօ ունիք,— կանչում էին նրանք,— քնջ կացէք, դիմացէք...

Վրայ հասած մութը մի քիչ միայն իջեցնում է երկարատև կռուի թափը: Բայց երբ բացւում է յուլիսի 21-ի առաւօտը, դրա հետ էլ վերսկսւում են յարձակումները բոլոր կէտերի վրայ՝ նախկին ուժգնութեամբ: Սակայն հայերը դեռ կարողանում էին թէ գարկել, և թէ պաշտ-

պանուել, իսկ թէ ինչո՞վ, ի՞նչ միջոցներով.— դա անբացատրելի է և պէտք է միայն Սասունցու անխորտակելի ոգուն հարցնել: Թշնամին այնքան ջանքեր գործ դնելուց յետոյ, մնացել էր ապշած, շմուած, թէ ինչպէ՞ս են կարողանում մի բուն կտրիճներ դիմադրել թնդանօթներին, տառնեակ հազարաւոր քիւրդ-տաճիկներին, անթիւ հրացանների անվերջ համազարկերին,— ոչ միայն դիմադրել, այլ և պէտք եղած ժամանակը զարմանալի յանդուգն հակա-յարձակումներ գործել և այնքան զգալի աւերածութիւններ անել թրջնամու շարքերում:

Բայց անարգ թշնամին շատ լաւ դիտէր, որ դրոյց հայերին օգնութիւն հասնող չի լինելու, երբեքից էլ կըվերջանայ լեռնականների ռազմական պաշարը, և վերջապէս՝ եթէ զէնքով չվերցնեն՝ սովով խօ կը խորտակեն Սասնոյ դիմադրական ոյժն:

Սակայն թշնամին սխալւում էր. Սասնոյ ոյժն արդէն խորտակուել էր... փամփուռտ չկար...

Սասունը ոռնում էր ցաւից, մռնչում կատաղութիւնից, ինքն իրան կրծում, որ այսուհետև ինքը ոչ թէ պէտք է կռուի, այլ կոկորդը դէմ անի աւանդական թշնամու ետթողանի հարուածներին... Սասունը, դիւցազունների չքնաղ երկիրը պիտի թրպրտար՝ լպիրշ բորենիների պատառտող ժանիքներին ենթարկուած:

Այսպէս թէ այնպէս, գործը վերջացած էր և յուլիսի 21-ին, կէսօրից յետոյ ժամը 2-ին հրահանգ է տրուում, որ երեկոյեան բոլորը՝ թէ՛ ժողովուրդ, թէ՛ մարտիկներ, հաւաքուեն Անտոքայ հովիտը...

XVI

Շրջակայքից Սասուն ապաստանած և Սասնոյ բուն ժողովուրդը ճիշտ է, սովից շատ էր տանջուել, բայց կորուստ դեռ չէր ունեցել, եթէ չհաշուենք պատահական գնդակներին զոհ գնացածներին: Կռուի սկզբից՝ ժողովրդի մեծ մասը Անտոքայ հովտում էր տեղաւորուել. իսկ իրիկունը, ըստ տրուած կարգադրութեան, ամեն անկիւններից, հատուած-հատուած՝ բոլորը կենտրոնանում են այնտեղ: Պատկերանում է մի սրտաճմլիկ, սպանիչ տեսարան. — 50,000 ժողովուրդ. կանայք, երեխաներ, օրօրոցներ՝ ծծկեր մանուկներով... երեխաները լալիս են. զգում են, որ մի վատ, շատ վատ բան պիտի տեղի ունենայ: Յերեկուայ կտրիճ կանայք՝ այժմ լաց են լինում լուռ ու մունջ, աշխատելով արտասուքներն թազցնել. ծերերը, կարծես ծանր բեռան տակ՝ տնքում են. երիտասարդները վշտամոմոմոք են, լուռ, բայց կատաղած. մի կատաղութիւն, որ գործնականօրէն հանգէս բերելու հնարաւո-

րութիւն չլինելով՝ սպանում է մարդուն. այդպիսի գրութեան մէջ է լինում հերոսը, երբ ոտ ու ձեռք կապուած են, իսկ շուրջը պար են բռնել ստոր արարածներ, որ համարձակ, աներկիւղ ծաղրում են նրան, հայհոյում, քրքրիներ զարկում, թքում երեսին, և կապկպուած հերոսին մնում է միայն ատամները կրճտացնել. առանց իր պողպատակուռ բռունցքը թզուկների գարշելի գանգերին իջեցնել կարողանալու:

Ժողովուում են Սասնոյ իշխանները, քահանաներն ու յայտնի անձնաւորութիւններ, թէ՛ ինչ անել այժմ:

Ինչ անել... հեշտ էր այդ հարցին պատասխանելը: Հեշտ կը լինէր, եթէ բաւականաչափ ռազմամթերք ունենային. բայց որ չկար, ո՞վ կարող էր մի որևէ խորհուրդ տալ:

Բայց ինչ էլ որ լինէր, հարկաւոր էր մի որևէ բան մտածել: Ոմանք առաջարկում են, որ եղած-չեղածից մի բան զգացնեն, մի 50—70 հոգով յարձակում գործեն թշնամու վրայ գանազան կէտերից, նրանց շփոթեցնեն, իսկ ժողովուրդն այդ միջոցում շտապէ իրեն գցելու Աղբիի անտառները՝ այնտեղ միառժամանակ պատապարուելու: Ուրիշները այդ առաջարկութեան դէմ առարկում են, թէ՛ իրենց ունեցած երկու ջուխտ մի կէնտ փամփուշտներով այսուհետև թշնամուն զբաղեցնել չեն կարող և իզուր տե-

դից աւելորդ կորուստներ կը տան. աւելի լաւ է՝ բաժանուեն հատուածների, ամեն մի հատուածին կցել մի քանի հրացանաւոր, և միմեանց յետեից դուրս գալ զանազան ուղղութեամբ:

Տեսնելով, որ ոչ մի խորհրդակցութիւն ցաւին դարման տանել այլևս չի կարող, զուր տեղից ժամանակ են կորցնում, վճռում են անել այն, ինչ որ վերջի վերջոյ, բոլոր որոշումներէից յետոյ՝ պէտք է անէին. այսինքն դուրս գալ Սասունից, հասնել Քան, Քանից ոռոսական բանակը. ով կը հասնէր՝ կը հասնէր, ով չէ՝ չէ...

Ժողովուրդն արդէն գիտէր, որ փամփուշտը հատել է, որ սպառուել են պաշտպանուելու բոլոր միջոցները. բայց էլի սպասում էր, թէ՛ դուք է մի բան, մի սրտապնդիչ բան դուրս գայ անյայտ ազբիւրից, բայց անս «սրտապնդիչ բանը» դուրս է գալիս, թէ՛ պէտք է թողնել Սասունը:

Մի ամբողջ հերոս ժողովուրդ, գիշերը, կին ու երեխաներով՝ պոկ է գալիս տեղից, մտադրուելով անցնել Շաշկա-Մուշէի հովիտը, ապա Գորշիկի հովիտն ու հասնել Աղբի, այնտեղից, եթէ բախտն աջողի՝ Քան: Սակայն՝ այդպէս մտածում էին միայն. քիչ յետոյ, յիսուն հազարանոց ամբոխը, փոթորկի ձեռքին խաղալիք դարձած, դեկը կորցրած նաւի նման՝ սկսում է այս ու այն անկիւն շարժուել, տեղի է ունե-

նում մի ընդհանուր, խուճապային խանդարում, և տիրաբար, բոլորի համար մի նոր նշանաբան է ստեղծւում, թէ՛—թող ազատուի, ով կարող է... Եւ մարդկային ծովն ալեկոծւելով՝ կտրտւում է հատուածների, իսկ իւրաքանչիւր հատուած էլ, կտրուած միւսներէից՝ առաջ է անցնում կամ ընտրած, կամ պատահական ուղղութեամբ... Դադարկւում էին Սասնոյ լեռները. և այնտեղի հերոսական ժողովուրդն այժմ ճակատագրի մի անողորմ հարուածով փախստական դարձած, խորտակուած, խեղճացած դէպի սարսափելի անյայտն էր դիմում և զնդակի առաջ աչք չթարթող Սասունցի ծնողներն այժմ իրանց ճշացող երեխաներին էին սաստում, որպէսզի լռեն ու նըանց ձայնը չլսէ արնախում թշնամին:

Տալուորիկցիների մի ստուար խումբ իջնում է ու ամրանում Տալուորիկի անմատչելի ժայռերի խոռոչներում ու այրերում: Մի այլ խումբ անցնում է Ծովասար, որտեղ ընդհարում են ունենում հետամտող զայրերի մի վոհմակի հետ, հրացանաւորներն իրանց ունեցած մի քանի փամփուշտներին ապաւինած՝ վրիժոյ ծաբաւով լքուած վրայ են տալիս, հալածում թշնամուն, ապա յաջողութեամբ ելնում Կոնկան-Գեօլ կոչուած տեղը, այնտեղից էլ հասնում Քան ու միանում Մշեցիներին, ուր Մշոյ աղէտից յետոյ՝ մահից ազատուածներն էին հաւաքուել:

Շէնրկցիք ու Սէմալցիք անցնում են Կորդուք ու յանկարծ տեսնում, որ իրանք օսմանեան գօրթի թիկունքն են գտնւում. ինչպիսի՛ յարմարութիւն՝ թշնամուն արժանաւոր հատուցումն տալու. և նրանք այդպէս էլ կը վարուէին, եթէ գէնք ունենային. ու՛ «գէնք» հառաչելով, Սամսոյ այդ անպարտելի կտրիճները, որ քաջութեան զարմանալի օրինակներ շատ անգամ են տուել վերջին տասնամեակներում, այժմ աշխատում են աչքի չերևալ ու իջնում են Սմբէի ձորը, որտեղ Շէնրկցիք պաշարուելով բազմահազար թշնամիներից՝ ամբողջապէս նահատակւում են. ազատւում են միայն 54 տղամարդ... Նոյն վիճակին են ենթարկւում և Սէմալցիք—Ծիծեռնի ձորում և ազատւում միայն 33 հոգի...

Աղբեցիք փոքր քնասով՝ հասնում են Ծովապար և այս ու այն ժայռերում, թփուտներում թաղնւում: Գելիէզուզանցիք և Իշխնձորցիք կիսովիմբ ոչնչանում են: Իսկ Սասունից իջած՝ մնացած Ժողովրդի մի մասը կոտորւում է, միւս մասն էլ ձեան շերտերի տակ, անտառներում, ձորերում ու այրերում թագնուելով՝ առ այժմ՝ կարողանում է ազատուել սրածութիւնից, որպէս զի յետոյ սովից մեռնէ...

Ահա այդպէս աւերուեց Սասունը. աւերուեց, որովհետեւ բնակիչները արիւնակզակ, կուլ-

տուրասպան քրդեր չէին, կամ մարդկութեան պատուհաս տաճիկներ. աւերուեց Սասունը, որ ուրիշ բարեկարգ պետութեանց մէջ մի նախանձելի մարգարիտ կարող էր լինել իր սար ու ձորերով, գեղեցիկ բնութեամբ ու տղամարդ բնակիչներով...

Բայց եղածով չբաւականացաւ տաճիկ զահիճ կառավարութիւնը: Յուլիսի 21-ից յետոյ՝ երկար շաբաթների ընթացքում՝ Սամսոյ լեռներում վիտում էին Օսմանեան «քաջայաղթ» զինուորներն ու Աբդուլ-Համիդից որդեգրուած քրդերը, և ինչպէս որսորդական շները թփէ-թուփ, քարէքար անցնելով՝ վիրաւորուած որսն են որոնում, այնպէս էլ նրանք էին աշխատում գտնել թագկացած հայերին՝ վերջնականապէս բնաջնջելու այն հպարտ լեռների դժբաղդ զաւակներին: Միւս կողմից էլ հայերն էին դուրս գալիս ապաստարաններից և միացող սրտով ձորերն ու անտառները չափչփում՝ կորցրած սիրելիներին գտնելու, որպէսզի սովից կամ միասին մեռնին, կամ սպանուին թշնամուց, և կամ միասին ապատուին մի որևէ հրաշքով...

Ճիշտ է, այդ որոնումների ժամանակ քիչ քրդերը չեն պատառ-պատառ լինում ամեն ինչ կորցրած հայերի կողմից. բայց և ինչէր չի տեսնում պարտուած, երկնքից ու երկրից մոռացուած Սասունցին. — դիակներ, դիակներ ու դի-

աւկներ, և դրանց հետ՝ գետինը չանկուտող, ա-
րիւնաթաթաւ վիրաւորներ, սովից նուաղած
երեխաներ, թափթփուած ապրանքներ, ջարդ ու
փշուր արած զէնքեր...

Ընդհանուր խուսափման ժամանակ, ժողո-
վրդի մի մեծ խումբ, չկարողանալով աւելի ա-
րագոռթեամբ մի որեւէ «ապահով» տեղ հասնել,
Գորշիկի հովտում շրջապատւում է անհամար
քիւրդ ու տաճիկներից. և մի քանի հազար ան-
զէն ժողովուրդ կոտորւում են այդտեղ՝ անխնայ
կերպով. ծեր, կին, երեխայ, պառաւ... դիակ-
ների սարսափելի դէպեր են շարւում իրար
կողքի: Գազաններն իրանց գործը վերջացնելով՝
հեռանում են այդտեղից, զէնքերնին քաջագոր-
ծութեանց նոր դափնիներով պսակելու: Մի քա-
նի ժամ յետոյ, գիակների դէպերի տակից դուրս
է սողում 9—10 տարեկան մի երեխայ, չորս
կողմը նայում, և մարդկային այդ հեկատոմբը
տեսնելով՝ չի կորցնում իրան, այլ հրեշտակային
մի ազնիւ մղումով՝ ման է գալիս դիադաշտն ու
մի հրաշքով ազատուած՝ դարձեալ 8—9 երե-
խաներ հաւաքում, չորսից-վեց տարեկան: Եւ
ամբողջ 15 օր այդ երեխան խնամում է «իր
որբերին»: Վայրի հասկեր է հաւաքում, ափումը
տրորում ու նրանց հատիկներով կերակրում
թշուառ մանուկներին, ջուր բերում, խմացնում,
սփոփում, սիրտ տալիս, մինչև որ կորցրած մեր-

ձաւորներին փնտրող մի-երկու Սասունցիներ պա-
տահում են նրանց, ու հայի բաժին կեանքն անի-
ծելով՝ վերցնում իրանց հետ:

Այդպիսի հոգի քաղող, զգայացունց միջնա-
դէպեր շատ են պատահում Հայկական Տաւրոսի
այս ու այն անկիւններում. բայց արժէ՞
նկարագրել. բաւական է միայն ասել, որ Սասնոյ
մարտական կորովը փշրուած էր միանգամայն և
այժմ այնտեղի ժողովրդի բեկորները զանազան
խոռոչներում ու թփուտներում թաքնուած՝ սպա-
սում էին վերջին ժամին, որ կամ դէսը պիտի
կտրէր, կամ զէնը...

XVII

Ի՞նչ կատարուեց Մշոյ-դաշտում. այդ մա-
սին երկար կանգ առնելու բան չկայ. կրկնու-
թիւններ կըլինէին:—Կոտորեցին,— ահա բոլորը.
իսկ թէ տաճիկներն ինչպէս են կոտորում կին
ու երեխաներին, այդ արդէն յայտնի է:

Մի երկու խօսքով յիշատակենք, որ երբ
ռուսական բանակն առաջանում է Վանայ լճի
ափերով, տաճիկ կառավարութիւնը խորհրդի է
կանչում բոլոր աչքի ընկնող քուրդ շէյխերին,
բէյերին ու նշանաւորներին, նրանց հետ մեծ
խնամքով՝ դաշտի կոտորածը կազմակերպում:

Նրանք բոլոր գիւղերը բաժանում են իրանց

մէջ, օրը, ժամը նշանակում, որպէսզի ամեն մարդ որոշուած աեղը լինի և նշանը տրուելուն պէս՝ իւրաքանչիւրը վրայ հասնէ ու «իւր» գիւղը բնաջնջէ: «Գործը» միանգամայն ապահով դարձնելու համար զանազան պատրուակներով՝ ամեն մի գիւղում որոշ քանակութեամբ զինուորներ, ոստիկաններ ու քրդեր են դնում, և մի այնպիսի շղթայ ստեղծում, հազորակցութիւնն այնպէս կտրոււմ, որ մի գիւղ՝ իրանից կէս ժամ հեռաւորութիւն ունեցող միւս գիւղից ոչ մի տեղեկութիւն չի ունենում:

Այդ բոլոր, տաճիկ կառավարութեան համար պետական անհրաժեշտութիւն ներկայացնող պատրաստութիւնները տեսնելուց յետոյ՝ յունիսի վերջերքին՝ միաժամանակ դաշտի 102 գիւղերում սկսւում է կոտորածը. տաճիկա-քրդական սուրը մի ծայրով տալիս՝ միւսովը դուրս է գալիս, և մի քանի օրից յետոյ Մշոյ դաշտում մնում են միայն ոռնացող շներ, աւերակ գիւղեր ու դիակներ, դիակներ...

Ախ, կը լինի՞ դրա հատուցումը երբ և իցէ...



Վ Ա Ն

I

Վասպուրականը պատկանում էր Արծրունեաց տոհմին և կոչւում էր «Յրկիր Արծրունեաց», կամ՝ «Աշխարհ Արծրունեաց»: Թէ որ տեղից է ծագել Վասպուրական անունը և որ ժամանակից, որոշ յայտնի չէ, միայն պարզ է, որ այդ նահանգը շատ հնուց գոյութիւն ունէր: Կոնստանդին Պերֆէրուժէնի ժամանակ նա յիշատակւում է «Վասպարակակա» անունով. Կէզրէնոսը նրան «Ասպրականիա» և «Վերին Մարք» է կոչում: Յովհաննէս Սկիլիցիսը գրում է «Վասպրական», Ստրաբոնը՝ «Վասորոպէտայ» և այլն:

Վասպուրականը Հայաստանի ամենամեծ նահանգն է եղած. պատմութիւնից յայտնի է, որ Սենեքերիմ Արծրունին թուրքերի խժգժութիւններից նեղուած՝ Վասպուրականը 1201 թուին տուաւ Վասիլ Ա-ին, նրա փոխարէն Սեբաստիան ստանալու պայմանով: Ահա այդ մասին

ինչ է գրում Յայսմաուրքը, որով Վասպուրականի մեծութեան մասին մի գաղափար կարելի է կազմել:

Սենեքերիմ Արծրունին «եռ կայսերն զկալուածս իւր, բերդս հը (72), զիւզս դռ և դճ (1400), լայնանիստ և արդիւնաւորս, և քաղաքս ժ (10), զԽլաթ, և զԽողց, և զԽիզան, և զԿեացն, զԱրճէշ, և զԱրծկէ, և զՄանկերտ, զբոլոր թումանս (գաւառս) Խլաթայ, ի լեռանցն Սասնոյ մինչ ի Սռան, և ի Նուանս, ի Սալամաստ, և ի Ջղամաթ (Ջուլամերկ)»:

Սենեքերիմը Սեբաստիա է փոխադրուում «ժդռ (14000) ձիաւորօք՝ տամբ և որդւովք»: Այսքան մարդկանցով ելնելուց յետոյ, երկիրը լի էր բնակչութեամբ, պակսելը չէր զգացուում. մենաստանների թիւը 900-ի էր հասնում, որ տրուած չէին Վասիլ կայսրին:

Վասպուրականը բաժանուում էր 37 գաւառների, որոնցից մէկն էր Տոսպը՝ Վան քաղաքով: Վանը հնագոյն ժամանակներից գոյութիւն ունէր և կոչուում էր Աւան: Վանի անուան ծագումը ևս անյայտ է: Մեսրոպը երէցը Ս. Ներսիսի պատմութիւնը գրելով՝ ասում է, որ Ներսէսը գնաց մի գիւղաքաղաք Վասպուրականում, «և անուն գեղջին Աւանս կոչեցեալ»: Կայ և մի աւանդութիւն, որ յայտնում է, թէ այդ քաղաքը շինել է հայկազուն Վան թագաւորը և իր

անունով Վան կոչել: Մեր պատմութեան մէջ Շամիրամակերտ անունը ևս կրում է, իբրեւ հիմնուած Շամիրամից:

Վանը մի քանի անգամ վերանորոգուել է. իններորդ դարու վերջերում գրանով գրադուում է Դերանիկ Արծրունին, որից յետոյ նոյնը շարունակում է իր որդի Գագիկ թագաւոր Արծրունին, բազմատեսակ պալատներ ու շինութիւններ հրաշակերտելով: Թովմաս Արծրունին այդ նորոգութիւնների մասին խօսելով՝ ասում է. «Հարաւակողմն կուսէ ի ջրամբար արձանագործ քարեղէն ճանապարհ աստիճանեալ ներքուստ ի վեր մինչ ի կատար անձաւին՝ հեշտալիր զել և զէջսն յօրինեալ քարագործ աւազամած կրագործութեամբ: Այլ և պատկանաբար իմաստութեամբ պատսպարեաց ջրմուղ ներքսագոյն երկրի ի քարանց տաշելոց փողոցս գնացից ջրոյն կազմեալ. գալ իջանել յելից ի ստորոտէ լեւինն Վարաղայ*) շեղեալ ի հարաւոյ ի հիւսիսոյ ի խաղաղ, ընդ լայնանիստ գողաձև դաշտականացն ելանել ի գագաթն ամրական անձաւին»:

Հայաստանի միւս քաղաքների ու գիւղերի նման՝ Վանը ևս իր գոյութեան ընթացքում շատ բռնութիւնների և աւերումների է ենթարկուել: — Շապուհը հայոց Արշակ երկրորդի ժամանակ

*) Վարաղի ստորոտից Վան իջնող, Արծրունու հիմնած ջրանցքն այժմ էլ գեւ մնում է: Ա.

աւերանքի ենթարկեց և միայն գերի՝ 23,000 մարդ տարաւ:

Սրահանգ ներքինին XI դարում պաշարում է Վանը, մարդկանց սրի բերան առնում ու քաղաքն այրում: Լէնկթէմուրը XIV դարում գրաւում է Վանը և այնպիսի սարափելի կոտորած անում, որ, ըստ պատմիչների, բերդից ձգուած մարդիկ այլևս չէին մեռնում, որովհետև սպանուածների գիւղերը մինչև բերդն էին բարձրացել: XV դարում, երկարատև պաշարումից յետոյ Իսկանդարը վերցրաւ քաղաքը՝ բռնաւորներին յատուկ բարբարոսութեամբ: Վերջին անգամ, 1553 թուին տաճիկները գրաւեցին, որոնց ձեռքին տազնապում է ահա մինչև այսօր:

Չկան այլևս այնտեղ Արծրունեաց ոսկեգօծ ապարանքները, ոչ ճանապարհը՝ «աստիճանեալ ներքուստ ի վեր», և ոչ էլ միւս հրաշալիքները, որի մասին մեր պատմութիւնն է խօսում: Բայց այնտեղ կան միայն աւերակներ, աւերակներ ու աւերակներ, որ «ցուցանեն զգործ խղօրաց և նախնեաց», մարդկանց սիրտը լցնելով դառնութեամբ ու թախծով:

Շատ գեղեցիկ է Վանայ դիրքն ու բնութիւնը. Այգեհոտանը մի եղեմ է, այգիներով պճնազարդուած. — պտղատու ծառեր, ծաղիկներ, քաղցր, ախորժահամ ջուր: Կանայք՝ գեղեցիկ,

տղամարդիկ՝ ժիր, աշխատասէր և բողոքող, ըմբոստ այն օրուանից, երբ հայ մարտիկի խօսքն ու գործը սաղմնաւորուեց Վասպուրականում: Ժիր ու աշխատասէր, բայց միշտ չքաւոր, միշտ աղքատ... տաճկական ազրուկն անդուլ եռանդով ծծում էր նրան, հիւթերը քամում՝ դանդաղ մահով մեռցնելու համար. բայց Վասպուրականը չմեռաւ, վրէժինդրութեամբ լցուած՝ վերջապէս նա շարժուեց, թափ տուաւ թևերը, իջան հարուածները և քուրդ ու տաճիկները դարմացան հրաշքից. — մեռեալ կարծուածը՝ կենդանանում էր... այդ դեռ ոչինչ, դարկում էլ էր:

Այդ արդէն տանել չէր կարելի. և քրդական եաթաղաններն ու զօրքերի սուլիներն աւելի եռանդուն կերպով սկսեցին գործել. — զիւղերի տեղ՝ մոխիր, արտերի տեղ՝ խոպան դաշտեր, այգիների տեղ՝ ճղակոտոր չոր ծառեր. — այդ ձևով ցանկացաւ բաւարարել տաճիկ կառավարութիւնը իրան անդող հպատակներին. բայց մի անգամ արդէն ազատագրման ճանապարհը բռնած՝ հայն այլևս յետ կանգնել չէր կարող և նա իր վերջին քսանհինգամեայ պատմութիւնը ոսկեղէն էջերով զարդարեց:

Այդ էջերը պարբարաւոր անմոռանալի հերոսների յիշատակն է, որ ահա ինձ առիթ է հանդիսանում նրանց գործերի մասին փոքր ինչ խօսելու:

II

Վարդանը, Գուրգէնը, եւ և ուրիշ երկու ընկերներ՝ արդէն 10 օր էր, որ ապրում էինք հիւսն Ղ-ի տանը, Վազգէնի հետ ծրագրելով մօտակայ անելիքնս։ Ասում եմ՝ «տանը», — բայց դա տուն չէր, այլ երկյարկանի մեծ շինութեան ողորմելի բեկորներ, որի ներքեի յարկի «սենեակներից» մէկում մենք տեղաւորուել էինք՝ խիստ գաղտնի պահելով մեր տեղը, որովհետեւ «բարեմիտ» հայերի թիւն աւելացել էր, և մի փոքրիկ անդգուշութիւնը կարող էր մեզ Ֆէրբիգ Սաադէզդէինի ճիրաններին մատնել։

Տանտիրոջ վերաբերմունքը դէպի մեզ անշափ լաւ էր. տան բոլոր անդամներն աշխատում էին ամեն կերպ դիւրացնել մեր աննախանձելի կացութիւնը։ Նրանք չէին վախենում այն պատուհաններից, որ մեր պատճառով կարող էին իրանց գլխին թափուել. նրանք չէին «խրատուել», չնայելով, որ իրանց տան անդամներից մէկը երկու ամիս առաջ գոհ գնաց ծպտուած զօրքերի ու կատաղած քրդերի գնդակին, և բազմասենեակ, երկյարկանի շինութիւնը մատնուեց կրակի. ընդհակառակը, Ղ-ի փոքրիկ, 14 տարեկան աղջիկը, սիրուն թագերը, հրդեհից առա-

ջացած ու մի կողմ ամբարած ածուխը ցոյց տալով՝ ծաղրում էր կառավարութեանը։

— Շնորհակալ եմ Սաադէզդէինից, — ասում էր նա, — մեզ մի ամբողջ տարուայ ածուխի պաշար հասցրեց։

Եւ մենակ թագերը չէր. ամբողջ Վասպուրականն սպարտական համբերութեամբ տանում էր երկու ամիս առաջ ստացած սոսկալի հարուածներն ու զգալի կերպով նկատուում էր, որ վէրքերն սպիանում են և Վասպուրականի սիրտը, Վանը անխորտակելի առողջութեան նշաններ է ցոյց տալիս։

Երկու ամիս առաջ... իսկ ի՞նչ էր պատահել այն ժամանակ. — եօթնօրեայ ճակատամարտ, հերոսական կռիւ և... աղէտալի վախճան։

Առիթը մի չնչին բան էր եղել. այնքան չնչին, որ միայն սուլթան Համիդին կարող էր դէնք ծառայել ընդհարումներ ստեղծելու, կոտորածներն արդարացնելու համար։*) — Քրդերն անմաքս ապրանք բերելուց՝ դէմ առ դէմ են ելնում տաճիկ պահակներին. «օրէնքը» գործա-

*) Իր ժամանակին՝ Վասպուրականի դէպքերի մասին ընդարձակօրէն գրել եմ մի գրքում. ներելի է, եթէ Վանում տեղի ունեցող ներկայիս յուզումնալից դէպքերն ինձ ստիպում են տեղ-տեղ մատմբ վերադառնալ արդէն հրատարակած յուշերիս։

II

Վարդանը, Գուրգէնը, ես և ուրիշ երկու ընկերներ՝ արդէն 10 օր էր, որ ապրում էինք հիւսն Ղ-ի տանը, Վաղգէնի հետ ծրագրելով մօտակայ անելիքներս: Ասում եմ՝ «տանը»,—բայց դա տուն չէր, այլ երկյարկանի մեծ շինութեան ողորմելի բեկորներ, որի ներքեի յարկի «սենեակներէից» մէկում մենք տեղաւորուել էինք՝ խիստ գաղտնի պահելով մեր տեղը, որովհետեւ «բարեմիտ» հայերի թիւն աւելացել էր, և մի փոքրիկ անզգուշութիւնը կարող էր մեզ ֆէր-բիզ Սաադէդդինի ճիրաններին մատնել:

Տանտիրոջ վերաբերմունքը դէպի մեզ անչափ լաւ էր. տան բոլոր անդամներն աշխատում էին ամեն կերպ դիւրացնել մեր աննախանձելի կացութիւնը: Նրանք չէին վախենում այն պատուհաններից, որ մեր պատճառով կարող էին իրանց գլխին թափուել. նրանք չէին «խրատուել», չնայելով, որ իրանց տան անդամներից մէկը երկու ամիս առաջ զոհ գնաց ծպտուած զօրքերի ու կատաղած քրդերի զնդակին, և բազմասենեակ, երկյարկանի շինութիւնը մատնուեց կրակի. ընդհակառակը, Ղ-ի փոքրիկ, 14 տարեկան աղջիկը, սիրուն Թագերը, հրդեհից առա-

ջացած ու մի կողմ ամբարած ածուխը ցոյց տալով՝ ծաղրում էր կառավարութեանը:

— Ծնորհակալ եմ Սաադէդդինից, — ասում էր նա, — մեզ մի ամբողջ տարուայ ածուխի պաշար հասցրեց:

Եւ մենակ Թագերը չէր. ամբողջ Վասպուրականն սպարտական համբերութեամբ տանում էր երկու ամիս առաջ ստացած սոսկալի հարուածներն ու զգալի կերպով նկատուում էր, որ վէրքերն սպիանում են և Վասպուրականի սիրտը, Վանը անխորտակելի առողջութեան նշաններ է ցոյց տալիս:

Երկու ամիս առաջ... իսկ ի՞նչ էր պատահել այն ժամանակ. — եօթնօրեայ ճակատամարտ, հերոսական կռիւ և... աղէտալի վախճան:

Առիթը մի չնչին բան էր եղել. այնքան չնչին, որ միայն սուլթան Համիդին կարող էր զէնք ծառայել ընդհարումներ ստեղծելու, կոտորածներն արդարացնելու համար:*) — Քրդերն անմաքս ապրանք բերելուց՝ դէմ առ դէմ են ելնում տաճիկ պահակներին. «օրէնքը» գործա-

*) Իբ ժամանակին՝ Վասպուրականի դէպքերի մասին ընդարձակօրէն գրել եմ մի գրքում. ներքի է, եթէ Վանում տեղի ունեցող ներկայիս յուզումնալից դէպքերն ինձ ստիպում են տեղ-տեղ մատամբ վերագտնալ արդէն հրատարակած յուշերիս:

դրելու ժամանակ՝ սպանուում է մի փոխ-սպայ և վիրաւորուում մի զինուոր: Ասում են Նոյնպէս, որ ընդհարումը տեղի է ունենում ոչ թէ քրդերի, այլ Հնչակեանների մի խմբակի հետ, որ Վարազից գիշերը վերադառնում էր Վան:

Այսպէս թէ այնպէս՝ սպանութիւնը կատարուել էր. իսկ թէ ում՝ ձեռքով, — այդ արդէն աւելորդ մանրամասնութիւն էր կառավարութեան համար. նրան հայի արիւնն էր հարկաւոր, և ոչ յանցաւորներին ճարելը: Ուրեմն՝ էլ ի՞նչ զարմանալու բան, եթէ հետեւեալ օրն իսկ սպանուածին ու վիրաւորին դնելով պատգարակների վրայ, սկսում են ման ածել փողոցները՝ «կոտորել գեաւուրներին» աղաղակներով ու գազանների ախորժակը զրգռող թալանի կոչերով. և էլ ո՞ր օրուայ համար էին 15,000-աչափ արիւնկզակ քրդերը վազօրօք Վան հաւաքուել բոլոր կողմերից:

Սուլթանի գլընդում կըթուած աւազակ քուրդ ցեղապետները, պաշտօնեաներն ու հրահանգուած, նշանի սպասող խուժանը գրանից աւելի յարմար ժամանակ չէին գտնի թէ հարստանալու, և թէ հայերի ցնցումները վերջնականապէս լռեցնելու:

Եւ 1896 թուի յունիսի 2-ին՝ քուրդ ու տաճիկ հօրդաները կատաղի աղաղակներով յարձակուում են դրսի թաղերի վրայ, հայերին դնե-

լով նեղ դրութեան մէջ: Ժողովուրդը յանկարծակիի եկած՝ մանաւանդ ծայրերի տնուորները, սարսափահար զէպի հիւպատոսարաններն են վազում՝ ափսոսեղ ապաստանելու: Մութը վրայ է հասնում. գազանները յետ են դառնում, լուսաբացին՝ տաճիկ հոգևորականների քարոզած «սուրբ գործը» վերսկսելու:

Հայերը տեսնելով, թէ Իլդիզի դահիճը սրպիսի հրէշային դաւեր է նիւթում իրանց համար, վճռում են մեռնել, բայց ոչ անպատիւ մահով: Հազար, հազար հինգ հարիւրի չափ զինուած կտրիճներ (մի խոշոր թիւ՝ սրսորդական ու շէշխանայ հրացաններով), զինուորական համազգեստ հագած, — Արմենականներ, Դաշնակցականներ և Հնչակեաններ միացած մի սուրբ գաղափարով, ձեռք-ձեռքի տուած հանդէս են գալիս՝ բազմաշարչար ժողովրդի դատը հրացանների գնդակներին ապաւինելու: Հնչակեանների ընդհանուր խմբապետ-հրամանատարն էր Ղարաբաղի Վարանդա գաւառի Փիլըշամալ գիւղացի Մարտիկը (Մարտիրոս Սարուխանեան, ուսանող Պետրօզքաղի համալս.), Դաշնակցականներինը՝ Պետօն (Ալէքսանդր Պետրոսեան, Ալէքսանդրապօլցի), իսկ Արմենականներինը՝ Մկրտիչ Աւետիսեան Թէրլէմէզեանը՝ Վանեցի: Կոռուղները բաժանուելով 30—35 խմբակների, տարածուում

են Սյգեստանում՝ թշնամուն արժանաւոր կերպով ընդունելու համար:

Հետեւեալ օրը կռիւն սկսւում է, որ շարունակւում է մինչև յունիսի 8-ի իրիկունը. ամբողջ եօթն օր մի բուն հայ կտրիճները զարմանալի հերոսութեամբ դիմադրում են քսան հազարից աւել քրդերին ու զօրքերին, դիմադրւում բերդից ցած բերած թնդանօթներին, նոյն իսկ նրանցից երկուսը գրաւում մի խիզախ յարձակումով, և ո՞վ գիտէ, ինչով կը վերջանար, եթէ տաճիկ կառավարութիւնը կանխած չլինէր այն հոյակապ ծրագիրը, որ Դաշնակցութիւնն էր ծրագրել Վասպուրականի վերաբերմամբ:

Մեծ է լինում կռիւը, արիւնահեղ, կատաղի, պատերազմական բոլոր կանոններով. — դիրքեր, ջրերով լցրած լճացրած փողոցներ, կտրւած, իրար վրայ գարսած ծառեր, գրոհներ, հակադրոհներ, դիակներ... արիւն ու կրակ: Նկարագրել այդ կռիւն սկզբից մինչև վերջ՝ կը նշանակէր մի ամբողջ գիրք գրել, այնքան շատ են միջնադէպերն ու հետեանքները:

Հինգշաբթի օրը, յունիսի 6-ին, անգլիական հիւպատոս միստր Ուիլեամսը երևում է հայ մարտիկների դիրքերի առաջ և պնդում, որ ապաւինեն սուլթանի ողորմածութեանն ու ցած գնեն զէնքերնին. հայերը մերժում են՝ շատ լաւ ծանօթ լինելով սուլթանական ողորմածութեանը:

Պրանից յետոյ աւելի կատաղի թափ է ստանում կռիւը, իսկ իրիկնադէմին ամերիկական միսիօնէր Ռէյնօլդսն է գնդակներից աներկիւղ պտտում հայոց թաղերն ու բարձրաձայն կանչում, որ կանայք, աղջկերք ու երեխաներ անպայման հաւաքուեն բողոքականաց տները: Այդ նշանակում էր, որ մի զարհուրելի բան պէտք է տեղի ունենար. բայց մահից աւելի ուրիշ ինչ կարող էր լինել. իսկ մահից վախեցող չկար:

Յունիսի 7-ին հիւպատոսները, նախնական բանակցութիւն ունենալուց յետոյ, ժամը 11-ին գալիս են թիւթիւնջեանցների տունը, այնտեղ են գալիս և Աւետիսեանը, Պետօն, Մարտիկն իրենց թիկնապահներով և միստր Ռէյնօլդսը: Զինաթափման և անձնատուր լինելու պահանջը մերժւում է. պարսից հիւպատոս Միրզա-Հուսէյին խանը արտասուքն աչքերին՝ խնդրում է ամեն կերպ զիջել, արիւնհեղութեան առաջն առնելու: Վերջապէս, երկար խօսակցութիւնից և անգլիական հիւպատոսի տաճիկ կառավարութեան ներկայացուցչի հետ բանակցելուց յետոյ՝ ընդունւում է հետեւեալ պայմանը. — վաթսուն զինուած մարդիկ իրենց զէնքերով յանձնուեն ուսաց, պարսից և անգլիական հիւպատոսներին. այդ մարդկանց մի փոքր մասը, երաշխաւորութեամբ և ապահովութեամբ թիրքաց երկրից հեռացնուելով՝ եւրոպական մի օրև է

ձեռքից մեռնել, քան թէ քրդի ու տաճկի, մենք այստեղ չենք մնայ, մենք էլ ենք դուրս գալիս ձեզ հետ դէպի սահման, — այդ բոլորին Վազգէնն է դուրս գալիս, Վասպուրականի այդ անգուղական գործիչը, և սրտի յուզմունք ու կրակն աչքերում ցուցնելով՝ կանչում։

— Չէ, չէ... մենք ոչ մի տեղ չենք գնայ. մենք կըմնանք մեր երկիրը շէնացնելու. մնանք, ես էլ ձեզ հետ եմ։

Եւ ժողովուրդը մի քիչ յուսադրուած, սակաւ բացառութեամբ՝ մնում է։

Մնում է և՛ Վազգէնը։

Ահա այդ Վազգէնն էր, որ 1896 թուի օգոստոսի 18-ի լոյս 19-ի գիշերը Վարդանի հետ դիմաւորեցին մեզ Այգեատանի արևելեան ծայրում գտնուող մի անակում։

III

Վազգէնը (Տիգրան Դէրոյեան) բուն Վանեցի էր. տուն ունէր, բայց այնտեղ ապրել չէր կարող, նախ, որ տաճկական «արդարադատութիւնը» նրան որոնում էր, և երկրորդ, որ տունը դադարկ էր։ Քոյրը, Զարուհին ձերբակալուած՝ մօր հետ բանտումն էր, իսկ միւս երկու փոքրիկները, քոյր և եղբայր՝ մնացել էին իրենց անաղջիկ Խոռիկի ինամատարութեան տակ, բարեկամների մօտ։

Նրանց ահագին, շէն տունը նոր էր դադարկուել, մայիսի վերջին օրերին։ Գալիս են տաճիկ ոստիկանները՝ տունը խուզարկելու. Վազգէնը խոյս է տալիս, ազատում. իսկ խուզարկուները Զարուհու մօտ և տան դադանի պահարաններից մէկում գտնում են Դաշնակցութեան պատկանող այնպիսի իրեր ու թղթեր, որոնցով հեշտութեամբ կարելի էր ապացուցել, թէ՛ բացի Վազգէնը, այդ սմանն ապրում է և՛ մի ուրիշը, որ պատասխանատու դեր ունի Դաշնակցութեան գործում՝ սուլթանական կառավարութեան դէմ պայքարելու համար։ Եւ իսկապէս, Պետոն այնտեղ էր ապրում։ Նրա Վանում լինելը գիտէին, բայց որտեղ ծածկուելը՝ չէ. ահա այդ գաղտնիքը այժմ բացւում է, և Զարուհուն ու մօրը սպառնալով զժոխային պատիժներ՝ Վազգէնի ու Պետոի ուր փախչելն էին ուզում իմանալ։ Խուզարկութեան ժամանակ գտնում են և՛ մի քանի տետրակներ. — դրանք Զարուհու տետրակներն էին. Պետոն նրան ռուսերէն էր սովորեցնում և տետրակներում ռուսերէն դասերն էին գրուած։ Մանաւանդ դա շատ է բարկացնում կառավարութեան ներկայացուցիչներին, և նրանք էլ աւելի են խստացնում քննութիւնը, «յանցաւոր» օրիորդին բանտ ուղարկելով, որին ընկերակցում է և՛ մայրը։

Պետոն կովկասից Վասպուրական անցնելով՝

ձեռքից մեռնել, քան թէ քրդի ու տաճկի, մենք այստեղ չենք մնայ, մենք էլ ենք դուրս գալիս ձեզ հետ դէպի սահման, — այդ բոլորին Վաղգէնն է դուրս գալիս, Վասպուրականի այդ անգուգա-կան գործիչը, և սրտի յուզմունք ու կրակն աչքերում ցոլացնելով՝ կանչում:

— Ձէ, չէ... մենք ոչ մի տեղ չենք գնայ. մենք կըմնանք մեր երկիրը շէնացնելու. մնանք, ես էլ ձեզ հետ եմ:

Եւ ժողովուրդը մի քիչ յուսադրուած, սա-կաւ բացառութեամբ՝ մնում է:

Մնում է և՛ Վաղգէնը:

Ահա այդ Վաղգէնն էր, որ 1896 թուի օգոստոսի 18-ի լոյս 19-ի դիշերը Վարդանի հետ զիմաւորեցին մեզ Այգեատանի արևելեան ծայ-րում գտնուող մի տնակում:

III

Վաղգէնը (Տիգրան Դէրօյեան) բուն Վանեցի էր. առն ունէր, բայց այնտեղ ապրել չէր կարող, նախ, որ տաճկական «արդարադատութիւնը» նրան որոնում էր, և երկրորդ, որ տունը դադարկ էր: Քոյրը, Զարուհին ձերբակալուած՝ մօր հետ բանտումն էր, իսկ միւս երկու փոքրիկները, քոյր և եղբայր՝ մնացել էին իրենց տնաղջիկ Խոսիկի խնամատարութեան տակ, բարեկամների մօտ:

Նրանց ահագին, շէն տունը նոր էր դադարկուել, մայիսի վերջին օրերին: Գալիս են առձիկ ուս-տիկանները՝ տունը խուզարկելու. Վաղգէնը խոյս է տալիս, ազատոււմ. իսկ խուզարկուները Զա-րուհու մօտ և տան գաղտնի պահարաններից մէ-կում գտնում են Դաշնակցութեան պատկանող աշխարհի իրեր ու թղթեր, որոնցով հեշտու-թեամբ կարելի էր ապացուցել, թէ՛ բացի Վաղ-գէնը, այդ սահման ապրում է և՛ մի ուրիշը, որ պատասխանատու դեր ունի Դաշնակցութեան գործում՝ սուլթանական կառավարութեան դէմ պայքարելու համար: Եւ իսկապէս, Պետօն այն-տեղ էր ապրում: Նրա Վանում լինելը գիտէին, բայց որտեղ ծածկուելը՝ չէ. ահա այդ գաղտ-նիքը այժմ բացոււմ է, և Զարուհուն ու մօրը սղառնալով դժոխային պատիժներ՝ Վաղգէնի ու Պետօի ուր փախչելն էին ուզում իմանալ: Խու-զարկութեան ժամանակ գտնում են և՛ մի քանի տետրակներ. — դրանք Զարուհու տետրակներն էին. Պետօն նրան ուսերէն էր սովորեցնում և տետրակներում ուսերէն դասերն էին դրուած: Մանաւանդ դա շատ է բարեկացնում կառավա-րութեան ներկայացուցիչներին, և նրանք էլ ա-ւելի են խստացնում բնութիւնը, «յանցաւոր» օրիորդին բանտ ուղարկելով, որին ընկերակցում է և՛ մայրը:

Պետօն կովկասից Վասպուրական անցնելով՝

իր հետ միայն ազատագրութեան կրակն ու ծրագիրը չէր բերել. — սարերի խոռոչներում կըծկուելով, ցերեկները թագնուած, գիշերները ճանապարհ կտրելով՝ նա իր հետ բերել էր և մի ուրիշ բան. — ռուսական կուլտուրան, ռուս գիրը: Եւ նա գաղտագողի, միշտ ձերբակալուելու վտանգին ենթակայ, որքան թոյլ էր տալիս դրութիւնը, ռուսական կուլտուրան էր պատուաստում Տաճկաստանի մի անկիւնում. կուլտուրա, որ տաճկականից անթիւ անգամ բարձր էր: Մենակ Պետօն չէր. ուրիշներն էլ իրանց թէև շատ աննշան, դերն ունէին այդպիսի գործերում... մի զարմանալի բնագոյ, մի գօրեզ, ջերմ զգացմունք միշտ եղել է Վասպուրականի գործիչների մէջ գէպի Ռուսաստանը. և որքան էլ Ռուսաստանում չէին ուզում հասկանալ Տաճկաստանում գործող հայ գործիչներին և նոյն իսկ գտնուեցաւ մի տարր, որ միանգամայն անբարեհաճ վերաբերմունք ցոյց տուաւ գէպի տաճկահայ գաղթ, այնուամենայնիւ հայերը չը թերացան իրենց հաւատքի մէջ գէպի Ռուսաստանը և մեծ յուսով սպասում էին, որ վերջիվերջոյ՝ հայի առաջադիւնքը կըճատորոն այդ հօգօր պետութիւնը պէտք է լինի: Եւ Վազգէնը, այդ երգուեալ յեղափոխականը թարգման էր բոլորի տրամադրութեանը, երբ Արարուց թաղի մի կի-

սախանձ տան մէջ ունեցած մեր զրոյցի ժամանակ ասում էր.

— Ռուսաստանը եթէ մատը ցցի, սուլթանը ձեռք կըքաշէ մեզնից. Ռուսաստանը այդ չի անում. ինչո՞ւ համար. — որովհետեւ... — նա թափում էր այստեղ իր սրտի դառնութիւնն ու աւելացնում. — բայց և այնպէս մենք չենք դադարի մեր գործը շարունակելուց՝ խորապէս համոզուած լինելով, որ երբ և իցէ Ռուսաստանը կըզգայ իր իրական շահերը Տաճկա-Հայաստանում. և նա այդ զգաց թէ չէ՝ կըվերջանան մեր տանջանքները: Ապա սկսում էր ապացուցել, թէ ինչո՞ւ ոչ Անգլիան, Ֆրանսիան կամ Գերմանիան, մի խօսքով՝ Եւրոպան, այլ Ռուսաստանը, նրա կամքը միայն կարող է մեզ օգնութեան հասնել:

Չուրանալով ու շեշտելով Ռուսաստանի կարեոր դերը հայկական հարցում, Վազգէնը մի առանձին, անդրդուելի հաւատ ունէր գէպի հայի կորովը, գէպի գէնքը, մարտիկ ուժերն ու գէպի Վասպուրականի, մանաւանդ Վանի ժողովուրդը: Եւ երբ մի վէճի ժամանակ, Վազգէնի հետ չհամաձայնելով՝ վշտացած արտով սկսեցի դատափեալ Վանի ժողովրդին, որ նրանք թուրամորթներ են, որ ազատագրման գաղափարը նրանից շատ հեռու է, զրան ապացոյց՝ որ մեզ տեղ չեն տալիս, տոմսակներով, նամակներով ու գանա-

զան միջոցներով ումբակոծում են մեզ ու գրեթե պահանջում թողնել Վանը, դուրս գալ այնտեղից, որ Վանեցիք նոյնիսկ պատրաստ են մեզ մատնելու, կառավարութեան ձեռքը յանձնելու, երբ այդ բոլորը գառնութեամբ դուրս թափեցի, Վազգէնը սրբապղծութիւն գտնելով ասածներին մէջ՝ գրեթե գոռաց.

— Լո՛ւր, լո՛ւր... Ռուսաստանից հայհոյանք ես բերել մեզ համար... Կոյր, միայն կոյր պէտք է լինել, կամ վերին աստիճանի անխիղճ՝ այդ տեսակ վճիռներ կարգալու համար, մինչդեռ մեր քաջերի (Վանեցիների) արիւնը դեռ չէ չորացել:— Ապա խիստ համոզեցուցիչ ու ոգևորւած կերպով իր միտքն ընդարձակելով՝ վերջացրեց. — Պէտք է կռուել, միշտ կռուել, շարունակ կռուել, թէև ամբողջ Հայաստանում մի հատիկ հայդուկ միայն մնայ:— Մի առարկութիւն, որին հոգով, սրտով համաձայն էի, որ իմ դաւանանքս էր:

Իսկ Վազգէնի միւս պատճառաբանութիւնները, որ բերուած էին իմ կարծիքս ջրելու Վանեցիների վերաբերմամբ, ես գտայ չհիմնաւորուած, բայց դեռ մեր վէճը չէր հնացել, որ փաստերը եկան իմ ասածներս, յուրախութիւն իմ՝ կատարելապէս, առանց մնացորդի հերքելու: Փաստեր, որոնց արձանագրելու միտքը չունիմ այստեղ:

IV

Վանն արդէն խմորուած էր ազատման կրակով. ոչ մի թնդանօթ, ոչ մի արեան հեղեղ նրան հանգցնել այլ ևս չէր կարող: Ծիշտ է, յունիսեան արհաւիրքներից յետոյ հրդեհը հանգածի էր նմանում, սակայն այդ՝ առերևոյթս միայն մոխիրների տակից առկայծուող կրակի ջերմութիւնն էր զգացւում, որ պատրաստ էր առաջին իսկ յարմար հրահրումից՝ դարձեալ բոցերի խուրձեր դուրս շարտելու:

Չնայելով կառավարութեան ձեռք առած զրակօնական միջոցներին՝ Վանը, Վասպուրականի կենսատու երակը գործում էր գաղտնի, բայց յարաճուն եղանակով: Այդ ծանր, մղձաւանջային օրերում՝ Վանը մի փոքրիկ պարլամենտ էր ներկայացնում իրանով. այս ու այն վերատակնւում, այս ու այն անկիւններում, այդ բոպէին՝ Մեծ գործի համար աշխատում էին շատ տեղերի մարտիկ-գործիչները. Խաչէնը, Վարանդան, Գողթնիքը, Հայոց-Չորը, Շատախը, Մոկսը, Բուլանը իրանց որդիներն ունէին այդտեղ, իսկ Վանը՝ իր երիտասարդութեան, մանուաւնդ պատանիների մեծամասնութիւնը:

Այդ պատանիներն էին, որ ազատագրութեան գաղափարի աւազանում մկրտուած՝ այժմ

երիտասարդներ դարձած, Վանի անթառամ պատկին՝ մայիսին նոր դափնիներ աւելացրին... և այդ պատանիներն էին, որ այն ժամանակ մեղմում էին մեր ծանր կացութիւնն իրանց անգնահատելի ծառայութիւններով: Դրանց մի տեղ «Գավրօշներ» էի անուանել. բայց Վ. Հիւզօն Գավրօշին ստեղծել էր իր բօմանտիկ գրչի ուժգին շարժումով, հսկայական երեւակայութեան յուժկու թափով, մինչդեռ, — կեցցէ Վանը, — նրա Գավրօշները մեր աչքի առաջ էին, և նրանց կատարածը՝ շօշափելի: Այդ 14—15 տարեկան Գավրօշներն էին, որ երբ մենք ամբողջ խմբով Վարդայ ծերպերին թառած սովից մղկտում էինք, նրանք Վանից, որտեղից, ինչպէս ասում են, թռչունն իր թևով դուրս թռչել չէր կարող տաճկական օդակներից, շարսկով մեզ համար հաց և Վարդանի տոմսակը բերին... յոգնած, քրտնաթոր, բայց երանաւէտ ժպտով...

V

Վազգէնի փափազը կատարուեց. 1896 թ. սեպտեմբերի 10-ին, Աղուխաձորի թաղում տաճիկ զօրքերը յարձակուեցին Պետրոս Սերեմճեանի դիրքի վրայ. կռիւն սկսուեց, բայց Վազգէնը մասնակցել չէր կարող: Ես, Վարդանն ու Գուրգէնը կազդուրուել էինք հիւանդութիւնից,

իսկ նա դեռ զառանցում էր տիֆի ջերմութիւնից, բայց հէնց որ հրացանների առաջին ճոռոցները տարածուեցին Այգեստանում, Վազգէնը կարծես մի կենարար տեղից կեսնք ստացած՝ կմախքացած մարմնով բարձրացաւ տեղից, հրացանի փողը գգուեց և դեղնած դէմքը զէպի Աղուխաձորի կողմը դարձրած՝ յուզմունքով լի աչքերը յառեց տարածութեան մէջ և մրմնջաց դալկացած շրթունքներով. — կռիւ, կռիւ... ապա ուժերն սպառուած՝ նորից ընկաւ, իրան յանձնելով զառանցանքներին:

Հետևեալ օրը Շաքիր փաշան Վան ժամանեց. նա եկել էր հայերին «շնորհուած» ուէֆօրմներն իրագործելու. — Ռէֆօրմներ իրագործել... այդ մենք շատ լաւ էինք հասկանում. աւելի քան լաւ գիտէինք, թէ Շաքիր փաշան ծրագիրներն ինչպէս պէտք է իրագործէ, և սպասում էինք, պէտք է խոստովանուել, միանգամայն հանգիստ սրտով: Շուտով սկսեցին ուէֆօրմներն «իրագործել». — թնդանօթներն ու հրացանները Այգեստանի զանազան թաղերում ու մեր դիրքերում զգրգալով՝ Շաքիրի բերած «բաւենորոգումներն» աւետեցին:

Վազգէնին կնկայ շորեր հագցնելով, թևերի տակ մտած՝ մի կերպ մի ապահով տեղ թոցրին Վարդանի դիրքից, որ ումբակոծւում էր լեռնային թնդանօթներով: Մեր դիրքի դէմուդէմ՝ Վա-

նեցի Պօղոսի այգին էր գտնուում: Պօղոսը ուշք չդարձնելով վտանգին՝ մի անգլին կթոց խաղող բերաւ մեզ մօտ ու դուրս վազեց՝ միւս գիրքերից տեղեկութիւններ բերելու: Դա Պօղոսն էր, Պօղոս-Պետրոսը, որ 1896-ից մինչև 1908-ը բոլորանուէր իր գործը շարունակեց, առևտրականի անուան տակ կարավանով գէնքեր ներմուծելով Վան, և որ 1908-ին խաչանում Սարայի գայմագամ Զէվդէթ-բէյի ու Շամսկիի քուրդ ցեղապետ Քեամալ-բէյի ձեռքն ընկնելով՝ մեռաւ հերոսական մահով, և գէնքերի տեղը ցոյց չտուաւ մինչև անգամ այն ժամանակ, երբ իր 12—13 տարեկան որդուն իր աչքերի առաջ նայեցին*):

Ժամը 4-ին մօտերը, երբ կոիւն աւելի կատաղի բնոյթ է ստանում, հիւպատոսներից մէկը ցանկանում է տեսնուել հայ մարտիկների հետ, բայց ինչ-ինչ նկատումներով մերժում է: Այն ժամանակ, նա դրաւոր կերպով դիմում է. «Եթէ ժողովրդի բարելաւութեան, անդորրութեան նախանձախնդիր էք, դադարեցրէք կոիւր, անձնատուր եղէք. ձեզ ոչ մի վտանգ չի սպառնում. ոռոսահպատակները երաշխաւորութեամբ և ամենայն ապահովութեամբ Ռուսաս-

*) Այդ սխրագործութեան համար Զէվդէթ-բէյը «պայտառ» տիտղոսին արժանացաւ, և այնուհետև «նալըանդ» գայմագամ էր կոչւում:

տան կուղարկուեն, իսկ տեղացիները թեթև պատիժ կը կրեն»:

Դրան բերանացի պատասխան է տրուում. — «Մենք երբէք անձնատուր չենք լինի. և եթէ հարկ եղաւ՝ պէտք է կռուենք մինչև մեր արեան վերջին կաթիլը: Իսկ եթէ խնայում էք ժողովրդին, միջնորդեցէք, որ դադարեցնեն պաշարումը և մենք դուրս կըգանք այստեղից»:

Միջնորդութիւնն իսկապէս եղաւ, բայց պաշարումն աւելի սաստկացաւ: Մինչև մութն ընկնելը կռուելուց յետոյ, բոլոր խմբերը գիշերը դուրս եկան Վանից և ուղղուեցին դէպի Հայոց-Ջորը՝ այնտեղից Շատախի կողմերն անցնելու: Այդ միացումը, ճանապարհից սխալուելու պատճառով, տեղի չունեցաւ, և մի մասը, Վարդանի առաջնորդութեամբ, ծուռում է դէպի Պարսկաստան, իսկ մենք՝ դէպի Շատախ—Մոկս:

Երբ այժմ յիշում եմ Վանի այդ դէպքերի մանրամասնութիւնները, ես չեմ գարմանում, թէ ինչպէ՞ս պատահեց, որ կանոնաւոր զօրքերը թագանօթներով հանդերձ՝ չկարողացան մեզ ոչնչացնել և իրանց բազմաթիւ զոհերի դէմ՝ մեղահից միայն մի զոհ տարան, կարճկանցի Գրիգորին. — այլ հիանում, սքանչանում եմ Արծրունեաց քաղաքի արծուի ճուտերով, այն երիտասարդներով ու անձնուէր օրիորդներով, և այն պատանիներով, որ պատից-պատ, այգուց-այգի

թռչելով, արհամարհելով ամեն տեսակ վտանգներ՝ դիրքից-դիրք էին վազում, թշնամու շարժումներն ուսումնասիրում և մեզ տեղեկացնում:

Շաբաթներ անցնելուց յետոյ, երբ մենք դարձեալ Վարազայ սարն էինք բարձրացել և ըստ սովորականին տանջում էինք քաղցից, «Ձիաթոնուկի» վրայ երեք հոգի երեացին՝ շալակներին ինչ որ բեռ ունենալով. նրանք եկան, հասան մեզ ու ցած դրին բեռները՝ լի հացով: Մեր հոգու հատորներն էին նրանք, Վանայ պատանիները, 15—16 տարեկան, որ մեր նեղ ժամանակն էլի օգնութեան էին հասնում...

Վանից դուրս գալուց յետոյ՝ այն ամերը, որտեղ մենք դիրք էինք բռնել, կառավարութիւնը վառել, գետնին էր հաւասարեցրել: Այգտներից մէկը գեղեցիկ, մեծ, երկյարկանի շինութիւն էր, որտեղ դիրք էր գրաւել Սերեմճեանը՝ 10 հոգով: Նրա տեղն էլ այժմ մոխիր էր... Եւ այժմ, երբ մենք Վանից բերուած հացն էինք վայելում, պատանիներից մէկը հոգեգմայլ, ոգևորութիւն ցուցադրող հայեացքով մեզ ու մեր սպառազինութեանն էր նայում: Ծանաչեցինք: Հէնց այն տան պատանին էր, ուր Սերեմճեանը դիրք էր բռնել և որ տաճիկները վառել էին... Այդպէս, մեր պատճառով նրանց տունը հիմնայաւակ աւերել էին, իսկ նա մեզ համար շալակած հաց էր բերում...

Գիշերը ցուրտ էր, իսկ պատանիներն ան-

պատճառ ցանկանում էին գոնէ մի գիշեր հայդուկային կեանք անցկացնել, մեզ հետ մնալ: Մենք ցրտերին վաղուց արդէն սովոր էինք. իսկ նրանք՝ մատաղ, դեռ չհասունացած կազմուածքով. նրանցից մէկին տուի փատտակա, որ ծածկուի, և տալրակա, որ գնի զլխատակին. նոյնը և ընկերներս՝ միւս պատանիներին. — միայն այդ ձևով կարողացանք ցոյց տալ մեր անվերջ սէրը, մեր քթբացող զգացմունքները դէպի այդ փոքրիկ հերոսները, դէպի Վանայ, Վասպուրականի այդ չքնաղ գաւակները, որոնց հոգու մէջ արդէն իսկ Վազգէնի, Աւետիսեանի ու միւսների դաւանանքն էր պլպլում: Նայում էինք նրանց ու միխթարում, թէ՛—չէ՛, Վանը չի մեռնի, Տաճկա-Հայաստանը կը վերածնուի երբեք, որովհետեւ նա աշխարհի գաւակներ է ծնում:

VI

«Պատմական Վասպուրականն ունէր 37 գաւառներ. — Տոսպ, Ռշտունիք, Կրճունիք, Ծուաշոտ, Անձախաձոր»... — շարում էինք մենք մի ժամանակ զպրոցում՝ աշխատելով Միխթարեանների քարտէզի վրայ նրանց սահմանները որոշելու: Այն ժամանակ դա մեզ համար միայն Հայաստանի աշխարհագրութեան մի դաս էր, որ պէտք է լաւ սովորէինք՝ դասարանում չմնալու

համար. բայց տաճիկ կառավարութիւնն օգնութեան հասաւ, և յետագայում կարողացանք ըմբռնել, որ Վասպուրականը (ինչպէս և ամբողջ Տաճկա-Հայաստանը) լոկ մի աշխարհագրական տարածութիւն չէ՝ սահմանաւորուած գունաւոր գծերով, այլ մի կենդանի օրգանիզմ, որ հազարաւոր տարիների կեանք ունի և մենք մասնիկներն ենք այդ օրգանիզմի, և որ նրան հասնող հարուածներն ու ժգնօրէն անդրադառնում են մեր հոգու, մեր սրտի վրայ. մենք գիտակցօրէն զգացինք մեր երկրի գոյութիւնը. գիտակցեցինք, որ այդ երկիրը հայերինն է եղել և պե՛տք է լինի. որ նա մի երկիր է, որտեղ ամեն մի քար բարձրաձայն աղաղակում է հայի անցեալի մասին, ուր մենք մեր փառքն ու վիշտն ենք ունեցել, և որտեղ ահա գիշակեր գազաններն են ժանիքնին կափկափում, հայութեան օրրանում պատսպարուած մնացորդները բզբտելու, հայի անունը գերեզմանաքարին գրելու. և մի ներքին ազնիւ ձայն կանչում էր հրամայողաբար. — Զոհեցե՛ք աւնն ինչ, փրկեցե՛ք Տաճկա-Հայաստանը:—

Եւ երբ սահմանն անցնելով՝ Վասպուրականի հողը մտանք, սարերն ու ձորերը, գետերն ու դաշտերը բերան առած՝ խօսում էին մեզ հետ, և մենք տասնեակ դարերի հնութեան միջից մեր նախնիքների շունչն էինք զգում, նրանց ձայնը լսում...

Այստեղ, որտեղ ահա մենք ենք կանգնած, աչքերնիս Վանին յառած, նոյն այս տեղը դարեր-դարեր առաջ Ռշտունեաց տէր Գարեգինը չէ՛ր կանգնել, արդեօք, և վրիժոյ հուրը սրտում, հայեացքը շեշտակի սեւեռել Վանին, ուր Ռշտունեաց տիկինը, Վարդանի քոյր Համազասպունհին էր արգելուած ազգադաւ Մեհրուժանի ու Վահանի ձեռքով:

Այս կարկաշուն աղբիւրները, որ այսպէս մեղմախօս խոխոջիւնով իջնում են Վարազի կուրծքն ի վար, նոյն այս տեղը հազարաւոր տարիներ առաջ Գաղիկ թագաւորը չի՞ զուարճացել ջրի պաղութիւնով, չի՞ հիացել սքանչելի տեսարաններով, չի՞ ասել. «Անուշ են իմ երկրիս ջրերն ու բնութիւնը»:

Անցնում ենք Խօյից Վան իջնող մեծ ճանապարհով. և ս՛վ գիտէ, հէնց նոյն այս ճանապարհով, նոյն այս ժայռի կողքովը 1500 տարի առաջ չի՞ անցել Վարդանը իր վաթսուն հազարանոց բանակի հետ դէպի Արտաշու դաշտը, այնտեղ ճակատելու թշնամու դէմ:

Առաջներս է Շամիրամայ ջուրը, վճիտ, յստակ... Արա-Գեղեցիկ, Շամիրամ... յարալէզք... Ահա և Անգղը. — զօրքերի ու քրդերի գնդակներն են տեղում ամեն կողմերից. ընկնում է Խէչօն, ընկնում է Դաւիթը, վիրաւորւում մի քանիսը. — պատմութիւնը կրկնւում է: — 15 դար սրանից

առաջ Ղևոնդ երէցը ժողովրդի հետ միացած՝ դա-
զանակներով դիմաւորեց Անգղ զիւղում պար-
սից մոգերին, որոնք գալիս էին Հայաստանում
պարսկական ատրուշանները կանգնելու. և 15
դար յետոյ, այսօր, երբ ինչօն, Դաւիթը գնդա-
կահար ընկան այստեղ, իրանց երկրի ազատու-
թեան համար մղուած կռոււմ, նոյն այս տեղը
չի՛ գլորուել, արդեօք, մէկն այն մոգերից, որ
հայի կրօնը, եկեղեցին ջնջելու էր եկած, և այն
Ղևոնդ երէցի ոգին չէ՛ր, որ դարերի հնութիւնից
վեր սաւառնած՝ իջել էր Դաւթի ու ինչօն վրայ,
նրանց մղելով դէպի մահ, յանուն ազգի փրկու-
թեան...

Այդպէս էինք մտածում մենք, «զրսեցիներս».
հապա ինպէ՞ս կը մտածէին իրենք՝ Վասպուրա-
կանցիները, որ վաղմուց արդէն գիտակցել էին
իրանց իրաւունքները, այդ իրաւունքների հա-
մար կռուելու քաղցրութիւնն զգացել. նրանք,
որ մշտական հանդիսատեսն էին նախահօրց յի-
շատակարաններին. մանաւանդ նրանք, որոնք
բացի այսօրուայ, իրանց ապրած պատմութիւ-
նից, գիտէին և հինը, հայի անցեալ պատմու-
թիւնը:— Իսկ այդպիսիների թիւը քիչ չէր Վաս-
պուրականում և նրանք արժանաւոր ժառանգ-
ներ եղան Ռշտունիների, Արծրունիների...

Թէոդորոս Ռշտունի, Սահակ եպիսկոպոս
Ռշտունի, Մանածիհր Ռշտունի, Գրիգոր Նարե-

կացի Ռշտունեաց գաւառի... սովորեցնում էր
մեզ մեր պատմութիւնը, և Վասպուրականի
Ռշտունիքն էինք աշխատում պատկերացնել մեզ
իր լեռներով, ահաւոր անդունդներով, իշխանա-
նիստ Ոստանով ու վահաններով զինուած բնա-
կիչներով.— Ես ի՞նչ իմանամ, այժմ այդ քաջա-
մարտիկ, հռչակաւոր մարդկանց մէկն ու մէկի
սերունդերից չէ՛ր Ախպէրը, որ Մոկաց լեռնե-
րում ազատեց մեզ յուսահատ զրութիւնից:

Աւելի կարճահասակ՝ քան միջահասակ, նոսր,
բայց երկար միւրուքով մի մարդ էր նա. Մոկ-
սից Շատախ, Շատախից Հայոց-Ջոր, այդտեղից՝
Վան, Վանից՝ Պարսկաստան, դարձեալ Վան,
Աբաղա, Փխան-դաշտ, Գեաւաշ, — ամբողջ Վաս-
պուրական ու Մոկսի մի մասը նա ոտի տակ էր
տուել, միշտ կռիւներում, հրացանը ձեռքին:
Գուցէ ուրիշ անուն ևս ունէր նա. մենք չգի-
տէինք. նրան բոլորն Ախպէր էին կանչում և
գիտէինք, որ Ռշտունեաց գաւառից է ու շատ է
սիրում Նարեկայ վանքը, երեւի նրա համար, որ
ինքն ու Գրիգոր Նարեկացին միևնոյն գաւառից
էին:

Ախպէրը կրօնասէր հայ էր. չորս փամփըշ-
տակալներ մէջքին ու ուսերին ամբարցրած, հրա-
ցանը ձեռքին, կռուին հարկաւոր շատ պատ-
կանելիքներ գօտկուց կախկիսած՝ նա գօտկուց
կախած մի փոքրիկ քսակ ևս ունէր և նրա մէջը

խնամքով դրած մի փայտակազմ Նարեկ... Հրացան ու Նարեկ.—հակառակ ծայրեր.—մէկը վառօղ է ծխում, միւսը՝ կնգրուկ. բայց երկուսն էլ անբաժան Ախպօրից: Ախպէրը սիրում էր աղօթել, սիրում էր եկեղեցին. բայց նրան չէին թողնում ազատ աղօթելու, իսկ եկեղեցիներն աւերում էին. և Ախպէրը վերցրել էր հրացանը՝ իր Նարեկը պաշտպանելու համար.—Թէոդորոս Ռշտունին և Գրիգոր Նարեկացին ի մի ձուլուելով՝ դարեր յետոյ Ռշտունիքում մեր առաջն էին դուրս եկել ի գէմս Ախպօր:

Այդպիսի Ախպէրների թիւը որքան տւելացաւ մի քանի տարի յետոյ. էլ ի՞նչ ոյժ կարող էր նրանց խեղդել, որ սուրբ՝ արմատից կտրել. երկիրն ինքը յղացած հրաշագեղ երկունքով՝ Ախպէրներ, Վազգէսներ, Բագիկներ ու Աւետիսեաններ էր ծնում: Գէորգ-Չառուշ, Սերոբ-Փաշա, Փոխիկներ, Շահէսներ ընկան պայքարում, բայց երկիրը բեղմնաւորուած՝ մէկի տեղ տասը, տասնի տեղ հարիւրներ հասցրեց և երեւակայականը շօշափելի դարձաւ, վերացականը՝ կերպարանաւորուեց. ազատագրման գաղափարը հաւատոյ հանգանակ դարձաւ հայերի համար:

Եւ եթէ Տաճկա-Հայաստանը մի օր սար ու ձոր թնդացրեց ուրախական ճիչով, թէ՛—ես ազատ եմ,—որին հաւատում ենք անդրդուելի հաւատով,—ապա դրա մէջ Վասպուրականը, Վանը

ևս իր նշանաւոր դերն ունեցած կրլինի:

Անցեալ տարի, հոկտեմբերի 16-ին, տաճկական երկու յաժանաւեր գաղտնագողի մօտենալով Սև-Ծովի ափերին՝ ոմբակոծեցին մի քանի քաղաքներ: Տաճկաստանը շահագործելով Ռուսաստանի համբերութիւնը, ամիսների ընթացքում էշերով ու ուղտերով զօրք ու ռազմամթերք կենտրոնացնելով Կովկասի սահմաններում, առանց կոխ յայտարարելու՝ անակնկալ կերպով յարձակում է գործում, յանկարծակիի բերելու հօր հարեանին: Սակայն Ռուսաստանը կատարեալ հանգստութեամբ ընդունեց այդ մարտահրաւէրը և Կայսրը նոյն ամսի 20-ին մի հրովարտակով, որ սլատերագին սկսուելն էր յայտարարում, ասում է. «Առաջին անգամը չէ, որ ռուսական յաղթական զէնքը յաղթահարում է տաճկական հօրդաներին. նա այս անգամ էլ կը յաղթէ մեր Հայրենիքի յանդուգն թշնամուն», «քրիստոնէական հաւատի հին հալածողին»:

Ռուսաստանը հանգստութեամբ ընդունեց. իսկ հայերը... ինչպիսի՞նք զգացմունքներ արթնացան նրանց մէջ զէպի «քրիստոնէական հաւատի հին հալածողը», Տաճկա-Հայաստանն արեամբ ոռոգողը, հայի աղջկերք ու հարսներ առեանգող բռնաբարողը, դարերի ընթացքում չքնաղ Հայաստանին իր գարշելի շօշափուկներով սեղմող-

խեղդողը... Այդ գգացմունքների մասին խօսելն աւելորդ է, որովհետեւ բոլորն արդէն գիտէին ու հաւատում էին, որ դումբերի առաջին որոնողը Ռուս-Տաճկական սահմաններում հայի բախտի որոշումն է աւետում:

Մենք գիտէինք նոյնպէս, որ Տաճկաստանն այս պատերազմի ընթացքում, իր անզօր կատաղութեան թոյնը պիտի թափէ քառութեան մշտական նոխազ հայերի գլխին. բայց աշխատում էինք ակոփել մեզ նրանով, որ գոնէ սա վերջինը կըլինի, կըփշրուեն տաճկական շղթաներն ու հայը լիաթոք կըշնչէ:

Այո, այդ մենք գիտէինք. Չինգիզխաների աւանդապանները ձեռք չպիտի քաշէին բազմաշարժար Հայաստանի մարմինը յօշոտելուց. և այժմ, մինչդեռ մի կողմից հայի որդիներն էր հաղարներով ու տասնեակ հաղարներով հաւաքում իր զօրքերի շարքերը լրացնելու, միւս կողմից էլ արիւնկղակ քրդերին ու կանոնաւոր զօրքերին օրհնելով՝ ճանապարհ դրաւ տաճկական սուրբ ուխտը կառարելու, անպաշտպան մնացած հայերին բնաջնջելու, գիւղերն աւերելու:

Սակայն կենդանի է պատմական քաջարի ու նորագոյն նահատակ մարտիկների ողին տաճկահայ ժողովրդի մէջ. նա ստրկական խոնարհութիւնը վաղուց էր դէն շարժել, և հեշտութեամբ դուրսը չէր դնի բարբարոսների ետթաղանի տակ:

Եւ վանն էր, դարձեալ վանը, որ հսկայամարմին Գողիաթի դէմ ծառացաւ իր փոքրիկ, բայց սողողատէ բռունցքով: Եւ այդ բռունցքն էր, որ իջաւ ուժեղ թափով՝ բռնակալի շղթաներին:

Փառք վանին...



Ն Ի Կ Օ Լ

(Յիշողութիւններ)

I

Տասնեութ տարի առաջ, 1896 թ. մայիսի 25-ին նստած Ուրմիայից քիչ հեռու գտնուող ամերիկացիների կօլլէջի մի սենեակում, վանեցի Մանտեսի-Յովհաննէսի սիրալիր հիւրասիրութիւնն էի վայելում:

Սակայն արամադրութիւնս վատ էր, և վախենում էի, որ ծով պահողի դէմքովս բարի հիւրընկալիս սիրտը կընեղացնեմ: Վատ էր, որովհետեւ Ասորեստանում կատարելիք մի խոշոր գործը, որ ինձ և Ագայում լինող մի ընկերոջս էր յանձնուած, զանազան պատճառներով առաջ չէր գնում. ոչ միայն առաջ չէր գնում, այլ՝ նոյնիսկ մի ամսուայ ընթացքում չէինք էլ կարողացել մտնել Ասորեստան:

Տխուր էի, և մտքումս դատապարտում էի թէ՛ ինձ, որ ընդունել էի, և թէ՛ ընկերներիս, որ այնպիսի մի վերին աստիճանի պատասխանատու, հայկական դատի համար ահագին նշանակութիւն ունեցող գործ ինձ ու մի ուրիշին էին յանձնել, և այն էլ այն պայմանով, որ զուլս բերէինք քիչ ամիսների ընթացքում:

Իրիկնադէմին ինձ մօտ մտաւ Ուրմիում ապրող, մեր գործը յարգողներից մէկը, հեռուից ինձ համար եկած երկու ծրարները մեկնեց ու զլուխը շարժեց խորհրդաւոր կերպով:

— Ի՞նչ կայ. — հետաքրքրութեամբ դարձայ նրան:

— Ի՞նչ պէտք է լինի... Նիկօլը ձերբակալուած է. — պատասխանեց նա ու հառաչեց անկեղծ հառաչանքով:

Մահտեսին տեղն ու տեղը չօքեց, յարձակուելու պատրաստուողի նման վիզը տնկած՝ աչքերը չռեց ու կանչեց.

— Ի՞նչ ես գուրս տալիս... ասածիդ գորութիւնը հասկանում ես:

Վանեցին չէր ուզում հաւատալ, չէր էլ ուզում լսել, որ իրանց պաշտած, վանեցիների սիրած **Դումանը կարող է ձերբակալուած լինել**. նա խորապէս վրդովուած էր, որ լրաբերը յանդգնեց մի այդպիսի խօսք թռցնել բերնից:

— Քեօհնա-Շհարում է ձերբակալուել. — աւելացրեց նամակաբերն ու լռեց, վանեցու ազնիւ բարկութիւնը յարգելով:

Կոտրուած սրտով, յուզուած՝ բաց արի նամակները. — մեր ստանձնած միասիան շտապեցնող տողերի հետ՝ այնտեղ հաստատուած էր և այն, որին չէր ուզում հաւատալ վանեցին. — Նիկօլը ձերբակալուած էր իր զինուորներով...

1895—96 թուականներին մի տենդային գործունեութիւն կար Տաճկահայ դատին նուիրուածներէ շարքերում, վճռուած էր այդ տարին ասպարէզ հանել բոլոր ուժերը, և այդ կռուի գրօշակն այս անգամ պարզել միաժամանակ Վասպուրականի բոլոր անկիւններում, և ապրտամբութեանն աջակից պէտք է լինէին Մար-Շիմօնն ու ասորիներէ մեղիքներն իրանց լեռնականներով: Իսկ այդպիսի մի հսկայական ծրագիր գլուխ բերելու համար փող և զէնք էր հարկաւոր:

Զէնք... բայց ինչպէս: Մի հատ փամփուշտը յայտնի տեղից մինչև երկու սահման անցկացնելն ու Տաճկա-Հոյաստան մտցնելը 40 կուպէկ էր նստում... Իսկ ատրճանակները, հրացանները, միւս անհրաժեշտ մթերքները... Սուկայն ի՞նչ հոգ. մարգիկ գործում էին խելագարութեան հասնող հոգեկան թռիչքներով. ոգևորութիւնը վարակել էր լաւագոյն հայ երիտասարդներին, և ծանր բեռը, թէև գանդաղ, այնուամենայնիւ՝ առաջ էր շարժւում:

Եւ այդ բեռնակիրներէ մէջ իր նշանաւոր տեղն էր գրաւում Նիկօլը, որ իր մարտական կորովի ժամանակաւորապէս մի կողմ դրած՝ այս անգամ գուրս էր եկել գործելու, իբրև ռազմամթերք փոխադրող զինակիր խմբի մի առաջնորդ:

Իմ յիշատակարանից գուրս եմ գրում այն

տղերը, որ Նիկօլի ձերբակալման զէպքին է վերաբերում:

Դումանը 54 հոգուց բաղկացած զինակիր խմբով Վանից գուրս գալով՝ մօտենում է տաճկա-պարսկական սահմանին: Խմբից միայն 10 հոգի էին զինուած, իսկ 44 հոգի անզէն էին, որ Սալմաստից զէնքերի բեռ վերցնելով՝ պէտք է մտցնէին երկիր: Խումբն ապահովութեամբ անցնում է սահմանն ու կանգ առնում մեր երազանքների մշտական վիայ, մեր սիրած-պաշտած Դերիկի զէմուղէմ, մի քիչ հանգստանալու: Այդտեղ նրանց նկատում են սահմանի քրդերն ու հաւար կանչում մօտակայ աշիրաթներին: Նիկօլն իսկոյն և եթ կարգադրում է որոշ տեղերում դիրքեր բռնել. իսկ Դերիկն առատ է ապահով և թշնամու համար սպառնալից դիրքերով, որ և գրաւում են զէնք ունեցողները: Քրդերն ահագին բազմութեամբ գալիս, նոյնպէս դիրքեր են գրաւում և սկսում զանազան կողմերից գնդակներ տեղալ: Բոլորովին ցանկութիւն չունենալով սահմանգլխի պատահական կռուով քաղաքական աղմուկ բարձրացնելու, Նիկօլը պատուիրում է իւրայիւններին ոչ մի զնգակ չարձակել, մինչև ինքը նշան չտայ, իսկ քրդերը խմբի լուծիւնից սիրտ առած՝ աւելի են ուժեղացնում հրացանաձգութիւնն ու կամաց-կամաց մօտենում: Այն ժամանակ Նիկօլը խմբի վալաղի

բերնով յայտնում է քրդերին, որ իրանք խա-
զազ մարդիկ են, քրդերի հետ բարեկամ լինելու
ձգտում ունին և ոչ թշնամութեան, և նրանք
զուր են կռուի հաւաքուել: Մակայն այդ յայ-
տարարութիւնը քրդերը վախենալու նշան են
համարում և խլացնող աղաղակներով նոր դիր-
քեր գրաւում ու գնդակների տարափ տեղում:

Տեսնելով, որ կռուելուց խոյս տալու այլևս
հնար չկայ, Նիկօլը նշան է տալիս՝ պատասխա-
նել քրդերին: Տասն հրացանների առաջին ճոճը-
ռոցներից քրդերը ծածկւում են դիրքերում, մի
քիչ սպասում, ապա զանազան ուղղութեամբ
բռնոն յարձակմամբ ընկնում հայդուկների վրայ,
բայց միայն տասն հրացանը նրանց զարձեւ
յետ է մղում:

Միջի տարածութիւնը 300 քայլ է ֆուտ:
Քրդերը վերեւ կողմը պաշտպանող չորս հայ-
դուկների դիրքն աւելի թոյլ ու մատչելի համա-
րելով՝ մեծ թափով գրոհ են տալիս այն տեղի
վրայ, բայց մի գոհ տալով՝ յետ են նահանջում:
Չորս հայդուկներից երեքը ոգևորուելով՝ դուրս
են թռչում դիրքից, նետում քրդերի մէջ, նրան-
ցից մի քանիսին գլորում, բայց իրանք ևս էլ
յետ դառնալ չկարողանալով՝ ընկնում են այն-
տեղ, որոնցից երկուսը՝ Շատախցի Յակօբն ու
աննման Շէրօն:

Այդ դիրքում ֆաթաժ միակ հայդուկը, Մի-

քօն, ընկերների վախճանը տեսնելով՝ դուրս է
վազում դիրքից և Նիկօլին յայտնում պատահա-
ծը. իսկ քրդերն արագութեամբ գրաւում են ան-
պաշտպան ֆաթաժ ու միւս դիրքերին հրամայող
դիրքն ու կռուողներին նեղ գրութեան մէջ
գնում: Այն ժամանակ Նիկօլը հրամայում է
մտնել Դերիկայ վանքը, որի միայն չորս պա-
տերն էին ամբողջ ֆաթաժ, իսկ առաստաղը
քանդուած էր տաճկաց հիւպատոսի եռանդուն
դիմումներով, որ առարկել էր, թէ հայերն այն-
տեղ բերդ են շինում՝ տաճիկ կառավարութեան
դէմ կռուելու համար և անկամ պարսիկ կառա-
վարութիւնը հրամայել էր քանդել պարսիսպն ու
վանքը...

Քրդերն անմիջապէս դուրս են գալիս իրենց
բռնած տեղերից, վանքը շրջապատում ու փորձում
բարձրանալ տանիքը, այնտեղից գնդակակոծելու
վեց կռուողներին: Բայց առաջին իսկ երկուսին,
որ գլխին ցոյց են տալիս պատից, գնդակահա-
րում է Նիկօլը, նրանց յաջորդում են ուրիշ եր-
կուսը, որ զարձեւալ գլորւում են հայդուկների
գնդակներից ու քրդերը թողնում են փորձերը,
սպասելով, որ դռնից երեւի դուրս կը վազեն և
նրանց տեղն ու տեղը սրախողխող կանեն:

Մուլին ընկնում է. հարկաւոր էր օգուտ
քաղել մթութիւնից ու հեռանալ. սակայն վանքի
դուռը քրդերը բռնել էին շատ յաջող կերպով և

առաջին դուրս թուշոյն առաջին գոհը կը լինէր: Դրութիւնն աւելի ծանր է դառնում, երբ թշնամին սկսում է տանիքից ներս շարժուել վառած ցախերի անթիւ խուրձեր և վանքը լքցնել հեղձուկ ծուխի քուլաներով:

Էլ երկար սպասելու տեղը չէր. Նիկօյն իսկոյն որոշում է անելիքը. կանչում է, որ բոլորը պատրաստ լինեն և հետեւեն իրեն, երբ դուռը կապահովէ քրդերից: Ապա հանելով ատրճառակը, արագ ոստիւններով դուրս է թուշում, ատրճառակի աջ-ձախ հարուածներով շփոթեցնում թըշնամուն, յետոյ հրացանը գործի դնելով՝ շէմքն ազատում, այդ միջոցին էլ դուրս են վազում վանքից մնացած բոլորն ու անյայտանում մթութեան մէջ:

Վանքից դուրս գալուց յետոյ, Նիկօյը 43 հոգով իջնում է ներքե, իսկ ութ հոգի խմբից սխալուելով՝ ուրիշ ճանապարհով գալիս, հասնում են այն տեղ, որտեղ պէտք է գնային:

Ուրիշ վիճակ էր սպասում Նիկօյին՝ իր ընկերներով: Նրանք գիշերը գալիս, հասնում են Սալմաստի Քեօհնա-Շհար գիւղաքաղաքին: Հայդուկներից մէկը գնում, բաղխում է մի դուռ. դուրս է գալիս մի պարսիկ. տեղ են խնդրում մնալու, մանաւանդ որ Սալմաստի պարսիկները մեծ յարգանքով էին վերաբերում հայ «Փիղալիներին», և քիչ չէր պատահել, որ գնահատելի

ծառայութիւններ էին ցոյց տուել: Պարսիկն ուրախութեամբ տեղ է տալիս, բայց հէնց որ յոգնած, ջարդուած տղերքը քուն են մտնում, անպիտան տանտէրն իսկոյն իմաց է տալիս Դիլիման, պարսիկ կառավարութեանը, թէ իր տանն այսքան-այսքան հայ դաշախներ կան:

Լուսաբացին պարսիկ զօրքը շրջապատում է տունը: Նիկօյը տեսնում է, որ մատնուած է, բայց ամենախիստ կերպով պատուիրում է ոչ մի զիմադրութիւն ցոյց չտալ, հետեւելով այն մի անգամ ընդմիշտ ընդունուած կէտին, որ այս ինչ, այն ինչ նկատումներով երբէք Սալմաստում պարսիկ կառավարութեան հետ վտանգաւոր պատմութիւն չստեղծել:

Այդտեղ բոլորին ձերբակալելով՝ տանում, Դիլիմանի բանտն են լցնում:

Թէև Նիկօյը բանտում երկար չի մնում և Սալմաստում գտնուող մեր ընկերները նրան շատ շուտով ազատում են, այն էլ իր հրացանով, փամփշտակաւները կապած, բայց և այնպէս այդ ինձ յայտնի լինել չէր կարող, որովհետև նամակը զրուած օրը նա դեռ բանտումն էր եղել, և ազատուելու մասին ոչինչ գրել չէին կարող:

Նամակը ձեռքիս, գլուխս քաշ գցած, ես ինձ վատ, շատ վատ զգացի. այն մաքուր, անաղարտ սէրը, որ այն ժամանակուայ բոլոր ըն-

կերները տաժում էին դէպի միմեանց, այն անկաշառ, իգէալական զգացմունքները, որ այն ժամանակուայ գործողներն ունէին իրենց սրբաւում դէպի իրենց զաղափարակիցները, չէին կարող չստիպել, որ բոլորը չվշտանային մէկն ու մէկին մի գթբախտութիւն, մի անյաջողութիւն պատահելուց. իսկ այս անգամ Նիկօլն էր. մէկը, որի անունը դեռ հեռուից հեռու հմայում էր մարդկանց, որի կատարած գործերով հպարտանում էինք, որին տեսնողը ինքնաբաւականութեամբ կարողանում էր ասել. — ես Նիկօլին տեսել եմ:

Իսկ ես Նիկօլին տեսել էի 1884—86 թուերին, և այն յոյսն էի փայփայում, որ 10—12 տարի անցնելուց յետոյ նրան նորից կը պատահեմ այլ պայմաններում, այլ ասպարիզում:

Եւ ես տեսայ նրան:

II

Նոյն թուի յունիսի 18-ին, սնգսնգան ձիուս կողերը տանջելով, կաքաւաշատ Փիրչաուշը յետեւ թողած՝ դէպի Մալմաստ էի շտապում: Գեղեցիկ Ղալասարի սպիտակ պատերն արդէն երեւում էին և ես բարկանում էի ձիուս վրայ, որ յոգնած՝ շատ դանդաղ էր առաջ շարժւում, մինչդեռ ցանկանում էի մի ժամ, երկու ժամ շուտ տեղ հասնել:

Անհամբերութիւնս հասկանալի էր. Նիկօլի բանտից ազատուելն արդէն լսել էի, նա այժմ ազատ էր ու Ղալասար էր գտնւում. շտապում էի օր-առաջ հանդիպել նրան, թէև սիրտս կրրծում էր այն գաղտնի երկիւղը, թէ Նիկօլը կարող է նեղանալ իմ ստանձնած միասիայի անյաջող ելքով:

Լաւ չեմ յիշում, բայց կարծեմ 1885 թէ 86 թուին՝ Շուշի ինչ-որ խորհրդաւոր գործ էր սկսուել. աղօտ կերպով մտքումս ինչ-որ անկերպարան, մութ յիշողութիւններ են մնացել. յիշում եմ, որ մէկի մօտ էին հաւաքւում զանազան ծանօթ ու անծանօթ մարդիկ, և, թէև ցած ձայնով, բայց վիճում յուզուած, բարձր տրամադրութեամբ, երբեմն էլ՝ բարկացած. նրանց խօսակցութիւնից ու վէճերից իմացայ, որ կայ մի տետրակ, որին «Ոսկէ Մատեան» (կարծեմ) անունն են տալիս, որ այդ Մատեանն են մտցնւում «անձնուէրների» անուններ, որ աւանուն Մատեան մտաւ, նա էլ յետ կանգնել չի կարող, և նա պէտք է դնայ Տաճկաշայաստան՝ զոհուելու համար: — Չէին ասում կռուելու, այլ՝ զոհուելու:

Չգիտեմ, նրանց բոլորի՞ անունները մտել էին Մատեանի մէջ, բայց գիտեմ, որ իմ ճանաչածներից երկուսը դեռ կենդանի են, Բար-

սեղը կախուեց Պօլսում, Մարտիրոս սպանուեց Սալլա-Սանայում, իսկ Նիկօլը...

Այդպէս՝ դեռ վաղուց նրան ճանաչելիս, և այժմ, երբ նա իր ընտրած պանծալի ճանապարհին հերոսի անուն էր վաստակել և ամեն պատահող «Դուժման» էր կանչում պարծանքով, բնական էր, որ ուժեղ լինէր նրան նորից տեսնելու ցանկութիւնս:

Մտայ Ղալասար: Նիկօլն այդտեղ չէր...

Հետեւեալ օրն իրիկնագէմին ես ու բժիշկը նստել էինք բակում, ծառի տակ և թէյ էինք խմում. բժիշկն ինձ վստահեցրել էր, որ Նիկօլը «հիմա որտեղ որ է, երես կանի», և ես շղայնացած՝ անհամբերութեամբ սպասում էի:

Իսկապէս՝ մի քանի րոպէ յետոյ Փայաշուկից մեզ մօտ մտաւ մի բարձրահասակ, միջակ կազմուածքով, մազ ու միրուքով, երկարավիզ կօշիկները հագին տղամարդ:

Նիկօլն էր դա...

Դարերով հառաչող՝ «վախկոտ», «թուլասիրտ» հայն ըմբոստացել էր, և անս այդ ըմբոստացման ոգին, բողոքի շունչը մարմնաւորուած՝ կանգնել էր իմ առաջ Նիկօլի կերպարանքով. այդ ըռպէին ես Նիկօլին չէի տեսնում, այլ՝ Թաթուլ-Կարճին, Գայլ-Վահանին, Թէոդորոս Ռշտունուն, — հայի քաջութիւնը՝ դարերի

մոխիրների տակից յարութիւն առած ի դէմս Նիկօլի:

Եթէ մի «Բուլգար աւագակապետ», մի «Դանչօ» ժամանակին կարողացել էր մի ամբողջ սերունդ ոգևորել, ապա հասկանալի պէտք է լինի զգացմունքների այն յորդութիւնը, որ ինձ էր համակել, իմ առաջ «Դանչօներից» գլխավորն բարձր Նիկօլին տեսնելով:

III

Այնուհետև բաւականին մնացինք միասին, և ես վկայ եղայ, որ Նիկօլը միանգամայն արժանի է այն հեղինակաւորութեանը, որ ունի:

Նրա ռազմական ընդունակութիւններն արդէն յայտնի էին. բայց Սալմաստի ժամանակաւոր և համեմատաբար խաղաղ գործունէութիւնը ցոյց տուին, որ նա խոր վարչական հրմտութիւն ևս ունի:

Դրսից նորանոր զինուորներ գալիս էին ու գալիս. տաճկահայ գատը մի զարմանալի ուժով հայութեան բոլոր պուճախներից անձնուէր երիտասարդներ էր քաշում, բերում դէպի Թաւրիզ, Սալմաստ. և նրանք հաւաքւում էին՝ մի կողմից ուրախութիւն, միւս կողմից հոգսեր բերելով իրենց հետ. ուրախութիւն, որ խտանում էին կռուողների շարքերը, հոգս, որ այդ բազմու-

թիւնը տեղաւորելու, կերակրելու անհրաժեշտութիւն կար, իսկ միջոցները պակասում էին: Այդ օրերին էր, որ Դիլիմանի բանտում գլխունող, Նիկօլի հետ եկած ու բռնուած զինուորներն էլ ազատուեցին, ճանաչուելով իբրեւ զաղթականներ, որ տաճիկ բարբարոս կռուվարութիւնից փախած՝ «եկել էին պարսից Շահի խնամատարութեանն ու ողորմածութեանն ապաստանելու»: Դրանց հետ միասին՝ զինուորների թիւը փոքրիկ Սալմաստում անցաւ հարիւրներից. ինչպէս անել, որտեղ տեղաւորել, ինչպէս կերակրել... գլուխներս կորցրել էինք. բոլորի յոյսը Նիկօլն էր:

Իսկ Նիկօլը մի սովորութիւն ունէր. նա երբեմն սպասում էր, որ մի որեւէ գործ գլուխ բերելու համար ընկերները չարչարուին, և երբ բան չէր գուրս գալիս, իսկոյն թափով տարածում էր ձեռներն ու վերանում էին գժուարութիւնները:

Այս անգամ էլ այդպէս եղաւ. մինչդեռ ամենքը խոհուն, մտածկոտ դէմքերով գլուխ էին կոտրում բաւական ժամանակ, թէ ինչ եղանակով կարգաւորեն զինուորների գործը և միջոց չէր գտնուում, հասաւ Նիկօլը, բոլոր զինուորներին տառնեակներ թափանելով՝ ցրուեց զիւղերում, հրամայելով, որ իւրաքանչիւր զինուոր պարտաւոր է զիւղական աշխատանքներ կատարել

րել այն տան համար, որտեղ ապրում է և այդ տան հացն ուտում, ամեն մի զիւղում երկու վերահսկողներ նշանակեց, որ նրանք չթողնեն զինուորներին անկարգութիւններ անել, միեւնոյն ժամանակ հրահանգելով, որ, քանի որ շուտով կամ արշաւանք կրկնի կամ կանցնեն Վասպուրական, ապա վերահսկողները պարտաւոր են իրենց յանձնուած զինուորների բոլոր զինուորական մանր պէտքերը հոգալ, — արեւիներ, ջրաման, տոպրակ, իւղաման, և այլն:

Նիկօլին սիրող ու պաշտող Սալմաստի զամանալի ժողովուրդը, նրա կարգադրութեան համաձայն, զինուորներին սիրով ընդունեց, առանց դժգոհութեան մի նշանի: Եւ Նիկօլի անունն էր, որ Ղալասար, Փայաջուկ, Հաֆթվան, Մահլամ, Սառնա և Սաւրա տեղաւորուած զինուորութեանը զսպած պահում էր կարգապահութեան սահմաններում, բացի մէկից, որ մի կնոջ ինչ որ տգեղ ակնարկութիւն էր արել, և որին Նիկօլը 48 ժամում գուրս քշեց Պարսկաստանի սահմաններից, գոհութիւն և հիացմունք պատճառելով ընկերներին ու սալմաստեցիներին:

Նա որքան կարող էր ներքին գործերը վարելու մէջ, նոյնքան էլ վարպետ էր արտաքին յարաբերութիւնները յարդարելու, վարկ պահպանելու մէջ: Քաղաքագէտ էր և շրջապատի հոգեբանութիւնն արագօրէն ըմբռնող: — Յուլիսի

սկզբներում գէպի սահմանագլուխ մի քանի վաշտ պարսիկ զօրքեր եկան, որ ուղարկուած էին իբրեւ թէ սահմանը պաշտպանելու քրդերի յարձակումներից: Այդ անվարտիկ զինուորներից մարդ չէր կարողանում աչք բաց անել. վաշ էր, եթէ մի գիւղից մի այլ գիւղ անցնող հայ դրանց պատահէր. իսկոյն կըթալանուէր: Հայ զինուորներն իրենց երկար զսպելուց յետոյ, մի օր տեսնում են, որ մի քանի պարսիկ զինուորներ մտել են Ղալասարցի մէկի այգին և իրենց քէֆին առնոյտ են հնձում. հայերից երեք հոգի համնում են, նրանց շատ ծեծում, որոնցից մէկի ձեռքը վիրաւորւում է՝ իր իսկ մերկացրած սրից:

Մինչև այդ գէպը կըքննուէր, պարսիկ զինուորներն աւելի են լրբանում ու սկսում հետամտել մանաւանդ տաճկաստանցիներին: Դրա համար բժիշկը մի քանի անգամ խիստ դիմումներ արաւ Դիլիմանի հաքիմին, ու թէև նա խոստումներ շոտյեց, բայց անկարգութիւնները վերջ չառան, և էլ աւելի թափ ստացան:

Նիկօլը լաւ ճանաչելով պարսիկներին, վեր է կենում և ուղղակի գնում Սալմաստի սարֆարաստ Հիւսէյին խանի մօտ. Հիւսէյին խանը մեծ պատուով ընդունում է նրան և ուրախութիւն յայտնում, որ «բախտ ունեցաւ Դումանին անձամբ տեսնելու»: Սակայն Նիկօլը պարսկական շոյանքներից չըլա-

ցողը չէր և Հիւսէյին խանի գովասանքներին պատասխանում է յանդիմանանքով:

— Այսպէս էք խնամում այն մարդկանց, — գոչում է Նիկօլը, — որոնց ինքը՝ Շահն է իր ողորմած խնամատարութեան տակն առել:

Ապա սպառնում է, որ եթէ այսուհետև «իր մարդկանց» կաշոյ լինի, այնուհետև ինքը պատասխանատու չէ հետևանքների մասին:

— Երևի, սարդար (զօրապետ), չեն իմացել, որ քո մարդիկն են. — վախուորած պատասխանում է սարֆարաստը, խօսք տալով խիստ հակողութիւն նշանակել:

Եւ իսկապէս՝ այնուհետև պարսիկ զինուորներ այլևս շատ դժուարութեամբ սկսեցին երեւալ հայ գիւղերում, իսկ Ղալասար, որտեղ Նիկօլն էր ապրում, բոլորովին չերևացին:

Դրանցով չէր վերջանում Նիկօլի գործունէութիւնը. նա մեծ ուշադրութեամբ գանազան խնդիրներ ընկերների հետ միասին հարթելուց յետոյ՝ ամբողջապէս կլանւում էր զինուորական գործերով:

Վանում տեղի ունեցած յունիսեան եօթնօրեայ ճակատամարտներից յետոյ Պետօն, Մարտիկն ու Աւետիսեանը դուրս էին եկել Վանից՝ հիւպատոսների հաւաստիացումներին հաւատալով, և նոյն ամսուայ 10—12-ին բացարձակ անհաւասար կռուի բռնուելով քիւրդերի ու

ծպտուած զօրքերի հետ, իրենց բազմատանջ գլխին զնում Սալլա-խանայում ու Չոլ-Չիմանում: Ահա այդ հերոս նահատակների արեան վրէժ լուծելն էր համակել Սալմաստում բոլոր զանուկներին, իսկ Նիկոլն առանձնապէս, մենակ մնացած ժամանակները միայն այդ վրիժառութեան ցանկալի բոպէսներն էր փայփայում իր սրտում և արշաւանքի հակառակորդներին անգամ վարպետութեամբ թեքելով, քայլ առ քայլ խանասօրը պատրաստում:

Որպիսի հրճուանքով էր նա գիշերներն ընդառաջում հեռու տեղերից փոխադրուող զէնքերի բեռներին. ինչպիսի հաճութեամբ էր զրգւում իւրաքանչիւր օր ստացուած հրացանի փողը:

Այդ պատրաստութիւնները տեսնելու օրերին հարկաւոր էր մի նայել Նիկոլին. նա աւելի էր մեծացել, աւելի վեհացել, դէպի իրան սէր ու պատկառանք ներշնչելով բոլորին, թէ ընկերներին, թէ զինուորներին և թէ ժողովրդին: Եւ որքան ուրախ էր նա. ինչպէս ախորժալուր էր հնչում նրա առողջ ծիծաղը:

Գուցէ նա վիշտ ունէր սրտում. բայց ոչնչով երբէք այդ չէր արտայայտել, միայն մի անգամ այդ օրերը նկատեցի, որ նա վայրկենապէս մռայլուեց, տխրեց: Այդ այն օրն էր, երբ Վասպուրականը յունիսեան օրերում Համիդի

ճանկերում տնքալով՝ այժմ մի քիչ ուշաբերուել էր, և Վարդանի ու Վազգէնի նամակներն էին հասել մեզ, որտեղ երկրի գրութիւնը նկարագրելուց յետոյ, հետեւալ երկտողը ևս կար. «Մեր զէնքերն այդտեղ (Սալմաստում) թափուած, զինուորները յօրանջելիս, իսկ այստեղ ժողովուրդը հազարներով է մորթւում...»

Մռայլուեց երևի նրա համար, որ այդ նամակները գալիս էին արշաւանքի ծրագիրը ճեղքելու, որի համար ինքը գիշեր ու ցերեկ աշխատում էր, և դեռ մի խմբակ էլ, 12 հոգուց բաղկացած, զրեթէ ըմբոստացած՝ պահանջ էր դրել թողնել առ այժմ արշաւանքի միտքն ու անցնել երկիր, ինչ գնով էլ լինի:

IV

Երկար մաքառումից յետոյ, Վան անցնել ցանկացողները վերջապէս հասան իրենց նպատակին. արշաւանքի թունդ կողմնակիցները կակղեցին մի քիչ. Նիկոլն էլ զիջեց և 12 հոգուց բաղկացած մի խումբ՝ ուրախ սրտով, գուարթ դէմքերով՝ յուլիսի 31-ի իրիկունը մութն ընկնելուց՝ մէջքներնին կապեցին հացի ու ռազմամթերքի տոպրակները, գօտկուց կախեցին ջրաման-իւղամանին և հրացաննին բռնած՝ շարքով

կանգնեցին Փայաջուկ գիւղի մի տան բակում, սպասելով Նիկօլի վերջին հրաժեշտին:

Մեզ ճանապարհելու համար Ղալասարից եկել էին մեր սիրելիները, — Կարօն, Մարօն, բժիշկը, — իսկ Նիկօլը դեռ կէսօրուանից մեզ հետ էր և մենք սպանում էինք, որ անա կը գնանք ու նրա դավինները կը խենք Տաճկա-Հայաստանում, — և նա ծիծաղում էր իր այն քլքլան ծիծաղով:

Վերջին րոպէին նա կանգնեց մեր առաջ, նայեց մեզ մի անմեկնելի փաղաքշող հայեացքով, ապա դեկավարող խօսքեր ուղղելով՝ խորհուրդներ տուաւ, և երբ ձայնը մատնեց նրա հոգեկան զրութիւնը, որ այնքան վարպետօրէն միշտ ծածկել գիտէր, մօտեցաւ մեզ, ու, չհամբուրուեց, այլ համբուրեց բոլորիս մէկ-մէկ, և մենք ճանապարհ ընկանք՝ տանելով մեզ հետ Նիկօլի համբոյրը, Նիկօլի ոգին. — ոգին, որ կարծես համբոյրի հետ առատօրէն մտցրեց մեր սիրտը...

Երանելի ժամանակներ, երանելի շրջան, որ մաքրութիւնը, ընկերսիրութիւնն առաջին պայմանն էր համարում, անձնագոհութիւնը՝ կեանքի գերագոյն նպատակ: Ահա ինչու մեր հոգին լցուեց քաղցրութեամբ, երբ ընկերսիրութեան և անձնագոհութեան տիպար Նիկօլը իր համբոյրը մեզ ուղեկից տուաւ:

Սէյդափարում մեզ տեսելու եկան Աբաղայի զաշտից ու Վանից պարսկական սահմաններն ապաւինած տաճկահայեր. նրանք չէին ծածկում մեզնով ոգևորութիւն, անվերջ խօսում էին, պատմում, գովում Վազգէնին, գովում Աւետիսեանին, իսկ Նիկօլը՝ առանցքն էր բոլորի խօսակցութեան. — մեռնեմ Դումանին. — Դումանին զուրբան. — խօսքի տակին, գլխին կրկնում էին նրանք. իսկ մէկն այնքան ոգևորուեց, որ առանց խնդրելու, ինքն իրան սկսեց մի քրդերէն երգ կլկլացնել, որ հերոսասէր քրդերն էին յօրինել՝ Նիկօլի հետ Սարայ-Բօղազ-Քեասանում ունեցած կռուից յետոյ: Ես խնդրեցի թարգմանել. երգիչը մի առանձին սիրով, հազար ու մի գովեստներ թափելով «ազգասէր Դումանի» հասցէին, ձախ ծունկը դրաւ տակին, աջը ցցեց, ձեռքն ականջին դիմար տուեց, մի անգամ էլ երգեց, յետոյ սկսեց թարգմանել:

Ֆրայիներն անցան Կոտորի կիրճով,

Շամսկանցիները հետքը վերցրին.

Նրանց յետեից մինչև Սարայ եկան,

Եւ Սարայում նրանց հասան:

Սարան առնաւ է շրով, աղբիւրով.

Տարաբախտ մնաց Սարայը դրանցով.

Աւերակ Սարայը լցուեց արիւնով,

Բօղազ-Քեասանում կռին սկսուեց...

Կտրուեց Ջնդօյի ու Շաւէշի ցեղը.

Դուժմանի և իր ֆիդայիների տունը

Աստուած քարուքանդ անէ,— և այլն...

Այսպէս մի երկար երգ, որտեղ Ջնդու, Շաւէշի սպանուիլն էր երգւում, և Նիկօլի զէնքերն ու կռուի ձևը նկարագրւում:

Անցանք Վասպուրական. Պատիկ-Գիրգի ուէյսի տանը նստած՝ խօսում ենք. այդտեղ ևս Նիկօլի անունն է հնչում: Հասանք Վան. առաջին հանդիպողը՝ Նիկօլ, վերջին հանդիպողը՝ Նիկօլ է հարցնում:

Արարուց թաղում հիւսն Ղազարենց տանը, տանտէրը փողոցին նայող երկու հրդեհուած սենեակներն է ցոյց տալիս, և զաղտնի հպարտութեամբ աւելացնում. — Նիկօլը մի ամբողջ ամիս այնտեղ է մնացել:

Մինչև անգամ Վազգէնը, Վասպուրականի նշանաւոր յեղափոխականների այդ աննման գոհարը, նա էլ մի առանձին հիացմունքով էր խօսում Նիկօլի մասին, և այդ ոչ թէ ընկերական զգացմունքներից դրդուած, այլ Նիկօլի ռազմական ու վարչական ընդունակութիւնների նկատմամբ ունեցած համոզմունքից:

Այդպէս՝ Նիկօլը դեռ 1896 թուին արդէն մի հեղինակաւոր անձնաւորութիւն, մի պատկառելի մեծութիւն էր, և մենք տեսնում, զգում էինք, որ Նիկօլը մեզ նման չէ իր մի քանի շեշտուող յատկութիւններով, որ Նիկօլն իր ընտ-

րած ճանապարհին՝ իրան արժանի մի սերունդ է կրթում, հայ դատին նուիրուած մի շարք նշանաւոր գործիչների հետ ձեռք-ձեռքի տուած:

Այնուհետև մենք շատ ու շատ անգամներ պատահեցինք զանազան պայմաններում ու տարիներում. և այժմ Նիկօլին պատահելու առաջին օրերի յիշողութիւնները տալով՝ անյարմար կը լինէր, եթէ ասէի, որ արդէն Նիկօլի պատկերը ներկայացրի: Այն օրերից տասնեութ երկար ու ձիգ տարիներ են անցել. այդ տարիներն այնքան են մրրկայոյզ եղել, գործունէութեան աշխատի բեղմնաւորութիւն է ցոյց տուել Նիկօլը և աշխատի բարձրութեան հասել, որ թռուցիկ յիշողութիւններում այդ բոլորը պարփակել՝ շատ դժուար է:

Նիկօլները, Սիմոնները, — առհասարակ հայի ազատագրման համար մարտնչող հերոսները, ինչ կուսակցութեան էլ պատկանելիս լինին, — արժանի են առանձին գրքերի, և նրանք գրչի են սպասում:

Միայն Նիկօլին փոքր ինչ բնոյթագծելու համար պէտք է աւելացնեմ, որ նա չունէր Սիմոնի համբերողութիւնը՝ զրկանքների օրերում, կորովը՝ տեսական խնդիրներում, և ոչ էլ Քրիստափորի թռիչքները՝ գրեթէ զարհուրեցնող ծրագրերում: Սակայն Նիկօլը մի զարմանալի

յատկութիւն ունէր. նա չպէտք է ասէր՝—այսպէս պէտք է լինի.—երբ ասաց, պրծաւ, պէտք է կատարէր, որքան էլ վտանգաւոր, որքան էլ յանդուգն լինէր ձեռնարկը:

Ռազմական, վարչական տաղանդով, և կռիւների ժամանակ անձնական անվեհերութեամբ նախանձելի լինելով՝ Նիկօլն ուժեղ չէր տեսական խնդիրներում. նա ծանրակշիռ հարցերը լուսաբանում էր ինքնաբերուլի փիլիսոփայութեամբ, և թէև մէկ-մէկ սիրով լսում էր «տեսականներին» (ինչպէս ինքն էր ասում), բայց աչքով աչք չունէր տեսնելու նրանց, որ հրի ու սրի օրերին, Պիղատոսի նման ձեռներնին լուացած մի կողմ էին կանգնում, բայց հանգիստ օրեր բացուելուց՝ բերաննին լայն բաց արած՝ ասպարէզ նետում, «քննելու», «պարզաբանելու», զանազան խնդիրներ երկար ու բարակ ծեծելու համար:

Ատում էր խօսքի ասպետներին, կենդանի գործի այդ յուզարկաւորներին, և կորցնում իրան յատուկ սառնասրտութիւնը, երբ Պիղատոսները դատում և անպատճառ դատաւարտում էին այն գործը, որ ինքն էր սիրել հոգով ու սրտով, որ իր ընկերների արիւնով էր սրբագործուած:

Վերջին տարիներս մի ժողովում հաւաքուել էին զանազան հոսանքների աւանաւոր

ներկայացուցիչներ, մի քանի հարցեր քննութեան առնելու, աւելի շուտ՝ միմեանց մեղադրելու: Սօսուեց երկար ու շատ. իսկ երբ խօսքը հասաւ հողային հարցին, և երբ տաճկահայ դատը իւրատեսակ «պաշտպանողներն» իրենց տեսակէտն սկսեցին պարզել, Նիկօլը մի սուր շարժում գործեց, բարձրացաւ տեղից ու հեռացաւ:

Հետեւեալ օրը նրան հարցրի.

— Ինչո՞ւ դուրս եկար, վէճը հետաքրքիր էր:

Նիկօլը բարկացածի պէս նայեց ինձ, ապա լայն շարժումներով, մատը օդի մէջ ծանր-ծանր թափ տալով՝ ասաց.

— Քուրդ ու տաճիկը հողային հարցը հրացանով են լուծում. և քանի որ զեղեցիկ բռնութիւնն են զնդակների առաջ, ապա ես միայն հրացան կը քարոզեմ, համոզուած լինելով, որ ներկայ պայմաններում միայն դրանով կը լուծուի հողային հարցը Տաճկա-Հայաստանում: Մնացածը՝ շատախօսութիւն է և փախուստ՝ գործից:



ԿԱՐՕՆ ՈՒ ՄԱՐՕՆ

(Յիշողութիւններ)

I

Սարօն ժպտաց:

— Ընդհակառակն, — ասաց նա, — դժուարութիւնը շատ անգամ զուարճութիւն է պատճառում: Այ, Կարօն ասում է, որ իր ձերբակալութիւն իր կեանքի լաւ ընդհանրաց մէկն էր: Յուզմունքը, լարուածութիւնը, յաջող փախուստը նրան վերաստեղծել, կարծես նոր մարդ էր դարձել:

— Բայց միթէ Կարօն բռնուած է եղել. մենք այդ մասին բան չենք լսել, — ասացինք մենք:

— Չէիք էլ կարող լսած լինել, որովհետեւ նրա բռնուած ժամանակը դուք ճանապարհին էք եղել:

— Իսկ երբ է բռնուել, հրտեղ և ինչպէս է փախել. — այսպիսի եղանակով վրայ տուինք մենք, որ Սարօն ուրախ-ուրախ ծիծաղեց:

— Պատմեմ. — սկսեց նա... — Այսպէս, այն օրուանից Կարօյին մի քանի անգամ ցանկանում

են թակարդ գցել ու ձերբակալել, բայց չի աշողում: Գործը հեշտացնելու համար, նրա լուսանկարներն են տարածում Պարսկաստանի գրեթէ բոլոր քաղաքներում, միևնոյն ժամանակ խստիւ պատուիրելով, որ աշխատեն բռնել, ու իբրեւ ուսանալատակի յանձնել ուսուցիչութեանը, որ նա դատէ: Մենք այդ գիտէինք. գիտէր և Կարօն, բայց ուշք չէր դարձնում ամենեւին. իր գործն էր շարունակում: Մօտերըս Թաւրիզ պէտք եղաւ, որ մէկն անպայման անցնի սահմանը կարճ ժամանակով ու կարեւոր գործերով: Այդ յանձնարարութիւնը կատարելու համար մարդիկ գործով այս ու այն կողմ էին անցած, միւսներն էլ դեռ անփորձ էին: Կարօն, չնայած իր զբաղուած լինելուն ու վտանգուած դրութեանը, չանսալով ընկերների առարկութիւններին՝ վեր է կենում, հրացանն ուսը զցում, ձին հեծնում, մի խուրձին լի թղթերով ու նամակներով պնդացնում գաւակին ու ճանապարհ ընկնում Զուլֆա:

Հասնում է Զուլֆա, իջնում մաքսատան մօտ և սպասում, թէ երբ է գալու քարշահաւը, որ միւս ափ անցնէ, կամ իմաց անէ միւս ափում գտնուող մեր մի ընկերին, որ պատրաստ լինի: Եւ երբ նա իր համար հանգիստ ման էր գալիս Արաքսի ափին, ինչ որ պատրուակով կանչում են մաքսատուն, և հէնց այդտեղ էլ

յայտնում, որ նա ճանաչուած է ու ձերբակալուած: Ապա գցում են մի «սենեակ», հրացանը, խուրջինը պնդացնում և դուռը դրսից կողպելով՝ Կարօյին թողնում, որ իր դրութեան մասին այնտեղ մի լաւ մտածէ:

Կարօն զգում է, որ գործը լաւ տեղ չմթնեց. բայց չի շփոթւում, իրեն չի կորցնում. այլ իսկոյն կենտրոնանում է այն մտքի վրայ, թէ՛ պէտք է փախչել: Գիշերուայ ժամը 10-ին խարխափելով գտնում է ցերեկը նկատած մի կտոր երկաթ, հմուտ փականագործ լինելով՝ յաջողութեամբ բաց անում պահարանի դուռը, հրացանն ու խուրջինը հանում, ապա բարձրանում ցածրիկ լուսամուտը՝ դրսից մի հոտ առնելու: Տեսնում է, որ պահապանը դեռ արթուն է և քայլում է լուսամուտի տակով: Բայց Կարօն շատ լաւ գիտէր, որ պարսիկ պահապանը հազիւ թէ երկար արթուն մնայ, ուստի և սկսում է հանգիստ սրտով սպասել: Իսկապէս ժամը 11 և կէսին պահապանի ոտնաձայնը դադարում է: Մի քիչ էլ ուշադրութեամբ ականջ դնելուց յետոյ համոզւում է, որ հսկողն անշուշտ քաղցր երազներ է տեսնում, մի ուժգին թափով աքացիով թռցնում է լուսամուտի բարակ տախտակեայ փեղկերն ու ցատկում դուրս, խուրջինն ուսին, հրացանը ձեռքին: Պահապանը յանկարծակիի եկած՝ սարսափահար մի կողմ է թռչում, և երբ

Կարօն քսան-երեսուն քայլ հեռացած է լինում, նոր միայն սկսում է հարայ տալ: Կարօի բախտից՝ զիշերը շատ մութն է լինում. վազում է բաւականաչափ տեղ և աւելի հեռանալն անյարմար համարելով՝ մի ապահով տեղ դիրք բռնում թէ՛ հանգստանալու և թէ՛ չորս կողմը դիտելու: Հետապնդողները հետները շներ վերցրած՝ գալիս են, մի քիչ «հայ-հօյ» անում ու յետ դառնում, իսկ Կարօն դուրս է գալիս՝ դիրքից ու հեռանում:

— Ո՛ւր, ո՛ւր է հեռանում. — անհամբերութեամբ հարցրինք մենք:

— Իր բունը... Նոխարվալ:

Մաքօն վերջացրեց. մենք համբուրուեցինք ու բաժանուեցինք իրարուց, Մաքօն դէպի հիւսիս, մենք՝ դէպի հարաւ:

II

Մարօն կարճահասակ էր ու մի ոտից խիստ կաղում էր. շատ տարիներ առաջ, ծառից ընկնելուց՝ ոտը մնացել էր ճիւղի արանքում, Մարօյին ցմահ կաղ մնալու դատապարտելով:

Դէմքը գրաւիչ էր. բայց գեղեցիկ աչքերը ժպտալու, ծիծաղելու ժամանակ անգամ մի տեսակ տխրութիւն էին արտայայտում. երևի ֆիզիքական պակասութեան վիշտն էր դա:

Զարմանալի յատակ հոգի ունէր և ամբողջ էութեամբ նուիրուած էր գործին: Դպրոցում դասերը վերջացնելուց յետոյ կը գար տուն, կուզէր տետրակներն ու անմիջապէս ձեռքը կառնէր Հայաստանի մեծ դրօշակը ձեռագործելու, քթի տակ մեղմ ձայնով «Լէ-լէ, աման» երգի եղանակը երգելով: Յոգնելուց՝ մի կողմ էր դնում դրօշակն ու սկսում հայդուկների համար մէջքի տոպրակները կարել: Նրան պարապ չէր կարելի գտնել. միշտ զբաղուած էր և նրա ձեռքով արուած կարկատաններն առանձին գին ունէին:

Մարօն սիրում էր Կարօյին. Կարօն նոյնպէս սիրում էր Մարօյին. և երկուսից՝ մէկը միւսից լաւ: Բայց նրանք հպարտանալու տեղիք չունէին, որովհետեւ մնացած ընկերները պակաս չէին սիրում այդ ջուխտին:

Այդ էր պատճառը, որ մարտի 14-ին, Չառիկ իրիկունը քէֆներս տեղը չէր, որովհետեւ Մարօն չկար. իսկ Մարօն չկար, որովհետեւ Կարօն էլ չկար: Շարունակ ուշադրութիւնն իս դուրսը, ցանկանում էինք մի կերպ արամազրութիւնն իս բարձրացնել, որ գուռը բացուեց ու շէմքում երևացին Կարօն ու Մարօն՝ թեւա-ցուկ:

Սենեակը լայնացաւ. ուրախութիւնն առատ հոսանքով ներս խուժեց լուսամուտներից:

Կարօյին գրկից-գրկի քաշելով՝ համբոյրներով ողջունեցին:

Մարօն շնորհակալութեամբ լի հայեացքով նայում էր բոլորին, որ Կարօյին այդքան սիրում են:

— Տօ, դէ մի պատմիր, տեսնենք էդ ի՞նչ օյին է եկել գլուխդ է,— կանչեց Թորոսը՝ Կարօյին իր կողմը քաշելով:

Կարօն պատմեց Զուլֆայում ձերբակալուելն ու Նախավկայ փախչելը:

— Իսկ Նախավկայից:

— Այնտեղից էլ եկայ, էլի... պարսիկ քարվանշու շորեր հագայ, գլուխս ածիլեցի ուղղափառ մահմեդականի բոլոր կարգ ու կանոնով, միրուքս հինա դրի ու մի էշ առաջս արած՝ խառնուեցի կարաւանի հետ, եկայ, ձեզ հասայ, որ Զատիկը մենակ չանէք:

Մեր ծիծաղն ու ուրախութիւնը թնդաց. իսկ Մարօյի աչքերն այս անգամ դաւաճանում էին նրան, որովհետեւ շատ էին փայլում:

Բնական էր, որ Կարօյի ազատուիլը բոլորին պէտք է գոհութիւն պատճառէր: Նա անձանձիր աշխատող էր, հմուտ զինագործ, զէնքերի համար սահմանի այն կողմից հում նիւթեր մատակարարող, վտանգն արհամարհող և, առանց չափազանցութեան ասենք՝ անշեղ հրացանաձիգ:

Թուխ դէմք ունէր, սե, փայլուն աչքեր և ուժեղ, դուրս ընկած մկանունքներ:

Աշխատում էր օրն ի բուն և դժգոհում, որ գործը դանդաղ է առաջ գնում: Շտապող էր, անշնորհակալ իրենից և ընկերներին, որովհետև զէնքերը գեռ հագարներով չէին հաշուում, փամփուշտները՝ հարիւր-հազարներով: Ու կարծում էր, որ եթէ բոլորն անքուն աշխատեն, ռազմամթերքները կը թափուին պահեստ:

III

Կարօն այլևս արհեստանոցում աշխատել չէր կարող, որովհետև նրան աւելի ևս խստօրէն էին որոնում: Այդ յայտնի դարձաւ մանաւանդ այն ժամանակ, երբ մեր բարեկամ պարսիկներից մէկը յայտնեց, որ Կարօյի այստեղ լինելը յայտնի է կառավարութեանն ու հետամուտ է լինում: Այդ պատճառով Թորոսը յարմարեցրեց մի ուրիշ աեղ, որ Կարօն այնտեղ աշխատէ, արհեստանոցում տանելիք գործի ծանրութիւնը վերցնելով իր և ընկեր-օգնականների վզին:

Կարօյի որտեղ լինելու գաղափարը միայն Թորոսը գիտէր և մի-երկուսը մերոնցից, որոնք ի պաշտօնէ՝ յարաբերութեան մէջ պէտք է լինէին Կարօյի հետ: Միւս ընկերները չպէտք է հետաքրքրուէին և կարիք էլ չկար. բաւական էր, որ Կարօն ազատ էր և աշխատում էր:

Այդ միջոցներում ես ու մի ուրիշը մի քանի օրից յետոյ պէտք է ճանապարհուէինք դէպի մի որոշուած տեղ: Ժամանակը կարճ էր, հարկաւոր էր տեսնուել ընկերների հետ. զնացի դէպի Մարօն:

— Եթէ տղայ լինէի, կընախանձէի քեզ. — ժպտալով ասաց Մարօն՝ ներս մտնելս տեսնելով:

— Հետաքրքիր է. ինչո՞ւ. — հարցրի նրան:

— Որովհետև նախանձելի գործ ես ստանձնել:

— Բայց ես տղայ եմ ու նախանձում եմ քեզ: Այ, եթէ իմ ստանձնած գործիս հետ քո հոգին ես ունենայի... այն ժամանակ՝ ուրիշ բան:

Մարօն սկսեց ինձ ծաղրել, որ ես քաղաքում ապրած լինելով՝ կօմպլիմէնտներ ասելն եմ սովորել: Ապա իր այլբօմը տուաւ, որ մի բան գրեմ այնտեղ:

Այդ միջոցին յատակի տակ ինչ որ զըրթ-զըրթոցներ լսեցի:

— Էս ի՞նչ զըրթ-զըրթոց է. — ականջներս լարած՝ հարցրի Մարօյին:

Մարօն ժպտաց և երեք անգամ ոտքով զարկեց յատակին: Զըրթ-զըրթոցն անմիջապէս դադարեց ու մի բոպէ չանցած՝ չեմ իմանում որտեղից՝ երեսց Կարօն, երեսը մրոտ, մի հրացանի կիսայղկած «զատվօր» ձեռքին:

— Վահ.— արի ես.— ուրեմն դու այստեղ ես բան անում. գետնափոր տեղ կայներքեւում:

— Խլուրդ եմ դառել, խլո՛ւրդ.— ծիծաղեց Կարօն.— էնքան էլ վատ չէ. ճիշտ է, տեղը խոր է, բայց յարմար է:

— Դէ լուացուիր, լուացուիր. — կանչեց Մարօն.— այսօր շռայլութիւն պէտք է անենք:

Այսինքն՝ սուրճ պէտք է խմենք. շաբաթը մի անգամ այդպիսի շռայլութիւն Մարօն իրան թոյլ էր տալիս այս կամ այն դէպքի պատճառով:

Եւ մինչդեռ նա կաղէ-կաղ բաժակներն էր մօտ բերում, ես գրեցի այլբօմում.

— Գուցէ իմ ծանր գործի ժամանակ Կը գտնեմ հանգիստ սառ հողի գրկում:

Ուստի, օրիորդ, իբրեւ յիշատակ՝

Մի երկու տող եմ թողնում քո գրքում»:

Գրեցի մի երկու տուն էլ և երբ Կարօն իր տեղը բռնեց և ես տետրակը մի կողմ էի ուզում դնել, Մարօն առաւ ձեռքիցս, կարդաց ու կանչեց նեղացած.

— Տօ, սա ինչե՛ր ես գրել. էս ի՞նչ ողբեր են.— ու տետրակը մեկնեց Կարօյին.— տես ի՞նչ է գրել, Կարօ. եթէ իմանայի, թէ էսպէս բաներ ես գրելու, տետրակս չէի տալ:

— Բա ուզում էիր որ ի՞նչ գրի. սո՛ւրճդ

գովէ.— բարկացրեց Կարօն, ու դարձաւ ինձ.— է՛, ախպէր-ջան, ե՛րբ ես գնում:

— Տեսնենք. աշխատում ենք շուտ գնալ, եթէ կարողանաս զէնքերը շուտ հասցնել:

— Կըհասցնեմ, կըհասցնեմ.— շտապելով ասաց նա ու վռազ-վռազ բաժակը վերցրաւ.— կըհասցնեմ, մանաւանդ որ՝ երեւի ես էլ պէտք է գնամ:

Մարօն իբրեւ թէ սառնասրտութեամբ լսեց Կարօյի վերջին խօսքերը, բայց խկոյն կարեւի էր նկատել, որ նրա դէմքը թէեւ ժպտում է, բայց աչքերը վարագուրուած են մի ուրիշ քօղով:

— Իսկ դո՛ւ ուր ես ուզում գնալ.— հարցրի ես:

— Սալմաստ. այնտեղ էլ կայ կատարելու շատ գործ:

— Դու միշտ այդպէս ես,— տրտնջաց Մարօն.— մի տեղ դադար առնելու համբերութիւն չունիս. դրա համար էլ մի անգամ խստիւ կը պատժուես:

— Մի բաժակ սուրճ ես տուել, քթո՛վս պիտի հանես.— հանաք արաւ Կարօն ու նորից իջաւ իր նկուղը:

Իսկ ես մի քիչ էլ նստեցի ու դուրս ելայ՝ որոշ պատրաստութիւններ տեսնելու:

IV

Շուտով սարերը կը բացուէին ձիւնից. հարկաւոր էր միջոցներ ձեռք առնել՝ ծրագրուած մեծ ապստամբութեան ելքն ապահովելու. իսկ զրա համար՝ անշուշտ հարկաւոր էր ռազմամթերքի առատութիւն և աշխատող ձեռք՝ հրացանները կարգի բերելու:

Թորոսը, Լեոնը, Սամսոնը, Պետրոսը գիշերօթեակ անխոնջ, անդադար աշխատում էին. ճաշին մինչև անգամ հանգիստ չէին առնում. միմի բաժակ թէյ խմում էին հաց ու պանրով, և նորից չախմախն ու խարտոցը ձեռներնին առնում: Կարօն էլ յատակի տակ իր գործն էր տեսնում:

Անհրաժեշտ էր, որ Թաւրիզ գտնուող զէնքերը կենտրոնացնուին Տաճկաստանի սահմանին մօտիկ մի յարմար վայրում: Իսկ այդպիսի յարմար տեղը Սալմաստն էր, ուր գործունէութեան զլիաւոր երակն էր խփում և որտեղ գտնուում էր մայր-պահեստը, Բժշկի հսկողութեան տակ:

Երբ զէնքերը տեղափոխելու խնդիրը բարձրացաւ ժողովում, Կարօն կանգնեց, թէ՛ Թորոսը տեղից շարժուել չի կարող. եթէ նա այս տենդային օրերում թողնէ արհեստանոցը, նրան

փոխարինող-կառավարիչ չի լինելու. նոյնիսկ արհեստանոցը կարող է վտանգուել. Թորոսը կապեր ունի, բարձրագոյն հովանաւորութիւն է շահել, որ մեծապէս նպաստում է գործին: Իսկ ինքը գեանի տակ շատ բան կատարել չի կարող. այդ պատճառով առաջարկում է, որ թէ՛ զէնքերի փոխադրութիւնը և թէ՛ Սալմաստում նրանց պակաս-պռատը լրացնելու գործը յանձնուի իրան:

Կարճ վէճից յետով ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ, իսկապէս, ուրիշ ելք չկայ, Կարօն պէտք է գնայ, որին շուտով պէտք կը լինի ուղարկել և՛ մի օգնական:

Այդ որոշումը լինելուց յետոյ՝ Կարօն ու Թորոսն էլ գիշերօթեակ չստացին. — Թորոսը ցերեկը, Կարօն՝ գիշերը, յղկում էին, տաշում, խարտոցում, փամփուշտները դասաւորում, հրացանների մասերն առանձին-առանձին իւզում, կապում, ամրացնում արկղներում, արկղները փաթաթում խտրով, և նրանք շունչ չառան, մինչև որ բոլոր հակերը կապուած, պատրաստ՝ մի կողմ դրին: Կէսօրուայ դէմ ես ու Կարօն պատրաստուում էինք Մարօյի մի փոքրիկ շաշուութեանը մասնակցելու, — սուրճ խմելու, — որ ներս մտաւ մեր մշտական չարվաղարն ու յայտնեց, որ մութն ընկնելուց՝ կարավանը ճանապարհուելու

է, Կարօն թող պատրաստ լինի. — ասաց ու գնաց: Իսկ ես գաղտնի կերպով ուշադրութիւնս դարձրի դէպի Մարօն: — Երբ չարվադարը պատրաստ լինելու անունը տուաւ, Մարօն ընդհատեց հաղիւ լսող երգը, որ սկսել էր, և սկսեց ուրիշ բանով զբաղուել. մի զբաղմունք, որ աննպատակութիւնն էր ցոյց տալիս: Ապա նրա խօսեմ աչքերը երբեմն լի մտահոգութեամբ դառնում էին Կարօյին, որի առնական դէմքին փայլում էին այդ բոպէին եռանդն ու փութկոտութիւնը:

Զգիտեմ, Մարօն շատ էր մտածում իր ֆիզիքական պակասութեան մասին. սակայն ինչ նշանակութիւն կարող էր ունենալ մարմնի պակասութիւնը այն գեղեցիկ հոգու, այն խելօք գլխի, այն վսեմ զգացմունքներով լի սրտի առաջ, և ես մտածեցի, որ լաւ կը լինէր, եթէ նա էլ գնար Կարօյի հետ. թողնէր դպրոցն ու գնար. լաւ կը լինէր. նա Կարօյին չէր խանգարի:

Ամեն կողմից խիստ հետապնդելիս, Կարօն գիշերը դուրս եկաւ կարավանի հետ, ծպտուած, իսկ ես առաւօտեան շտապեցի Մարօյենց մօտ: Օրիորդ Կ.Ն. թէյի բաժակն առաջը դրած՝ իր շրջագգեստի քանդուած կարերն էր պնդացնում, իսկ Մարօն՝ թերատ դրօշակն էր շարունակում ձեռագործել:

Ո՛չ մի փոփոխութիւն չգտայ նրանում, որքան էլ զննողի աչքով նայեցի. նոյն յստակ աչ-

քերը մեղամաղձութեան թափանցիկ քօղով, նոյն քիչ գունաթափ, համակրելի դէմքը:

— Տեսնես Կարօն սրտեղ կը լինի այժմ. մի բան չպատահէ... քիչ այս ու այն կողմից խօսելուց յետոյ, ասացի ես:

Մարօն ոչինչ չպատասխանեց, թւում էր, որ այդ բոպէին նա չէր էլ ուզում Կարօյի մասին խօսող լինի, թերեւս նրա համար, որ մենակ ինքը խօսէ իր մտքում:

Բայց երբ խօսքը հասաւ արձակուրդներին, Մարօն համաձայնեց, որ պարապութիւնից սիրտը կը ճաքէ, եթէ մի լուրջ գործով չզբաղուի, ուստի և արձակուրդի երեք ամիսներն անպատճառ անց կը կացնի Սալմաստում:

Երկու օր յետոյ ես էլ ճանապարհուեցի դէպի իմ և ընկերոջս գնալիք տեղը, ու նրանց մէկ էլ պատահեցի Սալմաստում, երկու ամիս անց:

V

Ուրիշ անկողին չկար. Բժիշկը դէպի լուսամուտը, ես դէպի պատը պառկեցինք, վերմակը գցեցինք մեզ վրայ ու մէջք-մէջքի տալով՝ սկսեցինք խօսել. բայց մեր զրոյցը երկար չտևեց, որովհետեւ ես շուտով քուն մտայ:

Գիշերուայ ժամը երկուսին քնիս մէջ դանազան ձայներ լսեցի ու թմրութիւնից սթափուելով՝ դրսումն ինչ-որ շատուորների ներկայութիւնն զգացի:

Գլուխս բարձրացրի և տեսայ, որ Բժիշկը կանգնած է լուսամուտի առաջ, «շատուորների» հասցէին ածականներ է թռցնում, ուրախանում, ծիծաղում:

— Էս ի՞նչ հարսանիք է.— մտածեցի ինքսինձ, ու կամաց-կամաց սկսեցի հագնուել:

Հէնց այդ միջոցին մէկը ներս թռաւ լուսամուտով, դուռն էլ թափով բացուեց ու դրսից կատարելապէս ներս խուժեցին Սաթենիկը, Երւանդը, Կարօն, Մարօն ու մի հինգերորդը, որ նոր անձնաւորութիւն էր և ես չէի ճանաչում:

Ծիծաղ, քրքիշ, հարայ-հրոց... կարծես անմահութեան կաթիլները գտած լինէին:

Այդ ժամանակ ես էլ հագնուած՝ կանգնեցի տեղս. ճրագ չկար, բայց նորեկները տեսան, որ մի նոր անձնաւորութիւն ևս կերպարանաւորուեց մթութեան մէջ:

— Բժիշկ, ո՞վ է մեր հետը,— հարցրեց Սաթենիկը:

Բժիշկը պատասխանեց:

Իմ գալուս երկու օր էր, և նրանք ինձ երբէք այդտեղ չէին սպասում:

— Վա՛... դժ, այստե՛ղ...— զարմացած բա-

ցականչեցին այս ու այն կողմերից, — տօ, դու էստեղ ի՞նչ ես շինում. իսկ մենք կարծում էինք, որ դու արդէն...

Համառօտ կերպով պատմեցին վերջին երկու ամսուայ անցուդարձը, ապա դուրս եկանք բակը, տեսնելու՝ թէ Թաւրիզից մերոնք ինչ էին բերել:

Կարօն Սալմաստ գալուց յետոյ նորից անցել էր Թաւրիզ և այս անգամ ընկերների հետ վերադառնելով՝ իրենց հետ բերել էին վեց բեռ հրացաններ, փամփուշտներ և զինուորների համար էլ մի բեռ տոպրակներ, որ օրիորդներն էին կարել:

Բաւականաչափ զէնքերի ներկայութիւնն ու յաջող փոխադրութիւնը մեր ուրախ տրամադրութիւնն էլ բարձրացրեց, իսկ Բժիշկը քիչ էր մնում ընկերներին համբուրելուց յետոյ՝ հրացանների կապոցներն էլ համբուրէ, տոպրակների հակերն էլ, այնքան էր ուրախացել:

Մի քանի զինուորների օգնութեամբ ամեն բան իր տեղը դասաւորելուց յետոյ, դարձանք դէպի տուն: Մինչև բակից կանցնէինք, Մարօն դարձաւ ինձ.

— Իսկ դու գիտե՞ս Կարօն ճանապարհին ինչ արաւ:

— Հետաքրքիր է. ի՞նչ արաւ.— հարցրի ես:

— Երեք հարիւր քայլի վրայ երկու անգամ

հրացան արձակեց մի փայտէ նշանի, և գնդակը նստացրեց գնդակի վրայ: Ահա.— ասաց նա և հանեց արձիճէ մի գունդ, ուր երկու գնդակները, իսկապէս՝ հիւսուել էին միմեանց:

Որ Կարօն կարող էր նրանց վրայից երրորդ գնդակն էլ հազցնել զեռ էլ հեռու տարածութիւնից, ես դրան հաւատում էի. բայց որ Մարօն Կարօյի անաւանօյն է միայն ապրում, այժմ դրա մէջ էլ որեւէ կասկած չունէի:

Մտանք տուն. լուսանալուն քիչ էր մնում. բայց մարդիկ պէտք է հանգստանային. և ամեն մէկը մի բան գցելով վրէժ՝ պառկեցին այս ու այն անկիւնում և խաղաղ, հանգիստ քուն մտան:

VI

Քանի գնում, մարդկանց թիւը շատանում էր. ամեն կողմից գալիս էին ու գալիս. գալիս էին տուն-տեղ, ծնողներ թողած՝ Հայաստանի ազատագրութեան գործում իրենց բաժինն ևս ունենալու: Ել Ղալասար մնալ, տեղաւորուել չէինք կարող, հարկաւոր էր բաժան-բաժան լինել:

Ես, Սէրէմճեանը, Գուրգէնն ու Լևոնը գնացինք Փայաջուկ, որտեղ էր և Յարօն. շուտով «մեր» գիւղը եկան և Յովսէփն իր եղբօր հետ, Թեանը, որ Թէհրանից կարծես նրա համար էր

եկել, որ մեզ միշտ ուրախ պահէ, ու անվերջ ծիծաղեցնէ, մէկ-մէկ էլ Սաքօն էր մտնում մեզ մօտ, երբ գործից ազատ էր լինում:

Երբ Փայաջուկ հաստատուեցինք, մի քանի ժամանակից յետոյ նոր-նոր հանգամանքներ ստեղծուեցին, որոնց շնորհիւ Փայաջուկի և Ղալասարի մէջ մի թունդ պայքար առաջացաւ. Փայաջուկը պահանջում էր առանց վայրկեան անգամ կորցնելու, խմբերն իրար յետևից անց կացնել Վասպուրական, Ղալասարը պնդում էր, որ այդ անկարելի է, պէտք է բոլորն սպասեն արշաւանքին: Առաջնի պաշտպանօրն էինք ես, Սէրէմճեանը, Լևոնը, Յարօն ու Կարօն, երկրորդինը՝ Նիկօլը, Երուանդը, Յովսէփը, և... Թաւրիզը: Եթէ նոյնիսկ Թաւրիզն էլ չլինէր, հէնց մենակ Նիկօլի անհամաձայնութիւնը հերիք էր, որ մենք պարտուէինք, բայց մաքառելը ձեռքից չէինք տալիս, աշխատելով հակառակորդներին թէ համոզել փաստերով և թէ տեղն ընկած ժամանակը՝ զիմել խորամանկ միջոցների: Այդպէս՝ երբ Յովսէփը կարգում էր անգլիերենից թարգմանած «Կղզիների լօրդը», ես բերանբաց գովում էի, որ այդպիսի յաջող թարգմանութիւն հազիւ թէ ուրիշը կարողանար անել, և «գմայլ-ւում էի նրա անթերի, ճշիւ» հայերէնով. իսկ նրա հայերէնը, ճիշտ որ օրինակելի էր: Այդ գովքն անելուց յետոյ, Վասպուրական անցնելու

հարցն էի մէջ տեղ բերում, յուսալով, որ Յովսէփը գովքիս փոխարէնը կը վճարէ, բայց բան չէր դուրս գալիս: Յարօն Նիկօլի եախէն էր բռնում, Պետրոսը մի ուրիշի. թեքուող չէր լինում. Բժիշկը կողմնակից էր թէ մէկին և թէ միւսին. երկուսն էլ համազօր էր գտնում: Այդ խնդրում օրիորդներն էլ իրենց դերն ունէին. Մարօն ցանկանում էր, որ մեր առաջարկութիւնն անցնի, ցանկանում էր, բայց նրա պաշտպանութիւնը մեղմ էր իր բնաւորութեան պէս: Իսկ Սաթենիկն արշաւանքից բացի՝ ուրիշ բան լսել չէր ուզում, և բռնն կերպով յարձակուում էր բոլոր նրանց վրայ, որ արշաւանքի գործն էին ուզում «խանդարել»: Սաթենիկն ունէր որոշ հեղինակաւորութիւն: Դերիկի պատմութեան մէջ նա էլ իր բաժինն ունէր, տեմպերամենտով օրիորդ էր, և իր յարձակումները դէպի մեր ծրագիրը՝ տանում էր տղամարդօրէն: Սակայն վերջապէս մեր յամառութիւնն ու մի նպաստաւոր հանգամանք յաղթող հանդիսացաւ, և պատրաստուեցինք ճանապարհուելու դէպի վան:

Բայց բարձրացաւ մի նոր խոչընդոտ. զինուորները կանգնեցին, թէ՛ մենք Սալմաստում գեղեցիկ օրեր անցկացնելու համար չենք խրամբուել, մենք էլ ենք գնում: Նիկօլը իր հեղինակաւորութեամբ կարողացաւ նրանց հանգստաց-

նել. բայց ո՞վ կարող էր հանգստացնել Կարօյին, որ ծագելիք զաւմաղախն ի նկատի ունենալով՝ ծածուկ կերպով իր բոլոր զէնքերն ու իրեղէնները պատրաստել էր, որ խումբը դուրս գայ թէ չէ՝ ինքն էլ հասնէ Սանամէրիկ, և այնտեղ միանայ հետները: Ո՛չ մի խօսք, ո՛չ մի ծանրակշիռ առարկութիւն լսել չէր ուզում:

— Եղբայր, չեմ ուզում մնալ, չեմ ուզում, չեմ ուզում.— գոռում էր Կարօն.— հօ չեմ կարող ամբողջ կեանքս խաբսոցի վրայ անցկացնել.— և բարկութիւնից՝ շարտում էր բոլորը, ինչ որ ձեռքն էր ընկնում:

— Կարօ, ախր մի մտածիր է, — մեղմութեամբ նկատում էին Բժիշկն ու Նիկօլը.— էս դու գնացիր, շատ լաւ, իսկ այստեղ... ի՞նչ պէտք է անենք. ո՞վ պէտք է զէնքերը պատրաստէ:

— Այդ իմ բանս չէ. դուք գիտէք. պէտք է ես գնամ.— աւելի գրգռուած՝ գոչում էր Կարօն:

Զինուորների խիստ յուզուած զրութիւնը, անցնել ցանկացողների բազմութիւնն ու ծագելիք թիւրիմացութիւնների հնարաւորութիւնն ի նկատի առնելով՝ իսկոյն մի ժողով գումարուեց, որտեղ և որոշուեց.— Արշաւանքի վճիռը մնում է անփոփոխ վճիռ. այնուամենայնիւ՝ անցկացնել երկիր մի քանի խմբեր, մէկը միւսից երեք օր յետոյ. երրորդ խումբը կը գնայ Կարօյի ա-

ռաջնորդութեամբ, առաջին խմբի դուրս գալուց վեց օր անց:

Այդ որոշումը մի քիչ կակղեցրեց Կարօյին:

— Ջանդամը ձեր գլուխը.— ասաց նա.— այս անգամ էլ թող ձեր ասածը լինի:

Հետեւեալ օրը մենք ճանապարհ ընկանք, և այնուհետեւ ես Կարօյին մի անգամ միայն տեսայ, իսկ Մարօյին՝ երբեք:

VII

Մարօյի սրտում ինչ-որ գաղտնի կռիւ էր տեղի ունենում անշուշտ. մի կռիւ, որի մասին ոչ ոքի երբեք ոչ մի բան չէր ասել: Նա տեսնում էր, որ տաճկահայի ազատագրման մեծ գործին նուիրուածները թողել են իրենց սիրելիներին, թողել են ծննդեանիք, թողել են ամեն ինչ և աննահանջ գնում են իրենց ճանապարհով. տեսնում էր, և իր զգայուն հոգու մէջ գլուխ էր բարձրացնում մի ծանր, ամպոտ զգացմունք, թէ ինքն արգելք է հանդիսանում Կարօյի թռիչքներին, որ, եթէ ինքը չլինէր, Կարօյի գործունէութիւնն աւելի բեղմնաւոր կը լինէր, և ինքն է պատճառը, որ Կարօն մինչև այժմ չի անցել Տաճկա-Հայաստան:

Երկար ժամանակ այդ զառը մտքերը տան-

ջում են նրան, ու վերջապէս վճռում է՝ «ազատել» Կարօյին:

Մի տոմսակ է գրում. «Նաւերն այրում եմ. էլ վերադարձ չկայ. քեզ ազատում եմ կապանքներից: Գնա, Կարօ, քո սուրբ ճանապարհով»:

Գրում է, ու ատրճանակը դնում սրտին...

Թաղելու ժամանակ Կարօն մօտենում է դագաղին.

— Երգւում եմ. կըգնամ՝ բայց էլ չեմ վերադառնայ:

Եւ գնաց Կարօն*) ու չվերադարձաւ:

Ընկաւ նա Խանասորի արշաւանքում. բայց թէ ճրտեղ, ի՞նչ պայմաններում—ընկերներից ոչ ոք չիմացաւ:



*) Արիստակէս Զօրեան

140-րդ հրետան ապուհած է՝ Անգլ գիւղում.
Պէտք է լինի՝ մի ուրիշ Անգլ գիւղում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0412127

6029